220
559-РЦ

2

220
561-РЦ

12004

Ձ81[ՈՁՁՕՏԵ]
Կ. 363-ԱՀ
-172-
F-13
2256

# ՀԱՄԱՌՕՏ
# ՅԱՅՏՅԱՆԴԻՄԱՆՈՒ՟

ԵՐԿՈՒՑ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆՑ·

ԸՆԴԴԷՄ ԵՐԿՈՒՑ ՄՈԼԱՐ ԴՐՈՒԹԵԱՆՑ·

Առաջինն Վ. Հ. Միքայէլի Չամչեան՝ թէ
Օձնեցին իցէ իմաստասէր Հայրապետն
Հայոց՝ վկայեալն ՚ի մէջ Հարց մերոց։

Երկրորդն Վ. Հ. Մկրտչի Աւգերեան՝ թէ տետրակն
Օձնեցւոյն իցէ ուղղափառ վարդապետութեն և գրութեն
վերագրեալ իմաստասիրի։

Արարեալ Գերապայծառ Գերապատուէ՛ Տ՟ Տ՟ Ադամայ
Վէրդ Բաբէլլեանց Արքեպիսկոպոսի սէյ Լիւքիոնի, և
Ընդհանրական Աբբայի Մխիթարեան Միաբանութեան
Վիեննայու։

ՀԱՅ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI - 1922
Книга, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի ՎԻԵՆՆԱ
1817. ռմկզ.
Ի տպարանի Հարց Մխիթարեանց։

281.6 (092 Օծա Եyh)

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Օրէնս էն համօրէն ողջամիտ և ուղղափառ վարդապետաց՝ ամփոփել, և անաղարտ պահել զնոյն ճշմարտութիւն, մանաւանդ զոր վերաբերին առ վարդապետութիւն հաւատոյ, բարի վարուց, և հասարակաց օգտի, յորոց անել կամակար մտօք զմեզ նախադրին, և զյառաջադրեալսն, որք ՚ի հակառակորդաց ասիցեն գոլ ՚ի վեր. զնոյն երթեալ ընդդիմակ շարունակ վարդապետին ճշմարտութեան, որ մահապարտ վճռեաց ճշմարտութիւն։

Այդ և Արդ այսմ կանոնի զհետ երթեալ, և ՚ի սէրս ճշմարտութեան, և ուղղափառութեան շարժեալ, կամիմ տեսանել զպատմութիւն ՚ի պատմութեան Հայոց՝ արարեալ ՚ի Մ. Հ. Միքայէլէն Չամչեան, և տպագրեալ ՚ի Վենետիկ յամին 1784. եթէ զՅովհան Օձնեցին զկաթողիկոսն Հայոց՝ զփիլիսոփայն հերետիկոսաց, և զընտանի ձեռնարկն այլոց Հայոց յաղագս հաւատոյ հաւաքելոյ ոչ եկեղեցւոյ՝ գոյն ընդունել զնէ, և զիմաստասէր կաթողիկոսն Հայոց Յովհաննէս, զվիճայեալսն ՚ի սէր Հայոց Մեծաց ՚ի Պերգամոնի, ՚ի Սեբաստիոյ Արաբիոյ, և ՚ի Սեբաստիոյ Լամբրոնացւոյ, և յայլոց, անհետ և անարժան պատճառաւ ՚ի գայթագղութիւն գրեթէ համօրէն ազգին, կարծեաց համարեցաւ համառօտիւ ՚ի նորին ես զրոց ըստ ներքնոյ ծանօթին գրել, և ցուցանել զնոյն անդ, և զճշմարտութիւնն յայտ յանդիման կացուցանել զօրինաւոր ծառայիւ, և անդերձ ընդդէմ։ Եւ զայն առաւելեալ յետագէր՝ ընթեռնուլ՝ որոց կամք իցեն։ Յիշեալ համարեալ, թէ տեսեալ նոյն զօրակութիւն, և զսորա դրութիւն ուրեմն՝ յաղթել ՚ի ճշմարտութիւն կամօքն ինքնին որոշագրելոցն, և յետոյ նախահանգիստն զայն։ Եւ միայնակ ես այսմ ամբողջ, ահա յամին 1807. ՚ի լոյս ածեն տպագրութիւն զգրութիւն իւր նորին Օձնեցւոյ՝ գտեալ յարդանի գրատան Փարիզու, և զայն բաղդատեալ ձեռագրութեամբ ճշգրտագոյն, և զընթերցուածութիւնս զգեստ, և զարդարեալ ՚ի ձեռն

տեառն Մ. Հ. Անդրէին Ռ.-գեւրեան, երբ զհաւատալի գրոցն Յովհաննու Իմաստասէր հայրապետին՝ վերջերս 'ի վերայ կեալ տէրց Հարցն Մերոց, զոր ընթերցան տէրն Նեւոնի Ճ... Հալէին 'ի տպագրութեան ընդ Թէոդորիանեայ՝ հրատարակեն. և միանգամայն եփրեմ զանշուշտ ապացոյցն գրոցն Մ. Հ. Անդրէին Զամչեան, որ զՅովհաննէ Օձնեցւոյ 'ի պատմու- թեան կարգ, հատուածն։

Զայս տեսեալ մեր, և միանգամայն 'ի վեր հասեալ, եթէ չէր ինչ նշան ուղղութեն, և ճշմարտասիրութեն, եթէ զի խոյս զբօսու կարգան, և առ պաշտպանելոյ զմոլար կարծեօ 'ի խորագոյն խորհրդաւանեն, և 'ի միջոցին զխառար շօշա- փեն, հարկ անյեն համարեցաք 'ի ձեռն ծանօթից մատուցանել և զայն, և զմոլորութիւն, և զպատուութիւն դրութեանց նց, և զկեղ- ծաւորակ միտութիւն միտսէ նց ըստ կարի համառօտիւ յայտ յանդիման ցուցանել՝ առ 'ի զգուշութեն ողջամիտ և բարե- միտ ճշմարտասիրաց, որք չէին բաւական անձամբ հասու լինել ճշմարտութեց, կամ ստուգութեց գրութեց նոցին, զի մի մոլորեսցին. և միանգամայն առ զգուշութեն և 'ի լուսաւորութեն միամիտ, և տգէտ հասարակութեան, որք 'ի յարգի ունէին զնա և 'ի համարի եթէրն զիմաստուն հայրապետ երևելոյ. առ զի տեսեալ այն յանդիման զմոլորութիւն, և զանմտութիւն տգէ- տութեն նր 'ի տգէտ գրութեն իւր յայսմիկ, և յանդիման 'ի ճշմարտութեն, յուղղութեն էկեղեցեն, և ճշմարտութեն աշակեր- տեացն, զի յաղթող է ամի ճշմարտութեն։ Այլ ժամանք մի միայն է անուանեալ կանոն ասացեալ ճշմարտութեն վարդապե- տութեց հաւատոյ, և բարի վարուց՝ Հաւատացեալ մեր Փրկչին, նմին էրէ կամակար մոլորեցելոյ արկանել անմոլար դատաստանի նր զայս, և զամ գրութիւն իմ։

# ՀԱՄԱՌՕՏ ՔՆՆՈՒԹԻՒՆ

## Յորում ցուցանի, թէ Յովհան Օձնեցին ոչ է Յովհաննէս հայրապետն իմաստասէր վկայեալն 'ի մէջ Հայոց՝ ընդդէմ գրութե՛ Ս. Հ. Միքայելի Չամչեան։

Հաւաստիք հաստատեալ 'ի նոյն իսկ 'ի գրուածոց նորին Ս. Հ. Միքայելի՝ առանց յաւելուլ [illegible]։

### ՆԱԽԱԲԱՆՔ։

Թէպէտ ըստ գրութեան նորին Ս. Հ. Չամչեանի չէ հնար ումեք 'ի քննութիւն մտանել, կամ լիով իմանալ զբանս նորին Օձնեցւոյ՝ ըստ նր իմաստասիրին, որ հաստատէ Գիր. Գ. Գլ. Ի. Էջ Ճ. թէ „անկարելի է ումեք անվ-„թար և ամբողջ իմանալ զմիտս շարադրութեան բանից „նորին, բայց եթէ քաջ վարժեալ իցէ 'ի քերականա-„կան և 'ի հռետորական արուեստս, և 'ի տեղեկութիւն „նախնի պատմութեանց, և հմտացեալ 'ի խնդիրս փիլիսո-„փայական մակացութեանց, և մարզեալ յածաբանական „գիտութիւն և 'ի մեկնութիւն սբ գրոց. ապա թէ ոչ՝ „եթէ ոք յընթեռնուլն զբանս նր, համարեսցի՝ թէ իմա-„ցաւ, 'ի քննելն վերստին՝ ծանիցէ, թէ չէ իմացեալ։"

Իսկ ես՝ որ յետին եմ 'ի բանասիրաց, և զուրկ 'ի նախ-
ննթադրեալ և պահանջելի նորա կատարելութեանց, ա-
պայքէն յանդգնութի համարէի ինձ ձեռնամուխ լինել 'ի նո-
րուն քննութի: Բայց վստահացեալ յաննախանձ հրամանէ
փրկչին մերոյ, որ առ հասարակ առ համօրէն հրէական ազգ-
պատուիրեալ և ազդեալ, եթէ առ գիտնականս, և եթէ
առ անգէտս, թէ *ՔՆՆԵՑԷՔ ԶԳԻՐՍ, ԶԻ ԴՈՒՔ ՀԱՄԱՐԻՔ
ՆՈՔՕՔ ՈՒՆԵԼ ԶԿԵԱՆՍ. (Յովհ. Ե. 39.) և որ 'ի կարգին.
զի եթէ զսոյն գիրս, զբանս անսահման և անհաս իմաս-
տութեան Այ պատուիրէ քննել ամենեցուն, և հասու լի-
նել ճշմարտութեան, բանի՞ առաւել զգիրս, և զբանս
նախադրեալ անուանեալ Իմաստասիրի. թո՛ղ՝ զի զօր-
հանապազ քննեն ամենեքեան անխիղճ զգիրս, և զբա-
նըս սրց հարց, և գերիմաստ ծածկաբանից, և վարդապետաց
եկեղեցւոյ: Այլ թէ ուղիղ, և եթէ թիւր իմասցին,
գրութիւնք նոցա յայտ առնեն:

Բայց գիտեմք, և չեմք ինչ անտեղեակ այդպիսի
նախապաշարողական ոճոյ, որ զանհմուտս կանխաւ նա-
խադատութեն պաշարէ, առ չմատչելոյ 'ի զննելն ճշմար-
տութեան, առ զիւրեանցն ևեթ հաստատելոյ զվարդապետ-
տութի. որ տեսանի յոմանս 'ի մատենագրաց. և յայտ
է, որոց փոքր մի դեգերեալ իցեն յայսպիսիս: Նմին
իրի և մեք միամտութբ, և անխիղճ 'ի յանդուգն ձեռ-
նարկութ, մատչիմք 'ի քննութի նր ըստ մերս տկար կա-
րեաց, և փանաքի իմաստից:

## Նախագիտելիք.

Այլ արդ՝ մինչչև իցեմք մատուցեալ 'ի բացորոշութի
խնդրոյն, արժան է գիտել նախ, զի ըստ համօրէն փի-
լիսոփայից, և աստուածաբանից, առեալ յԱրիստոտէլէ,
յարանուանութիւն լինի 'ի կերպէ, որ կատարելապէս,
և ըստ մեծագոյն մասին ենթակային ներդոյ. որպ նա յար-
անուանի սպիտակ, յորում սպիտակութի ներդոյ կատա-
րելապէս և ըստ մեծագոյն մասին, զորօրինակ մարդ սպիտակ՝
թէպէտ և ըստ իմիք մասին, զորօրինակ ըստ հերացն,
կամ ըստ աչացն՝ իցէ սեաւ. սապէս և եթէովպացին
յարանուանի սեաւ, թէպէտ և ըստ ատամացն, և ըստ հերացն
իցէ սպիտակ. Նոյնպէս և արդար յարանուանի, յորում

ունակութիւն արդարութեան կատարելապէս ներգոյ . և ներգործէ յանմի արդարապէս . իսկ որ զմի կամ զերկուս ներգործութիւս արդարութեան առնէ , զորօրինակ բազումք , այլև ամբարիշտք , և անօրէնք , ոչ յարանուանի արդար : Իսկ եթէ յարանուանութիւն իցէ առասական անուանմն մակադրեալ ումեք , ոչ միայն կերպին այնպիսի յարանուանութեան պարտ է կատարելապէս , և ի մեծի մասին ներգոլ , այլև գերազանց իմն աստիճանաւ , և առաւելութեամբ քան զամենեսեան . զորօրինակ փիլիսոփայն , կամ իմաստասէրն՝ մակադրեալ Արիստոտելի , և Առաքեալն՝ սրբոյն Պօղոսի , և այլն :

Գիտել պարտ է երկրորդ , զի պիտակ յարանուանութիւն անուան առանց իսկական կերպին ներգոլոյ ՚ի յարանուանեալն ըստ վերագրելոյդ , սուտ լինի և խաբէական . և ընդ հակառակս , եթէ կերպն յարանուանութեան իսկապէս գուցէ յիմիք , թէպէտ և ՚ի տգիտաց ոչ ծանիցի , և ոչ յարանուանեսցի , նա է ճշմարտիւ յարանուանեալ , և այնպիսի : Իսկ որք զհակառակն սոցա գործեն , զիսկականն ոչ յարանուանելով , կամ զոչ իսկականն յարանուանելով այնպիսի , ոչ ընորայն , այլ զերբեանցն ցուցանեն զկուրութիւն , և զանգիտութիւն . զորօրինակ նա՝ որ զեշխանն ածաբանից՝ զհինգերորդ վարդապետն եկեղեցւոյ՝ զսրբն Թովմաս Ակուինացի անուանէ իմաստակ , տպաքէն քաջայայտ է ամենեցուն , թէ նա զիւր անմտութիւն և զիմաստակութիւն յայտ առնէ . և կամ եթէ զայսպիսի ոք իմաստակ՝ անուանեսցէ ածաբան , ասանիկ զիւր տգիտութիւն և զյիմարութիւն քաջայայտ ապացուցանէ : Նոյն այսմ իմն և զայլոց :

Իսկ արդ՝ քանզի գրեթէ բովանդակ ցուցումն Հայր Միքայելին չամչեան հիմնի ՚ի յարանուանութեանդ իմաստասէր , հարկ է քննել , թէ ում ումեք արդեօք յարմարի այն , և զո՞ ոք իսկապէս յարանուանէ . արդեօք զՅովհաննէս Օձնեցին՝ զոր նա հաստատէ , եթէ զայլ ոք : Ո՛ր ի որովհետև զոմն Յովհաննէս հայրապետ անուանէ Յովհաննէս կաթուղիկոս պատմիչն՝ և որք ըստ նորա՝ իմաստասէր . և զոմն Յովհաննէս հայրապետ անուանէ իմաստասէր Գրիգոր կաթուղիկոսն , Ներսէս շնորհալին , Ներսէս լամբրոնացին , և այլք . խնդրի , թէ արդեօք

նոյն անձն իցէ յերկուց կողմանց եւ անուանեալն Իմաստասէր, թէ այլ ոք մին, և այլ ոք միւսն:

Ըստ քաջ խելամտութեան և որոշման սորա՝ հարկաւոր համարեմք զերկոցուն կողմանն զբանս և զվկայութիւնս քննել և տեսանել, եթէ ո՞ւմ ումեք իսկապէս պատշաճեսցի այս յարանուանութիւն: Անորոյ

Ասեմք նախ, թէ անունս Իմաստասէր, զոր նախ տայ Յովհաննէս կաթուղիկոսն, և ՚ի նմանէ առեալ հետեւորդք նորա, Յովհաննու Հայրապետի Օձնեցւոյ, ոչ ի՛ւիք իրօք յարմարի նմա, և ապիտակապէս, և տգիտութիւն ընծայի նմա, որ զուրկ է ամենևին յայնպիսի յարանուանեալ կերպէ, այս է՝ յիմաստուէ:

Ցուցանի առաջարկութիւս երրակի: Նախ՝ ՚ի վկայութէ իսկ անտի, և ՚ի բանից Յովհաննու կաթուղիկոսի պատմչի: Երկրորդ՝ ՚ի բանից և ՚ի գրուածոց նորին Յովհաննու Օձնեցւոյ, ը̅ յառաջ բերելոցն միայն ՚ի Հայր Միքայելէն Չամչեան: Եւ երրորդ՝ ՚ի ներգործական գործոց, և վարուց, և ՚ի զանցառութեանց պարտաւորեալ գործոց նորին իսկ Օձնեցւոյ:

Նախ՝ ըստ առաջնոյն՝ ըստ առաջին մասին, այս է՝ ը̅ վկայութեն Յովհաննու կաթուղիկոսի պատմչի, քաջայայտ է ամենեցուն ուղիղ կանոնն ճշգրիտ վկայութեն ՚ի պատմաբանականս, որոց փոքր մի դեգերեալ իցեն ՚ի տրամաբանական մակացութիւս, այս է՝ եթէ գործ ինչ, կամ որպիսութիւն ուրուք անձին պատմեսցի յումեքէ արժանահաւատ և ՚ի ճշմարտապատում ժամանակակցէ, և յականատես վկայէ, և կամ ՚ի բազմաց նոյնպէս արժանահաւատ ժամանակակցաց, և կամ յումեքէ, և կամ ՚ի բազմաց ոչ ժամանակակցաց, բայց անշուշտ ցուցեալ՝ եթէ յարժանահաւատ վկայից, և ՚ի ճշգրիտ տեղեաց առեալ գրեն յանուանէ, այսպիսեաց հաստատել արժանի է աներկեան. իսկ այլազգ՝ ոչինչ հաստատս կարող են ծնանել, եթէ առաջին իցէ պատմիչն, կամ պատմիչքն՝, և եթէ յետինք՝ ոչ ժամանակակիցք: Իսկ արդ, Յովհաննէս կաթուղիկոս պատմիչն, որ առաջինն է ՚ի պատմել զՅովհաննէ Հայրապետէ Օձնեցւոյ, և յանուանել զնա իմաստասէր, ոչ է ժամանակակից նորա, ոչ յայտ է ՚ի նորին իսկ պատմու-

թէ. և ոչ իսկ ցուցանէ հաւաստեաւ, թէ յում–մէ, և կամ յորոց արժանահաւատ վկայից գրէ զայն. ապա ոչ ինչ զօրէ վկայութ՟ի նորա: Իսկ այլք՝ որք զհետ նո–րա գրեն զայն՝ գոլով կուսակիցք նորա, ոչ են ժամա–նակակից, և 'ի նմանէ ևեթ առեալ գրեն. ապա և ոչ նոցա վկայութիւն զօրէ երբէք: Եւ այն՝ զի բազում ան–գամ պատմութ՟ի ինչ գրեալ յումեքէ յետ բազում ժամանակաց՝ իբր 'ի բազումս համարի սուտ, եթէ ոչ հաւաստեաւ ցուցցէ, եթէ յի՞նչ արժանահաւատ տե–ղեաց հանէ զայն. ո՞չ յայտ է, որոց փոքր մի տեղեակ իցեն այսպիսեաց: Եւ զհետ նորա այլոցն վկայութիւնք՝ որք 'ի նմանէ առեալ, նոյնպէս համարին սուտ. և ոչինչ օգտեն բազմութիւնք նոցա, զի վերածին 'ի մի միայն հեղինակ անստոյգ: Իսկարդ՝ այսպիսի է պատմութ՟ի վերայգրեալդ Յովհաննու կաթուղիկոսի: Ապա է բոլորո–վին սուտ:

Եւ չասիցես, եթէ հանեալ է նա զպատմութ՟ի իւր 'ի գաւազանագրոց, և 'ի յիշատակարանաց կաթուղի–կոսաց: Այլ ասա՛ աղաչեմ, թէ ո՞ է արժանահաւատ հեղինակ այդոցիկ գաւազանագրոց, և յիշատակարա–նաց, զոր ոչ յիշատակէ ամենեւին. մի՞ է՝ եթէ բազում, ժամանակակի՞ց՝ եթէ ոչ ժամանակակից: Եւ ո՞ւր ան–ուանք և հեղինակութիւնք նց՟, յորոց ևեթ մարթ է առ–նուլ զստուգութիւն պատմութեանց: Ապաքէն և այլ պատ–միչք, որք զհակառակն պատմեն՝ ասեն առեալ 'ի գաւա–զանագրոց, և 'ի յիշատակարանաց, զորս դու ոչ ընդունիս:

Եւ դարձեալ՝ ոչինչ զօրեն վկայութիւնք աղանդակ–ցաց, որք պատմեն զիւրեանց աղանդաւորաց. իսկարդ՝ գոլով Յովհաննու կաթուղիկոսի պատմչի յաղանդոյ հերետիկոսաց՝ որք ընդդէմ Քաղկեդոնի սր՟ ժողովոյն, ո՞չ և յայտ է, որ ստութ՟ի գրէ, և ամբաստութ՟ի հայ–հոյէ զնոյն սր՟ ժողովն. ապա վկայութ՟ի նր՟, որ զՅով–հաննէ օծնեցւոյ՝ յիւրմէ իմաստասէր անուանելոյ, և գովելոյ՝ է զաղանդակցէ իւրմէ, իբրզի և նա 'ի նոյն ա–ղանդոյ է, ո՞չ և ցուցցի ստորև: Ապա ոչինչ զօրէ վկայ–ութ՟ի նր՟:

Ցուցանի և ըստ երկրորդ մասին առաջին առա–ջարկութ՟ն, այս է՝ 'ի բանից իսկ անտի Յովհաննու կա–

թուղթկոսի պատմչի, թէ ոչ է նա բնաւ իմաստասէր, թող թէ առասական անուամբ անուանեալ իմաստասէր: Գրէ զիմաստութէ նորա այսպէս. „Օկնի սորա „(դ̅ր̅ Եղիայի) յաջորդէ զաթոռն որ՝ մեծ իմաստասէրն „Յովհաննէս. որ հմուտ և տեղեակ գոլով բոլոր քեր„թողական շարագծաց, մասանց բանի, և մասնականաց, „այլև վարժից սեռից, և ո՛ք ընդ գոյացութք են սեռա„կան տեսակարարութիւք՝ մինչ ցանհատ վայր. և տարբե„րութեացն ևս հանդամանաց, և պատահմանց անջատից „անանջատից՝ ոչ անտեղեակ. դարձեալ և կրթական „վարժից թէմանականաց, որ զարուեստին ծառոյ պտուղս „առոգանապէս ներաշըրէ յարուեստասէրն. յաւէտ իմն „հմտագոյն գրով դրոշմեալ սայ եկեղեցւոյ Քրիի զբո„վանդակ կարգաւորութիս պաշտաման ժամուց՝ գեղեցիկ „իմն յօրինուածով ձոխացուցեալ, և բացայայտեալ ևս „զմիոյ միոյ կարգացն զմեկնութիս ՛ի մխիթարութիւն „գղերց եկեղեցւոյ. այլև ճառս ևս ինքնախօսս բանաս„տեղծս յարդարեալ, զզգացուցիչս չար գործոց, և „յորդորականս ՛ի պէտս ապաշխարական սաղմ„: Իսկ ահա յայս բան բովանդակի ամ իմաստութի նորա: Արդ՝ տեսցուք եթէ զի՞նչ իմաստութի իցէ այս:

Իսկ ՛ի զամենաբացայայտ երևեցի, բարձցուք զմանուածս բանից և բառից. դիցուք մեկն առաջի զիմաստըն: Տեղեակ էր սա քերականական շարադրութե, գիտելով զմասունս բանի՝ այս է՝ զութն մասունս բանի քերականութե, որք են անուն, դերանուն, բայ, և այլն. և զհասարակ և զմասնական անուանս. այլև գիտէր զսեռ, զտեսակ, և զտարբերութի, մինչև ցանհատն, որք վերաբերին ՛ի հինգ ՚ի հանուրս, կամ ՛ի հինգ ձայնս Պորփիւրի. այլև զզանազանութի գոյացութե ՛ի պատահմանց, և զզանազանութի պատահմանց. և դարձեալ սաէ՝ կարծեցեալ, թէ իցէ այլ ինչ գիտութի, գիտէր զներկրթութին, կամ որ այն ինքն է՝ զներածութին, այս է՝ զճառ, կամ զվարդապետութի հինգ ձայնիցն Պորփիւրի, որ ներածէ ՛ի տասն ստորոգութիս Արիստոտելի, որ անուանի ՝Ո— Պորփիւրի. և ահա այս է թէմանական, այսինքն՝ տեսական վարժք կրթութեանց նորա, պատշաճեցեալ յարհեստական ծառոյն Պորփիւրի:

Իսկ արդ՝ հարցանեմ, ոչ զհայր Սերոբէ հաւ-

չեան, այլ զի որ և իցէ 'ի յետին համբակաց իմաստասիրաց, թէ ո՞ւր կամ յումմէ՞ լուեալ իցէ քերթողութեն, կամ քերականական արուեստին լինել իմաստութի: Ապաքէն հնգամենայ մանկունք յանբաւս տարածէին զկածառս իմաստասիրաց, որք զազգի ազգի զիւրեաց քերականութի գուցէ քաջագոյն ևս գիտեն քան զմերագրեալդ իմաստասէր, որք յամ՛ դպրոցս, և յամ՛ տեղիս՝ ուր գտանին ազատական արհեստից կրթութիք՝ զոր հանապազ ուսանելուն: Ո՛ր թողցուք զայն, զի որք յումպէտս յայնպիսիս դեգերին, ոչ զիմաստնոյ, այլ արդեամբք զյիմարի կրեն զանուն, ըստ քաջ վկայելոյ կամի ուրումն բանասիրի, թէ զամ՛ բժիշկս յիմարս անուանէր, եթէ չէին խելագարագոյն՝ քերականք. իբր զի թէպէտ 'ի բժիշկս է գիտութի զընդհանրից, բայց 'ի մասնաւորի և յանհատս չիք ինչ ստուգութի, նմին իրի և յիմարս անուանէ, այս է՝ անգէտս. իսկ 'ի քերականութեն բնաւ իսկ ոչ, զի զնշանս իրաց պատաղի, յորս չիք ինչ ամենեւին գիտութի իրաց, և ոչ լաւութի կամ յոռութի բաց 'ի սովորութենէ: Նա և ահա այս է առաջին իմաստութի նր՛ վկայեալն 'ի Յովհաննէ կաթուղիկոսէ: Նա և արդարև եթէ հմտացեալն յայդպիսի քերականական արհեստս լինէր իմաստուն, ապաքէն կարծեմք, եթէ չէղև ոք իմաստնագոյն երբէք յաշխարհի քան զաղանդալեան Հագարացւոց, որոյ Ղուրանն՝ ըստ վկայելոյ համօրէն լեզուագիտաց նոցուն՝ գերազանցէ քան զամ՛ ազգաց քերթողաց զբանահիւսութի:

Իսկ երկրորդն, այն է՝ տեղեկութի, կմ՛ գիտութի հինգ ձայնիցն Պորփիւրի, կմ՛ տեղեկութի արուեստական ծառոյ նորա, և բաժանման պատահմանց 'ի գոյացութէ, և 'ի միմեանց, և այլն. թէպէտև է տեսական մակացութի, բայց ոչ իմաստութի. նա թէ՝ նախապատրաստութի ևեթ առ. քաջ ուսանելոյ զտասն ստորոգութիւն Արիստոտելի. և ահա յայսմ բովանդակի բովանդակ տեսական գիտութի Յովհաննու օձնեցւոյ ըստ վկայելոյ պատմչին Յովհաննու կաթուղիկոսի: Արդ՝ ո՞ արդեօք զայսպիսեաց ծանօթութի իմաստութի համարեսցի, թէպէտ և իցէ յետինն 'ի համբակաց տրամաբանութեն, բայց եթէ անգէտն գլխովին, որ ոչ ունիցի իմաստ

զգաղափար ինչ իմաստից և գիտութեանց, և ոչ բանից կարգ է ասել՝ չգիտիցէ որոշել զէշն ՚ի գամիշոյ:

Նաև զի՞նչ ապա առ այն ասասցուք, զի Հայր Միքայէլն Չամչեան առ Հասու լինելոյ ումեք այսպիսի իմաստութեն Օձնեցւոյն, պահանջէ լինել՝ „քաջ վարժեալ ՚ի „քերականական և ՚ի Հռետորական արուեստս, և ՚ի տե„ղեկութիւս նախնի պատմութեանց, և Հմտացեալ ՚ի խրըն„գիրս փիլիսոփայական մակացութեանց, և մարզեալ յածա„բանական գիտութիւս և ՚ի մեկնութիւս սր̃ գրոց„: Չէ մեզ պատասխանել, թողումք ողջամիտ ընթերցողացն դատել, թէ առ ՚ի իմանալ զմասունս բանի քերականութեան, և զսեռ, և զտեսակ, կամ զհինգ ընդհանուրս, և այլն. պահանջի լինել Հռետոր, փիլիսոփայ, ածաբան, պատմաբան, և որ ՚ի կարգին:

Նաև ասիցես, թէ ոչ գիտէր միայն զայս, այլ՝ „յաւէտ ի̃ն Հմտագոյն գրով դրոշմեալ տայ եկեղեցւոյ „Ք.ի զբովանդակ կարգաւորութիւս պաշտաման ժամուց՝ „գեղեցիկ ի̃ն յօրինուածով ճոխացուցեալ. և բացա„յայտեալ ևս զմիոյ միոյ կարգացն զմեկնութիւս ՚ի մխի„թարութիւն դպրաց եկեղեցւոյ, այլև ճառս ևս ինքնա„խօսս բանաստեղծս յարդարեալ, զզջացուցիչս չար„գործաց, և յորդորականս ՚ի պէտս ապաշխարական „սակի„: Նսեմք. ընդունիմք, եթէ արարեալ իցէ զայդօսիկ ըստ վկայութեան Յովհաննու կաթուղիկոսի. բայց թէ և իմաստնապէս իցէ արարեալ, զայն ոչ ընդունիմք. վասն զի գործն ոչ զանցանէ զպատճառաւ. և յայնպիսի իմաստութէ Օձնեցւոյն, այս է՝ ՚ի գիտելոյ նորա զքերականութիւն և զհինգ ընդհանուրս, ոչ ելանէ կատարեալ գործ իմաստութեն. այլ Համաչափ գործ գիտութեն նորա. զորոյ եթէ զՀարազատ գործս յարժանահաւատ վկայից առաջի ունէաք, ապաքէն ապացուցանէաք. որպէս յայտ է ՚ի շարականէն Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն, զոր ամենք և կարի յիրաւունս ընծայեն նմա իբր մատոյց այնպիսի իմաստնոյ Հարազատ և Համաչափ ծնունդ և գործ: Իսկ վկայութիւն Յովհաննու կաթուղիկոսի, որ ասէ՝ յաւէտ ի̃ն Հմտագոյնս գրեալ զայնցանէ, ոչինչ օգնէ. զի գոլով ն̃ր ամենևին

տգէտ յիմաստասիրական մասին, չէ հնար նմա լինել դատաւոր յայսպիսիս ։

Յորմէ յայտ է, թէ և գրութին հայր Միքայելին, որ ընծայէ նմա զվեց գրուածս, է անհիմն, կեղակարծ, և սուտ ։ Անհիմն, զի ոչ բերէ յառաջ զարժանահաւատ վկայս ընծայելոյ նմա զայնպիսի գործս ։ Կեղակարծ, զի բազում անգամ զգործս այլոյ այլում գրէին. ուստի ոչինչ ընդդէմ է, եթէ զայլոց արարս ոմանք Օձնեցւոյն վերագրեցին ։ Եւ սուտ, զի զգիրս՝ որ ՚ի վր մարդեղութեն՝ արարեալ ՚ի Յովհաննէ իմաստասիրէ յիշատակելոյ ՚ի Շնորհալւոյն և ՚ի Լամբրոնացւոյն՝ Օձնեցւոյն ընծայէ, որպ ցուցցուք սորին ։

Յուցանի երկրորդ՝ առաջարկութիւս ՚ի բանից, և ՚ի գրութեանց նորին Յովհաննու Օձնեցւոյ ։ Թէպէտ ՚ի վերագոյն գրելոցդ յառաջին ցուցման, ուր տեսաք քաջայայտ զհամօրէն ուսումն և զիմաստութիւն նր, ինքնին զհետ գայ՝ և բանից նորա յարգ և զօրութիւն, որպ պտուղն ՚ի ծառոյ անտի իւրմէ. այլ քանզի և ծառն ի պտղոյ անտի իւրմէ ճանաչի, եթէ ունէաք առաջի զամ զհարազատ գործս նորին Յովհաննու Օձնեցւոյ արժանահաւատ վկայիւք ցուցեալ, ապաքէն ՚ի նոցունց և նորայն իմաստութի յայտյանդիման տեսանէր՝ ոչինչ առաւելեալ քան զնոյայն պատճառ, զի ծառ բարի ոչ կարէ առնել զպտուղ չար, և ոչ դարձեալ ծառ չար՝ զպտուղ բարի, ըստ անսուտ բանի Տն վկայելոյ ։ Այլ քանզի՝ որպէս յառաջն ասացաք՝ զբանս նր քննեմք ըստ յառաջբերելոցն միայն ՚ի հայր Միքայելէն չամչեան ՚ի հաւատս նորա, թէպէտ և չիցեն անկեղծ, և ըստ համօրէն վարդապետութեն նորա, որ ՚ի գրութեն իսկ նորին հայր Միքայելի քաջայայտ ցուցանի, որոց միտ դնեն քաղուածոյ գրութեան նր յայլև այլ մատենագրաց, ուր բազմօրինակ այլայլին բանքն, յորոց և ոչ զմին ըստ ուղիղ քննութեանց արժան է համարել արժանահաւատ, եթէ չգուցէ այլուստ այլ ինչ փաստ հարազատութեն նորին ։ Նմին իրի աստ զնորա յառաջ բերեալսն եւեթ ենթադրեալ քննեմք ։

Այա, այս է՝ հայր Միքայէլն, յառաջ բերէ պատենաբանութի ինչ, և զկանոնս ինչ նորա ՚ի ժողովէ, զոր

տալ գումարել նմա 'ի Դուռն՝ ընդդէմ աղանդոյն Պօղի-կեանց, և ընդդէմ անկարգութեան վարուց քահանայից, և աշխարհականաց, և 'ի մէջ եկեղեցական ծիսից: Ընդ որ Հայր Միքայէլն այնչափ հիացեալ զարմացեալ յառաջ կրթի, ը գեղապանծ և ը խորհմանց բանս նր ասել, մինչև անպատկառ զնմն ոսկեգրով դրոշմել արժանի համարէ: Բայց թէ քանի՛ անյարիր, քանի՛ անկարգ, քանի՛ փանաքի և տղայական, և քանի՛ ամբարհաւաճական, միանգամայն և քանի՛ հակառակ ուղղամիտ վարդապետութեան, և ծիսից ընդհանուր կաթողիկէ սր եկեղեցւոյ իցեն, աւանիկ որ միանգամ յակն արկանէ զայնոսիկ, թէպէտ և հարևանցի, եթէ ունիցի առողջ միտ, յայտյանդիման տեսանէ: Այլ քանզի մեք յերկարագունից խորշիմք 'ի բանից, և զհամառօտն ողջունեմք յամի ՌՃ կանխաւ գրութեան մերոյ, զինչ ինչ յայնցանէ առաւել դիցուք միայն:

Նախ առաջին զի՞նչ համեմատութի, և զի՞նչ միաբերութի յատենալանելն 'ի ժողովն՝ որ ընդդէմ Հերետիկոսաց, և 'ի մէջ բարեկարգութեան եկեղեցւոյ, խօսել զահագլուխ Հայրապետին զմանկութե իւրմէ, զուսմանէն, զվարդապետէն իւրմէ, նա թէ՝ զգերազանցութէ հօգւոյ իւրոյ և մարմնոյ անդստին 'ի մանկութէ՝ իբրև զերկրորդ Սամուէլն, և զգուշակութէ վարդապետին իւրոյ ամբառնալոյ իւրոյ յայն աստիճան կաթուղիկոսութե, և զիւրմէ՝ իբրև զԵսայի մարգարէ անձնամատոյց լինել առ այն պաշտօն, և որ 'ի կարգին: Ով յետին անմտութեա, և տղայական խաղարկութեա, նա թէ՝ մանկական սնափառութեա: Իսկ ո՞ արդեօք 'ի յետին իսկ համբակաց իմաստից համարեսցի զայն՝ բան իմաստասիրի:

Իսկ ահա՛ նորին իսկ բանք. „Ով զիս անցելոցն ա-
„ռաջի դնէր ամենակալց, վերստին զմանկական տիոցն
„զգեցուցանելով զհասակ. յորում ճոխացեալն էի հայ-
„րենատուր հօգևկան ընչիցն առատութե. և ճոխացեալ
„հրճուէի եօթնամեանեայ հօգւոյն պատմուճանաւ. և
„շնորհացն պսակաւ փառաւորեալ գլխոյ իմոյ. և զա-
„ռաջնորդականին իմոյ կախեալ զպարանոցէ զօսկետեսակ
„զքաջամանեկին զգեղեցկութի. և ամէն զանձն ընդ իս
„բերէի զհարսնական յօրինուածոյն զգեստ, պատշաճ
„լինելով յերկնայնոյն պարփակել փեսայի առագաստ.

„ քանզի արդարև զարդարի պատկերս՝ առաքինութեան
„ երանգովք՝ ըստ նախատիպին կերպարանեալ, ուր ճշմար-
„ տութեան և ինձ թուի: Յայնժամ բոլորովին ես ինքն էի
„ լուսաւորիլ՝ յածայնոյ թափանցանց լինելոյ նշուլից.
„ զոր իբրև մաքուր հայելեաւ առ իս զփրկչականն ձգե-
„ լով զիմի զնմանութի, հանգոյն արեգականն 'ի խորս
„ ուրեք ընդ յստակութի ջրոյն առաքելով զիւր ճառա-
„ գայթսն: Իսկ նախ նոյին սակաւ սակաւ հոգւոյն ուղխից
„ փափկօք սոսգանէր զարգաւանդ երկիր մտաց իմոց. և
„ որպ 'ի ծաղկահոտ գինի սպունգ ինչ թացեալ, այնպէս
„ լցեալ ուռճանայր 'ի նմանէ բանական իմ ոգի. մինչ
„ զի կարել ասել ինձ զայն ժամու պատահիցն՝ իբրև
„ զայլմէ պատմելով. մանուկ էի տարափորձ, և ոգւոյ բար-
„ ւոյ դիպեցայ: Քանզի և վարժապետ մեհագոյն ունէի
„ յԱ.Յ պարգևեալ ինձ՝ հայր, միանգամայն և հրահան-
„ գող հոգեկան վարժութեանց, զհմն Թէոդորոս, ըստ մե-
„ րում՝ ածաշնորհ պատշաճեալ՝ ընդունի. որ ոչ զատ յին-
„ քենէն և ևթ բաւականանայր շահմարանել յիմում ոգւոջ
„ զբարին, այլև 'ի յոլովից զպայծառագոյնսն ծաղկաքաղ
„ առնելով զշնորհաց, լնացուցանել զագահութեան իւրոյ
„ ինև ջանայր զուսումնասիրութի: Իսկ զրեթէ յաղագմանէ
„ հոգւոյն զլինելոցն նախատեսեալ՝ զառ 'ի յորունցն հա-
„ ւաքեալ պատրաստէր լինել բազմաց պիտոյից նիւթ,
„ ծածկաբար զնյսն առ իս բարբառելով. կեր մանր
„ զմատեանն զայդ՝ պատգամատարդ հրաւիրեալ լինել
„ խարայէլեանն ազին: Իսկ եթէ երբէք ուրեք խորհէի
„ արդեօք զհրամանացն խորտակել զլուծ, և խզել զաշ-
„ խատութեան սամետէս, այլում ումեք ակն դնելով կեն-
„ ցաղական տարփանաց, ածայինն շնորհ անդրէն ձգեալ
„ բերէր զիս կապանօք սիրոյ իւրոյ, սաստելով յականջս
„ խորհրդոցն իմոց. զի կայ քո և ճանապարհին եգիպտաց-
„ ւոց՝ ըմպել զջուրն Գեհոնի. յաղագս որոյ ապա հաւա-
„ նեալ իմ այսուքիւք՝ իբրու թէ ձայնիւ կոչողին զիս Ա.Յ,
„ զյանձնառականն ըստ առաջ առնելով բան. աշխատիկ
„ եմ ես, առաքեալ զիս. զօրօրինակ մի որք նորավարժ ոչ
„ կարացեալ յինքենէ զվերելեակն իւր 'ի բաց ստուցա-
„ նել, զակամայ սանձիցն բռնադատութի դժոխակամու-
„ թեան իւրոյ եղեալ՝ գործիցէ քաջ հլութն ասպարէզ":

Ասէ Հայր Միքայէլն․ զայն յանդիման կացուցանէ գեղեցիկ օրինակաւ անմեղութեն հասակի, որ 'ի չափ հասանելն որ քան զօր յանցուածոց ազատաւորութիւն անշքանայ, յանձն ի՛ր առակեալ զնոյն:

Այլ ասա աղաչեմ ով Հայր Միքայէլ, միայն Օձնեցին եղև անմեղ 'ի մանկութեն հասակի, և ընկալաւ զշնորհս մկրտութեն շնորհօք Տն, եթէ առհասարակ ամ մկրտեալ մանկունք քրիստոնէից: Իսկ զինչ պիտէր յանձն առակել, և ոչ յամ անմեղ մանկունս քրիստոնէից: Սուտ է գլխովին, զի ոչ զկայ առնու յայնմ ևեթ, այլև 'ի զարգանալ հասակին՝ զյառաջադիմութիւն ուսման իւրոյ, զվարդապետին անուն և զգիտութիւն, և զմարգարէութիւն, և զորս 'ի կարգին առնուարանէ. ուստի և անդէպ մեկնութիւն և ջատագովութիւն քո առաւել պարտաւոր առնէ զնա՝ քան թէ անբասիր: Իսկ ոչ այսչափ միայն, այլև յստացականն իւր կարծեցին զառաքինութիւնս և զգիտութիւնս անպատկառ բարբառէ, ոչ հեղականին ևեթ ըմբռնեալ պարգևաց մկրտութեն, այլև ստացականին, ո՛վ յայտ յանդիման տեսանէ ամ ոք, որ զայն յակն արկանէ:

Ցուցանի երրորդ՝ առաջարկութիւնս 'ի ներգործական գործոց և վարուց, և 'ի զանցառութեն պարտաւորեալ գործոց նորին իսկ Օձնեցւոյ: Իսկ նախ՝ 'ի վարդապետական գործոց նորա:

Ապաքէն քաջայայտ է ամենեցուն, եթէ 'ի պատմական գործս ուրուք, ուր զուգընթանան բազում պատմիչք, ոչ ականատեսք, և ոչ ժամանակակիցք, և ոչ 'ի ժամանակակից, և 'ի հաւատարիմ պատմիչս հաստատեալ, միշտ և յամի առաւել զօրեն գրականքն՝ ք զբացասականս. այս է՝ առաւել զօրեն գրական՝ գործք պատմեալք 'ի նոցանէ՝ քան զբացասականսն, կամ զզանց աբարնային յայլոց: Իսկ արդ՝ բազում պատմիչք ըստ գրելոյ իսկ Հայր Միքայէլին, այս են՝ Կիրակոս, Սամուէլ, Ասողիկ, Յայսմաւուրքն, Գաւազանագիրք ինչ, և այլ պատմութիւնք, զորս Հայր Միքայէլն անուանէ աղաւաղ գրութիւնս, և այլք, միօրինակ գրականապէս գրեն, եթէ արար նա ժողով 'ի Դուին, 'ի Մանազկերտ, կմ ուրևիցէ, և դատապարտեաց զՔաղկեդոնի սր ժողովն, և այլն: Ապա ուրեմն ոչ է սա իմաստասէր, և ուղղա-

փառ, այլ յիմար և հերետիկոս։ Աւստի և ոչինչ զօրէն ած ցուցմունք Հայր Միքայելին հիմնեալ գլխովին 'ի բացասութեան ոմանց պատմագրաց։

Աստէն 'ի բաց առնում զպէսպէս ժամանակագրութիւնս եղելոցն, յորս՝ իբր 'ի քաջայայտ ապացուցութիւն՝ յենու Հայր Միքայէլն Չամչեան, քան զորս չիք ինչ անհաստատ և անստոյգ յոյժ պատմագիրս, նմին իրի և անդէպ է ուրանալ զճշմարտութիւն գործոց ուրուք՝ առ անհամաձայնութեան ժամանակագրութեան պատմագրաց։

Երկրորդ՝ այն պատմութիւն ուրուք, որ եթէ 'ի ժամանակս իւր, և եթէ 'ի հետագայս համարձակ պատմի 'ի լուր ամենեցուն, և առհասարակ ամենեքեան ընդունին, և ոչոք ընդդէմ դառնայ, կամ զստութիւն նորա ցուցանէ, յայտ է, թէ առհասարակ համարի ճշմարիտ։ Իսկ արդ՝ վերագրեալ պատմութիւն Յովհաննու Օձնեցւոյ՝ անուանեալ իմաստասիրին, որ զժողովն արար, և զԹադէադոսին ընդ ժողովն եա մերժեաց, առհասարակ յաղագս պատմի 'ի ժամանակէ անտի իւրմէ մինչև ցայժմ 'ի բազում դարս. ոչ միայն 'ի պատմագրաց, զորս գուցէ բազումք ոչ ընթեռնուն, այլև 'ի յայսմաւուրաց, որ յոյժ ժամ ընթերցեալ լինի յեկեղեցիս յունկն ամենեցուն՝ 'ի սկզբանէ անտի մինչև ցայժմ, և ոչոք հակառակ եկաց, կամ զստութիւն նորա եցոյց, բայց եթէ արդ Հայր Միքայէլն Չամչեան։ Ապա չիք ինչ հաստատագոյն քան զայս հասարակաց վկայութիւն։

Ապաքէն սովին պատճառաւ ցուցանեն ածարանք յայտյանդիման զստութիւն պատմութեան այս գրոց, որ 'ի Մովսիսէ, ընդդէմ անհաւատից, և սադուկեցւոց ժամանակիս, որք յառաջեալք սակի համարեն և հայհոյեն զայն. իբր զի Մովսէս զանցս իւրոյ ժամանակին. և զեղեալ սքանչելիս 'ի վի խստապարանոց ազգին հրէից, և յԵգիպտոս, 'ի լուր ամենեցուն, ոչ միայն համօրէն ազգին հրէից, որք ականատես էին գործոցն, այլև եգիպտացւոց և համօրէն հեթանոսաց, ընդ որս անցին, սկըսեալ յԱբրահամէ մինչև 'ի մուտս երկրին աւետեաց՝ պատմէ. որում յանհնարից է լինել սուտ, ոչ ումեք ընդդէմ դարձեալ ժամանակակից և ականատես անբաւ բազմութեան հրէից և հեթանոսաց, նա թէ՝ և ոչ իսկ առ-

օրին քարկոծեալ գնա ։ Վկայէ այսմ և Աքիովր Հեթա-նոս յաւանդութէ ընկալեալ. որ և պատմեաց Հոլոփեռ-նեայ յետ այնչափ դարուց առ ժամանակօք Յուդթայ. (Յուդթայ Ե.)

Այն զի ըստ անշուշտ սկզբան փիլիսոփայից՝ ան-մարթ է զկարծիս Հասարակաց՝ եթէ ազգի, և եթէ Համօ-րէն մարդկան՝ մերժել, թէպէտ և չունիցի գրական և գրացայայտ փաստս, բայց եթէ քաջայայտ ապացուցու-թեամբ ստուգի. զի Համօրէն Հասարակաց Համարումն առաւել Հաստատուն Համարի քան զո՛ և իցէ չնչին կամ Հաւանական, ևս և Հաւանականագոյն փաստս մասնաւո-րաց, առանց քաջայայտ ապացուցութէ։ Զայս կանոն և յետինք 'ի տրամաբանից գիտեն։ Եւ զարմանամք, թէ զիարդ Հայր Միքայէլն Չամչեան զայս Համարումն Հա-սարակաց ազգին Հայոց, եթէ ուղղափառաց, և եթէ չարա-փառաց յայսքան դարս աւանդութի Հասեալ, թէպէտ և չէին բազում գրական պատմիչք յազգէն և յայլոց՝ ան-խիղճ մերժէ մի Հաւանական ևեթ փաստից, Հաստատեալ 'ի սին սուտ անժամանակչութիւն և 'ի բացասութիւն, և յորս 'ի սո-ցին սակի. որ յայտ է որոց յակն արկանեն զգրութի նորին։

Իսկ այն՝ զոր ասէ Հայր Միքայէլն Չամչեան ըստ ոմանց պատմագրաց, թէ զայն ժողովս արար ընդդէմ Պօ-ղիկեանց և Յուլիանիտաց, ուստի և մակաբերէ, թէ ոչ արար ընդդէմ Քաղկեդոնեանց, ոչինչ զօրէ. քանզի թէպէտ և Համօրէն ժողովք գլխաւորաբար լինին վ̃ ինչ ինչ իրաց կամ Հերետիկոսութեանց. բայց միանգամայն լի-նին և վ̃ այլոց. որ է տեսանել 'ի Համօրէն ժողովս եկեղեցւոյ։ Նախ՝ ըստ վկայելոյ սրբոյն Ներսեսի շնորհալ-ւոյն՝ ազգ մեր ոչ երբէք ընկալաւ զմոլորութի Յուլիանի-տաց, և ըստ վկայելոյ իսկ Հայր Միքայելին, առ ժամա-նակօք Յովհաննու օձնեցւոյն սակաւք ոմանք գտանէին։ Իսկ մոլորութին ընդդէմ Քաղկեդոնեանց առ Հասա-րակ էր սփռեալ յազգին, որպէս մեծապէս կշտամբէին, և յուղղութի ածել ջանային։ Ուստի Հետևի, թէ գլխաւորաբար պարտ էր լինել ժողովն վ̃ Քաղկեդոն-եանց։ Եւ նորա երկուցեալ, թէ գուցէ ազգն ընկալցի զդ ժողովն Քաղկեդոնի, և ընդ Յունաց միաբանեսցի, յորոց բազումք արդէն ընկալեալ էին և միաբանեալ՝ ըստ

Հօր Միքայելին չամչեան եւ վկայելոյ ; արար ժողով , և նզովեաց զսբ ժողովն Քաղկեդոնի, և բաժանեաց զազգն ՚ի Յունաց: Այս չէ ինչ ընդդէմ, եթէ ՚ի ժողովն յայնոսիկ և ընդդէմ Պօղիկեանց և Յուլիանիտաց, և այլոց եւս խօսեցաւ. որ սովորութիւն է ժողովոց:

Այս դարձեալ. Ո՞ւմ ումեք արդեօք յողջամիտ անձանց մարթ իցէ հաւանեցուցանել, եթէ վարդապետ որք սոսկական՝ տեղապահ եւեթ կաթուղիկոսարանին, ըստ պատմելոյ Հայր Միքայելին, (այն է՝ Յովհան վարդապետ աշակերտ Գրիգորատրոյ անձաւաձորեցւոյն յամին 651.) ունիցի այնչափ իշխանութիւն, մինչև ժողով գումարել ոչ միայն յազգային եպիսկոպոսաց և ՚ի վարդապետաց, այլև յԱսորւոց, նզովս սահմանել ընդդէմ ուղղափառաց ազգայնոց, և Յունաց վն որ ժողովոյն Քաղկեդոնի, փոփոխել զծէս համօրէն ազգի, բաժանել զխոյլին ՚ի Յունաց, և որ սոյին նման, կենդանի գոլով կաթուղիկոսին, և այլ համօրէն բազմաթիւ եպիսկոպոսաց, և այնմ ՚ի գործ դնել: Ապա քաջայտ է թէ իմաստասէր կոչեցեալն Յովհաննու օձնեցւոյ է զայն արարեալ:

Ցուցանի երկրորդ: Այդեալ, և ոչ ընկալեալ, թէ Յովհաննէս անուանեալն իմաստասէր չէ արարեալ զայն ժողով, և ոչինչ խօսեցեալ ընդդէմ Քաղկեդոնիենանց յանուանեալ ժողովս քո. ապաքէն քաջ գիտէր, և պարտ իսկ էր գիտել, գոլով կաթուղիկոս Հայոց, եթէ վարդապետ որք արարեալ է զկերպարեալ ժողովդ, ենզովեալ է զուղղափառ հաւատն Քաղկեդոնիենանց, նա թէ՝ ՚ի ժամանակս նախորդին իւրոյ Եղիայի այնչափ հալածանս յարուցեալ ՚ի վն ուղղափառ Քաղկեդոնիենանց, և առ կաթուղիկոսութեամբ իւրով մեծամեծ տարաձայնութիւն եղեալ յազգին վն նորին պատճառի. եթէ էր նա իմաստուն և ուղղափառ, և քաջ հովիւ հօտին իւրոյ, զխարդ լռէր ՚ի ժողովս իւր, և ոչ նզովէր զնոյն Յովհաննէս վարդապետն՝ որ զուղղափառսն նզովեաց, և զնա վարդապետութիւն և զանարժան փոփոխումն ծիսից նր ոչ դատապարտէր, և զուղղափառ հաւատն յայտ յանդիման ոչ քարոզէր և ոչ սահմանէր, և ոչ յուղղութիւն ածէր զազգն ըստ կարի, և այլն: Իսկ ըստ Հայր Միքայելին պատմելոյ՝ և ոչ յիշատակութիւն ինչ արար զոյա-

նէ ։ Ապա քաջայայտ է, թէ ինքն է արարիչ զժողովն զայնոսիկ ։

Այլ դարձեալ՝ Յովհաննէս կաթուղիկոս պատմիչն, որ ախոյեանն է հայր Միքայելին Չամչեանն, և ընդ նորա աւագին պատմիչ վարուց նորա, ապաքէն պարտ էր քաջ ճանաչել զնա, և զգործս նորա։ Նա ինքն Յովհաննէս կաթուղիկոս պատմիչն, բաց 'ի լինելոյն ազգէտ, է ևս չարաչար հերձուածող ընդդէմ Քաղկեդոնի սբ ժողովոյն, որպէս յայտ է 'ի գործոց և 'ի հայհոյութենէ՝ զոր հայհոյէ 'ի գիրս իւր զսուրբ ժողովոյն Քաղկեդոնի ։ Սա 'ի պատմութեան իւրում զնոյն Յովհաննէս անուանեալ իմաստասէր մեծապէս գովէ, որպէս տեսաք ևս 'ի վերոյ, և զանդէպ և զանվայել վարս նորա ստախօսապաս պատճառանօք արդարացուցանէ։ Արդ՝ եթէ սա ճանաչէր զնա իմաստուն և ուղղափառ, և գիրս ևս շարադրեալ 'ի ցոյց ճշմարտութեան ուղղափառ հաւատոյ Քաղկեդոնի սբ ժողովոյն և երկուց բնութեանց Քրիստոսի, զիարդ զնա ջատագովէր, և ոչ նորա շաւղացն զհետ երթայր, և ընդգրկէր զուղղափառ հաւատս Քաղկեդոնի սբ ժողովոյն, գոլով և ինքն կաթողիկ և յաջորդ նորա։ Ապա քաջայայտ է, թէ և նա, այս է՝ անուանեալ իմաստասէրդ Յովհաննէս էր յաղանդոյ իւրմէ, և նոյն ինքն՝ որ արար զայն ժողովն ։

Այլ դարձեալ՝ ըստ հայր Միքայելին իսկ պատմելոյ՝ 'ի ժողովին՝ զոր նա արար, և լբ կանոնս հաստատեաց, յորոց 'ի միումն հաստատէ զորբասացութիւն երգել երիցս՝ հանդերձ յաւելմամբ երիցս որ խաչեցարին. և յայլում ոչ խառնել ջուր 'ի բաժակն. և յայլում թոյլ տալ լուծանելոյ զշաբաթ և զկիւրակէս աղուհացից ձիթով, ձկամբ, և կթովք. յորմէ երևի և ենթադրի, եթէ դէթ յաւուրս նորա գտանէր տարաձայնութիւն ինչ յազգին, և չէր ընկալեալ յամենեցուն ։ Ապաքէն եթէ նա էր հովիւ քաջ, իմաստուն, և խաղաղարար, պարտ էր և հարկ իսկ էր նմա 'ի ժողովս անդ համաձայնել զազգ իւր 'ի նոսին ընդ ընդհանուր կաթողիկէ եկեղեցւոյ, և բառնալ զայնչափ գայթագղութիւն, և զնշան հերետիկոսութեան և հերձուածոյ յազգէ անտի իւրմէ, և առնել զխաղաղութիւն և զմիաբանութիւն ընդ կաթողիկէ սբ եկեղեցւոյ յայսպիսի կարևոր ծէսս. և ոչ հաստատել զնոյն հերձուածս, և

կանգնել սահմանաւ զկոխող հակառակութեն և բաժան-ման ազգի խորոյ յընդհանուր եկեղեցւոյ մի չնչին և ան-հիմն պատճառաց ։

Յասացելոց աստի համառօտիւ՝ քաջայայտ երևի, եթէ ոչ խարիս՝, որոց ողջամիտ միտս ունիցին, եթէ 'ի բանից և եթէ 'ի վարդապետական գործոց անուանեալ իմաստասէր Յովհաննու կաթողիկոսի օձնեցւոյ, թէ ոչ եղև նա՝ ոչ իմաստասէր, և ոչ ուղղափառ հայրապետ, այլ ընդ հակառակս յիմար և հերձուածող ։ Այլ քանզի բարոյական վարքն ևս իւր 'ի բազումս զհետ երթան տեսական սկզբանց իւրաքանչիւրոց, զայն ևս ոչ դան-դաղիմք համառօտիւ առաջի դնել ։

Զանց արարեալ զնի՛ փառասէր և մնապարծ բա-նիւքն, և ընթացիւք, զմի միայն զնորա պճնասիրութիւն կամիմ յանդիման առնել ։ Յիրաւի ամաչէի յիշատա-կել · բայց քանզի ոչ ամաչեն այլք, ընդ որս և հայր Սերբայեն Չամչեան, ոչ միայն յիշատակել, այլև ան-պատկառ ջատագով լինել, նմին իրի և ես համարձակիմ զխեղկն յանդիման կացուցանել ։

Այսպէս պճնասիրութիւն 'ի համօրէն սրբոց հարց մեր ազգաց, նա թէ՝ 'ի սբ խոկ գրոց բացայայտ յանդիմանի, և արգելեալ լինի՝ ոչ միայն եկեղեցականաց, այլև համօրէն աշխարհականաց, նա թէ՝ և կանանց իսկ, ըստ Պետրոսի առաքելոյն, որ 'ի կաթողիկեայս ա թուղթն · Գ · 3 · ասէ · *Որոց լիցի ոչ արտաքոյ հիւսիւք, և ոսկեհուռ ծամակալօք, կամ զգենլով պաճուճեալ զգեստու · այլ ծածուկ մարդն սրտին, անեղծութեամբ հեզութեանն և հանդարտութեան հոգւոյն, որ է առաջի Այ մեծապատիւ ։ Արդ՝ ո երբէք, ոչ ասեմ 'ի պատուաւոր եկեղե-ցականաց, այլև յաշխարհականաց իսկ կարգէ՝ յում ազգս և յում դարս լուաւ երբէք, մինչեւ և թա-գաւոր և կայսր իցէ, եթէ 'ի քրիստոնեայս և եթէ յանհաւատս, զմօրուս իւր խուզել ածանել, և ա-կեթել պճնել, և տարապայման իմն փառացի զգենուլ · որպէս առնէր անուանեալ իմաստասէր կ[illegible] ղութի համօրէն ազգին և հեթանոսաց [illegible] կոչել զնա ամբրապետին տաճկաց, և [illegible] Իսկ թէ զինչ աստի ունիցիմք [illegible]

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ [illegible] ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА ИМЕНИ А. МЯСНИКЯНА
В [illegible] XI 1932

'ի քանից անտի սէ գրոց անվրէպ մակաբերեմք. (Առակ. ԺԸ. 26.) *'Ի տեառնէ ճանապարհ այր, եւ 'ի հաւատացելոնէ երկնայ ճանապարհ իմաստութեան։ Ամենայն իմաստութեան, ծառը երկնայ, եւ ճայր իմաստութեան պտուղն ամենայն ‖:

Նաեւ Հայր Անքայէլ համեմատն ընդ խորումն Յովհաննու կաթուղիկոսի պատմչի, եթէ 'ի ներքուստ խարազ զգեցեալ էր, որով 'ի յանդիման լինելն ամիրապետին՝ հիացոյց զնա, եւ չինեաց զմիտս նր: Այլ սքանչելի խարազնազգեաց առնս, եւ ողջամիտ մնաց այսմ Հաւատացողաց. ապաքէն եւ ռամիկք իսկ 'ի Հագարացւոց քաջ գիտեն զառուգութի անշուշտ առակին, զոր եւ հանապազ ունին 'ի բերանի, եթէ՝ Պու սաքալտա հաճի օլմազ. այն է՝ Յայնպիսի մօրուս ոչ լինի մահտեսի, այս է՝ բարեկեցիկ: Աւստի յայտնի ցուցանի, թէ այն խարազնազգեցուի է առն կեղծաւորութի, եւ առժամանակեայ՝ առ պատրելոյ զամիրապետն եւ զերծանելոյ 'ի կշտամբանաց նր, որով յանդիմանէր զնա՝ անմանն լինել գլխովին փարուց խոնարհ եւ աղքատին ՔՍի, եւ աշակերտաց նորին:

Նաեւ Հայր Անքայէլն համեմատն ընդ պատմչին իւրոյ, եթէ արդարացոյց նա զանձն իւր եւ զպճնազարդութի առ ամիրապետին, այնուիկ, զի ՔՍ եւ աշակերտք նր ունէին զշնորհս հրաշագործութե, որովք յարգի եւ պատուելի կացուցանէին զանձինս, եւ զճշմարտուի քարոզութե բանից իւրեանց: Այլ քզի մեք վերջացեալ եմք յայնպիսի շնորհաց, այսպիսի պաճուճանօք յարգի եւ ահարկու կացուցանեմք զանձինս՝ հպատակաց: Այլ սքանչելի նորալուր իմաստութես, եւ գործունեայ միջնորդիւ կառավարութե հովուաց եւ հովուապետաց եկեղեցւոյ. յորմէ զուրկ էին գլխովին հաւօրէն սէ հարք եւ հայրապետք եկեղեցւոյ, եւ հովիւք ժողովրդեան, որք զհետ կառաւակն կալան զշաւիղ, եւ նմին առաջնորդեցին ժողովրդեանն ՔՍի՝ ըստ օրինակի փրկչին մերոյ եւ աշակերտաց նորին. եւ բանք նց առաւել ազդու եղեն քան զսուր երկսայրի, եւ յարգի եղեն առաջի ԱՅ եւ մարդկան 'ի կենդանութե եւ 'ի մահուն մինչեւ ցյաւիտեան: Ապաքէն այդ նորալուր իմաստութի միայն այդպիսի իմաստասէր անուանեալ կեղծիկ վերապահեալ է: Ոչ թէպէտ երբեմն եւ հայ-

դապետք զգենուն զՀանդերձ պարկեշտ և պատուաւոր, այլ զայն առնեն ներելով՝ առ 'ի Համաձայնել Հասարակ սովորութեն երկրին, ուր քաջայայտ է ամենեցուն. այլ ոչ երբէք զանսովոր ինչ և զանպարկեշտ պաճուճանս յանձն առին: Նաև ուր չկայր ինչ Հարկ այնպիսեաց ևս՝ միշտ զՀասարակաց պարկեշտ զգեստս և զգնացս ցուցին:

Ասեմք երկրորդ: 'Ի նախագրելոցս աստի խուսիլի զՀետ գայ և երկրորդ եզրակացութիւն բացասական, եթէ անուանեալ իմաստասէր կթղկսն Յովհաննէս 'ի Յովհաննէ պատմիչ կթղկսէ, և 'ի Հայր Միքայելեն չամչեան, ոչ է նոյն Յովհաննէս իմաստասէր կթղկսն, զորմէ գրեն Գրիգոր կթղկսն, այն Ներսէս շնորհալին, և որն Ներսէս լամբրոնացին:

Այն Յովհաննէս կաթուղիկոս իմաստասէր, զորմէ գրեն մեք, վկայէ Շնորհալին լինել՝ „ Համանմանեալ „ վարուք և վարդապետութեամբ մեծամեծ Հարց մերոց. և „ Համօրէն արտաքին գիտութեանց և ա̃մ իմաստասիրութեան „ քաջ տեղեակ. այլ ա̃ծային վարուցն գնացիւք գերա„ զանցեալ յոյժ քան զբազմօք, չասացից՝ թէ քան զա„ մենեքումբք, որ և գտաւ արժանաւոր 'ի սակս շնորհա„ փայլ վարուցն և վարդապետութեան ելանել և նստիլ „ յայս կաթուղիկոսական աստիճան սրբոյ աթոռոյս „: Նաև ասէ. „ Սորին ա̃ծահաճոյ և երանելի առնս գրուած կայ „ առ իս, զոր գրեաց ընդդէմ մի բնութե̃ն ասողաց, բազ„ մապատիկ վկայութեամբք սր̃ց գրոց, և զօրաւոր փաս„ տիւք և պատճառօք, և մեկին օրինակօք և ապացու„ ցիւք: “

Արդ՝ անշուշտ Հարկ է լինել Յովհաննէս կթղկսի ումեք, որում պատշաճեսցին իրապէս և ճշմարտապէս այս ա̃մ ստորոգելիք և յարանուանութիւնք, եթէ իմաստութեն, և եթէ գերազանցեալ ա̃ծային վարուց. զի որք վկայեն, են ամենեին արժանահաւատ, իմաստունք յարտաքին և յա̃ծային գիտութիւնս, և անստգիւտ վարուք՝ գերազանցեալք, և ս̃րբք, ո̃պ ա̃մ ոք գիտէ: Իսկ Յովհաննէս իմաստասէր անուանեալ կթղկս օձնեցի զուրկ է գլխովին յայսպիսի ստորոգելեաց, ո̃պ վերագոյն գրե-

ցաք, և վկայք նր եւս անգէտք, անիմաստք, և աշանդակիցք նր։ Ապա ոչ է նա։

Իսկ եթէ ո՛ արդեօք իցէ այն Յովհաննէս իմաստասէր վկայեալն 'ի վերոգրեալ սոյն հարց՝ ոչ է մեզ աստէն քննել։ Բայց համառօտիւ և հաւանականագոյնս ըստ մեզ երևելոյ՝

Ասեմք երրորդ, թէ որովհետև 'ի վեց կաթուղիկոսաց անուանելոցն Յովհաննէս (դպրմ. Հայ. հտր. Ա. Եր. 617.) եթէ չիցեն լեալ զայլմէ, ոչ ումեք 'ի նոցանէ տեսանեմք իսկապէս պատշաճեալ զվկայութի վերոգրեալ սոյն հարցդ, բայց եթէ Յովհաննու կաթուղիկոսի Մանդակունւոյ, որ եղև յամի Տն 480։

Քանզի 'ի սմա միայն ներդոյ կատարելապէս, և գերազանց իմն աստիճանաւ և առաւելութբ քան զամենեսեան յարանուանութի առաքական անուանս Իմաստասէր, որ ճշմարտապէս լի էր ամ արտաքին գիտութբ, երկնային իմաստութբ, և հրեշտակային սրբութբ, ոնդ վկայեն առ հասարակ ամ պատմիչք հայոց։ Այլ և բառարանն յատուկ անուանց՝ գրէ այսպէս զնմանէ 'ի բանն Յովհան. „Էր սա լցեալ ամ հոգևոր հանճարով, „և կոչիւր Իմաստասէր, զի եղև քաջ հովիւ, և առա- „ջին՝ որ յօրինեաց Հայաստանեայց աշխարհի զկարգ „աղօթից և երգոց ժամակարգութեց, արար և զճառս, „ևն“։

Այժմ նպաստէ և սոյն Ներսէս Լամբրոնացին յատենաբանութեն իւրում՝ յասելն. „Ո՞ւր իցուք զբանս „Յովհաննու իմաստասիրին և հայրապետին, որ զայս առ „մեզ վկայութբ հարցն սոյն ստուգէ. զԵզրի հայրապե- „տին, և զնորոյ ժողովոյն զհաւանութիւն. զՍահակայ „հայրապետին զհամաձայնութիւն առ մեծ եկեղեցին Հռո- „ոմոց. և զնորին հետևողաց թագաւորացն և վարդա- „պետաց“։ Որ զՅովհաննէս կոչէ իմաստասէրն յառա- ջագոյն դասէ քան զԵզր կաթուղիկոսն և քան զժողովն նր, որ նստաւ յաթոռն կաթուղիկոսութեն յամին 627։

Այլ քանզի ժամանակն նշանակեալ 'ի շնորհալւոյն առ Թէոդորիանեայ գնի երկու հարիւր ամօք յառաջ, որ ոչ պատշաճի և ոչ միում 'ի Յովհաննէս անուանեալ հայրապետաց, յիրաւի համարիմք ը հաւանականագոյն

կարծեաց վրիպակ լինել 'ի թիւն ժամանակագրութ. զո-
րով իմաստութ զանց առնել պարտ է, և հաստատիլ 'ի
գործս ճշմարտութե։ Ապաքէն, որպ կանխաւ նշանակե-
ցաք, այլայլութի ժամանակագրութեց պատմագրաց ոչ
բառնայ զճշմարտութի գործոցն այլուստ ստուգելոց.
զորս է տեսանել 'ի բզմ վարս մարտիրոսաց և յեկեղե-
ցական պատմութիս. որք ըստ պէսպէս պատմագրաց յայլ-
եայլ ժամանակս նշանակին լինել, և ընդ այլեայլ կայ-
սերութ, և այլն։ Իսկ սակայն ճշմարտութի պատմութեց
անշուշտ հաստատի։

Արդ՝ զայս ամ 'ի խոյզ ճշմարտութե եւեթ համա-
ռօտիւ և ըստ գլխաւոր սկզբանց փաստիցն գրեցաք, զանց
արարեալ զաւելորդօքն և զանհիմն բանիւք, ոչ իբր եպե-
րելով զպատմագրութի հայր Միքայելին չամչեանց, որ
քաւ և մի լիցի, զի չեմք այնպէս անտեղեակ, մինչև չգի-
տել զհաստատակաց առածն, եթէ չիք վարդ առանց փշոյ,
և ոչ չամիչ առանց կոթոյ և կորիզոյ. այլ խոհական
մտաց է քաղել զվարդն, և 'ի բաց թողուլ զփուշն. և
ճաշակել զքաղցրութ չամչին, 'ի բաց վանել զկոթն և
զկորիզն։ Գիտեմք, զի են բազումք, որոց ճաշակք չեն
այնչափ ինչ կիրթ, և ստամոքս զօրաւոր, որք զչամիչն
ը կոթոյ և ը կորիզաց մի և երկիցս ծամելով կլանեն և
մարսեն. այլ որոց ճաշակ փոքր մի կիրթ իցէ, և ստա-
մոքս ոչ կարի դիւրամարս, 'ի ծամելն անվրէպ զգան
զդառնութի կոթոյն, զխստութի կեղեւոյն, և զդառնութի
կորիզացն, նմին իրի 'ի բաց վանեն զնս, և զքաղցրութ
չամչին ճաշակեն և մարսեն։ Ուստի յուսամք, եթէ ոչըք
մեղադիր լիցի մեզ 'ի դոյն քննութ խնդրոյս։

# ՔՆՆՈՒԹԻՒՆ

՚Ի վերայ տետրակի, զոր գրեալ է Յովհաննու Օձնեցւոյ, և մեկնութեան ընդ մեկնչէ նորին Մ . Հ . Մկրտիչ վրժպէ Ա-գերեան, տպագրեալ ՚ի Վենետիկ ՚ի ձեռն [illegible] Պողո-յամին 1807 .

Յորում ցուցանէ յայտ յանդիման, թէ ով է այն՝ գիրք, զոր գրեալ է Յովհաննու իմաստասէր հայրապետին վկայեալ ՚ի սրբոց հարց մերոց, և ոչ աղանդաւոր վարդապետութեան հա-մայնոյն վարդապետութեան հաղորդական ընդ եկեղեցւոյ, և [illegible] ընդ ժողովոյն. այլ հերետիկոսական, և մոլար գրեալ է նորին Օձնեցւոյ:

---

## ՆԱԽԱԴՐԱՆՔ.

*Արդարև ողբալի է կուրութիւն մտաց, և չարութիւն կամաց, ընդաբոյս այսր վիճակի ազգի մարդկան: Եւ առաւել ևս եղկելի, և անբերելի ողբոց արժանի այն է, զի փոխանակ փոյթ տանելոյ զցայգ և զցերեկ ՚ի բաց բառնալ զի կարի զմառախլապատ խաւար մտաց, եղյամտութի կամաց իւրեանց լուսով անստերիւր և անայթաք գիտութեն ճշմարտութեն, իբրև զբաղ ականատես զանձինս համարեալ՝ զայլոցն բուռն հարկանեն բառնալ զուղիղ տեսութի, ՚ի դէպ եկեալ անսուտ բանին վկայուն, թէ* Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցիս հանել զշիւղն յականէ եղբօր քո||. (Մատթ. Է 5.) Նա թէ՝ ՚ի ճահ իսկ է ասել զի [illegible] ումեմն, թէ այնպիսիք նորատեսակ իմն կուրուի ախտացեալ. զի զորս ենն՝ ոչ տեսանեն, և զորս ոչն են՝ տեսանեն:*

Նա յիրաւի զառաջնորդին զյանդիմանութիւն՝ որ առ անդէտ քաՀանայն՝ ոչ յանդէպս ինչ մարթ է ձգել առնն. որ ընթեռնուլն զաւետարան յեկեղեցւոջ՝ դու միայն կաս յերուսաղէմ, ընթերցաւ, թէ՝ դդում կայ յերուսաղէմ: Կո՞յր դու՝ ասէ առաջնորդն ցքաՀանայն, զառաջեկդ դու միայնդ ոչ տեսանես, զԵրուսաղեմի դդումն զիա՞րդ տեսեր: Ս. Հ. Անքայէլն չամչեան՝ առ 'ի քննութի և յիմացուած բանից իւրոց, և Օձնեցւոյն իւրոյ՝ խնդրէ նախ ունել դրեթէ զամ գիտութիւ, և զազատական արուեստս, զորմէ գրեցաք յառաջին քննութեան մերում. իսկ աշակերտ նր Ս. Հ. Անտիչն աւգերեան խնդրէ, զի վերծանօղք բանից Օձնեցւոյն իւրեանց՝ 'ի բաց բարձցեն զպաշարումն մտաց, և զյամառութին կամաց առ ուղիղ տեսանելոյ զբանս նր ըն մտաց իւրեանց: Ո՛վ սքանչելի պատգամացս, և քաջաՀնար պատրանացս: Նորանէ թէ զորս այլոց քարոզել կամին, յանձին բերել փոքր մի փորձ տանէին. և կարծեմ՝ եթէ յայսպիսի անտխապատիր խնդիրս, 'ի բանս, և 'ի մեկնութիս նախապաշարեալք ոչ գնգերէին զի մի կրկնեսցի առ նս բանն, թէ * Առ ժողովուրդս չհնազանդ, հակառակս‖. (Հռովմ. Ժ. 21,) և որ 'ի կարգին: Այլ մեր ըն իրաւանց բնութեն անաչառ և անպաշար միօք 'ի քննութի մատուցեալ իրացդ, առաջի դնեմք ամենեցուն, որոց կամք իցեն, և ողջամիտ միտս ունիցին 'ի դատել. բայց միշտ զՀամառօտիցն զՀետ երթեալ բանից, զի ըն առակին, որոց խմանմն՝ ձայնք մեծակայ նուագ, են. իսկ որոց ոչն իմանան, թմբուկ և սրինգ նուաղ են.

·Քննութիւն յառաջաբանութեան Մեկնչին:

Այլ մինչև եմք մտեալ 'ի խնդիր և 'ի քննութիւն բանից Օձնեցւոյն, իրաւունս Համարիմք քննել նախ զյառաջաբանութի Ս. Հ. Անտոնին աւգերեան՝ ջատագովի. և մեկնչի բանից նր:

,,ԱՀա եՀաս ժամ, ասէ, զի փառաւորեսցի այն՝ որ ,,ասացն, զփառաւորիչս իմ փառաւորեցից, և որ արՀա- ,,մարՀէն զիս՝ անարգեսցի:" Նա զինչ արդեօք իցէ նշանակութի բանիցս: ԱՀա կոչեմ առ Հասարակ՝ ոչ զփիլիսոփայս և ոչ զճարտարս, այլ զոսկ Համբակս ենթ քերականութեն 'ի վէճս, թէ զոչ այլ ինչ նշանակեն, բայց եթէ՝

ահա եհաս ժամանակ, զի փառաւորեսցի Այ, և անարգեսցի նա, որ արհամարհէ զԱյ: Ո՛վ յետին անմտութեան, և անիմաստ գրութեան, զի մի՛ տացէք զայլ ինչ. ոչ եթէ զուրկ եկաց ցայսվայր յանկարծուստ փառաց փառաւորեալն 'ի յաւիտեան: Բայց բարեմտութի համարիմք, եթէ չէ պարտ նշամարել աստ 'ի հայեցուած շրջան, այլ 'ի ցոյց ձեռացն, այն է՝ 'ի գիտաւորութի նր, իբրզի կամք են նմ՛ ասել, եթէ ահա եհաս ժամ, զի կատարեսցի բանն Այ և 'ի վր Օձնեցւոյն, թէ զփառաւորիչս իմ փառաւորեցից. են: „Զի որ սքանչելին է, ածէ 'ի վր, 'ի „նրս իւր, և պահէ զամ ոսկերս նց, մինչև չկործանելոյ „և ոչ միոյ 'ի նոցանէ, նոյն պահեաց ակն յանդիման „տիեզերաց զյաւերժական յիշատակաց արժանի զհայ„րապետն մեր Յովհան իմաստասէր օձնեցի 'ի բազմա„պատիկ բանդաստանաց“: Եւ զինչ արդեօք պահեաց, որ պահէն զամ ոսկերս սրց իւրոց, զՅովհան օձնեցիդ, 'ի կենդանութեն, թէ 'ի մահուան: Ապաքէն ոչ 'ի կենդանութեն. զի 'ի հաւատոց զերկուս միայն գիտեմք պահել կենդանիս, զԵնովք, և զԵղիա, 'ի վկայութի սրբմարտութեն 'ի ժամանակս նեռին: Եւ ոչ իսկ յետ մահուան զամբողջ ոսկերս նր, և կա՛ զմարմին, մինչև ոչ կործչելոյ և ոչ միոյ 'ի նոցանէ. և զայն ակն յանդիման տիեզերաց: Եւ ո՞ր արդեօք իցեն այդ ոսկերք, կա՛ մարմին Օձնեցւոյդ, որ սքանչելագործութ և հրաշիւք փառաւորի, և փառաւորէ զԱյ ակն յանդիման տիեզերաց. զի ահա այս է հարազատ հետեւութի յառաջ բերեալ վկայութեդ նր գրոց: Եւ սակայն մեք եւս գոլով 'ի տիեզերս, թէպէտ և յանկեան միում, ոչ ունելով զտեղեկութի ընդհանուր տիեզերաց՝ ոչ զձեզ. բայց գոլով և մեր մերձաւոր, և ազգային, գէթ զուր ինչ առնուաք զնր:

Այլ գիտեմ, զի ասես, թէ ըէր ոչ միտ դնես բանիցս. զի ասացաք, թէ պահեաց զՕձնեցին մեր 'ի բանդաստանաց: Այլ խնդրեմ ներել ∴. Պատճառան, զի չէ այժմուս խնդիր, թէ զերծաւ նա 'ի բանդաստանաց՝ թէ ոչ, զորմէ քննեսցուք ստորև:

Ոչ երբեք տեսաք, կամ ընթերցաք 'ի բանս վարդապետաց, և մեկնչաց նր գրոց զայդպիսի հետեւութի վկայութեց սր գրոց: Այսթէ և զամենեսին անդէպ և

զտարապայման նմանութիւն զանբերելին ողջամիտ լսելեաց՝ համեմատել զթերթս ինչ մատենագրի ուրուք պահել զքանչելեօք յԱ.Յ, իբրև զնշխարս և զմասունս սրց, ը մկայութեանց յառաջբերելոց: Ապաքէն ոչ զթերթս, այլև զամբողջ մատեանս տեսանեմք պահեալս զբազում դարս, ոչ միայն հերեսիովտապետաց, այլև զանհաւատից, զորս արժան էր յիրաւի հուրբ դատել. այլ սակայն ուղղք յողջամիտ մարդկանէ համայն զնս իբրև զմարմինս և զոսկերս նոյուն պահեալ զքանչելեօք. իսկ եթէ ոչ այսպէս, այլ՝ այլազգ ինչ կամեսցիս մեկնել. նոյն լինէր, եթէ ասէիր ը առակին. ես ասեմ էշ, և դու խմասցիր զգոմէշ: Այլ թողեալ զայլ մանրակրկիտ քննութ բանից յառաջաբանութեանդ առ համառօտութն, որք գրեթէ 'ի նոյն ալեբէ են զանգեալ ամ. զայս մի ինչ եսկարևոր համարիմք քննել: Ասես, թէ Ա.Ծ փառաւորեաց այժմ զՕծնեցիդ, և արհամարհեաց զարհամարհիչսն: Այլ խնդրեմք, թէ որպիսի փառօք արդեօք փառաւորեաց զնա, յաւիտենական փառօք 'ի յերկինս, եթէ ժամանակաւորօք 'ի յերկրի: Զյաւիտենական փառսն՝ կարծեմք, եթէ ոչ յանդգնիք համարձակ հաստատել. զի այն մի միայն անսխալ կանոն և դատաւոր այսպիսեաց՝ է հռովմէական կաթողիկէ սուրբ Եկեղեցին, և ծայրագոյն Քահանայապետ նորա. թէպէտ և ուրեք ուրեք եթէ ուղղակի՝ և եթէ անուղղակի, եթէ միջնորդութբ՝ և եթէ անընդմիջապէս յայսպիսիս թևակոխել անխիղճ տեսանեմք զձեզ: Իսկ եթէ ժամանակաւոր փառօք, ապաքէն յայտ յանդիման տեսես: Զի Օծնեցին ձեր իբրև դքաջ ախոյեան, և ջատագով միաբնակաց և հակառակամարտ Քաղկեդոնի ըստ ժողովոյն, այնպէս փառաւորի 'ի համախոհից իւրոց 'ի սկզբանէ մինչև ցայժմ, մինչև 'ի կարգս սրց դասել զնա, և զտօն նր ամի ամի կատարել. և յուղղափառաց ևեթ լինէր անարգել: Իսկ այժմ 'ի սուտ դրութէ ձերմէ ապաքէն հարկաւ հետևի կորուսանել նմ զփառս իւր ժամանակաւոր՝ զոր ունէր առ համախոհս իւր. զի ոչ ևս էր այնպիսի, որպէս կարծէին, և մն որոյ փառաւորէին զնա, եթէ հաւատացեն բանից ձերոց: Իսկ յուղղափառաց՝ որպէս էրն անարգել, նոյնպէս միշտ մնայ անարգեալ ըստ արժանեաց. զի ուղղք յողջա-

մտաց՝ բաց՚ի տխմարաց՝ հաւատս ընծայէ անհիմն, և անիմաստ բանից ձերոց ։

Այլ գիտեմ, և կարի իսկ քաջ, զի անդէն վաղվաղակի յառնես ՚ի վր, և զաղաղակ բառնաս ընդդէմ գրութեանս ։ Մի՛ դու՝ զի՞նչ խօսիս, ասես. ո՞չ ապաքէն այս ճառ հայրապետին մերոյ Օձնեցւոյ է ուղղափառական. ո՞չ սա է ջախջախիչ գլխահար անգլուխ աղանդաւորաց, թշնամեաց ապեմ ժողովոյն Քաղկեդոնի. ո՞չ աւանիկ է օքանչելի ապացոյց ուղղմտութեան, և ուղղափառութեան հեղինակի նր, այլև վերջին ապացոյց և պսակիչ հաստահիմն ցուցակութեանց ÷. Մինքայէլ վրդպի չամչեան ՚ի կարգի պատմութեն հայոց ։ Մի՞ ապաքէն վկայեն սմա նախնիք մեր որն ՝Ներսէս կլայեցին, որն ՝Ներսէս լամբրոնացին, և որք ՚ի կարգին. զի սա է արդարև գանձն ծածկեալ յագարակի, զոր յաջողուի Տն գտաք ։ Եւ որ մեծն է քան զամ, բաղդատեալ արդեօք զայն ը սկզբնագիր տումարի որյն Լևոնի, և սահմանի որ ժողովյն Քաղկեդոնի, և տեսցես, թէ զիարդ միաձայնի ը նոսին վարդապետութիս այս իմաստասիրին։ Արդ՝ զիարդ դիմամարտիս դու այսպիսի, և այսչափ ապացուցութեանց ։

Այլ խնդրեմ ÷. պատուական փոքր մի հանդարտիլ, և մի՛ ամբոխեր զատեան դատաստանի անաչառ քննութեն, և ճշմարտութեն, ը հագարացւոյն առածի, թէ „Անհքէմէի պամա„ ։ Մի՛ առներ զեղծումն սկզբան ը տրամաբանից ասութեն. այսէ՝ զցուցանելի սկիզբն ենթադրեալ իբրև զցուցեալ սկիզբն՝ ձեռնարկել անտի յայլս ։

Միամիտ տիրացու ոմն ուղղափառ մարզեալ ՚ի մանկութէ, թէ Քս ունի զերկու բնութիս, համարէր, թէ ուր ուրեք գտանի ՚ի գիրս հայոց մի բնութի, պարտ է ասել զերկու ։ Այդ յաւուրս աղուհացից յերգելն յարևագալին զերգս Շնորհալւոյն՝ „Այ եք անձինք, և մի բնութի, մի ածութի“, երգէր. Երեք անձինք, երկու բնութի, միածութի ։ Նա ՚ի կշտամբելն զնա ուղղափառ ժողովրդապետին, թէ զէ՞ ասես երկու բնութի, ասէ, միթէ Քս ոչ ունի զերկու բնութիս. ոչ իմացեալ տգիտին, թէ ոչ է այն երգ ՚ի վր բնութեանցն Քի, այլ ՚ի վր Երրորդութե ։ Բստ սմին օրինակի տեսեալ քո՝ բայց մի ինչ ծանր թուեսցի աղաչեմ, թէ Օձնեցին ձեր խօսի ՚ի ճառի անդ զերկու

բնութեանն՝ որ ՚ի Ք․ս, համարիք՝ եթէ նա խօսի զերկուց բնութեանց Ք․սի ՚ի մի դէմս ընդ ուղղափառ դաւանութեան հաւատոց Քաղկեդոնի սբ ժողովոյն. ևն․ Իսկ զայս սկիզբն և զմիջնորդութի, զոր նախ պարտիք ցուցանել, իբրև զցուցեալ ապացուցութի ենթադրեալ, կուտակէք ՚ի վր նր զանդէպ հետևութիս, և զկեղծուպատիր ձեռնարկութիւնս:

Այլ հարկ է մեզ նախ՝ քննել անպաչառ միօք ընդ խրատու ձերում, թէ արդեօք այս ճառ իցէ ուղղափառ վարդապետութի Քաղկեդոնի նր ժողովոյն, որ ՚ի վր միոյ անձին, և երկու բնութեանց Ք․սի: Իսկ ընդ հետևորդի, թէ արդեօք հեղինակն սորա իցէ նոյն Յովհան իմաստասէր հայրապետն, զորմէ վկայեն նախնիք մեր նրն Ներսէս շնորհալին, և նրն Ներսէս Լամբրօնացին, և այլք, եթէ Յովհան օձնեցին, զորմէ գրէ Յովհաննէս կաթուղիկոս պատմիչն, և դուք: Առ որոյ քաջ իմացուած՝

Նախագիտելիք առ ճանաչելի բանից Օձնեցւոյն:

Գիտել արժան է: Նախ՝ զի ՚ի վր մարդեղութեն Ք․սի եղեն պէսպէս հերետիկոսութիք, զորս մարթ է յերիս դասս վերածել ընդ օրէն Թովմայի հռչակաւորին Վարդապետի:

Նախ՝ ՚ի վր ծնութեն Ք․սի, զոր բազումք ուրացան, որպ Կերինթոս, Եբիոն, Պօղոս սամոստացի, փոտինոս, և այլք:

Երկրորդ՝ ՚ի վր մարդկութեն Ք․սի, զոր ուրացան Մարկիոնեանք և Մանիքեցիք, որք վնզի ասէին, թէ ամ մարմնաւոր արարածք են ՚ի չար Այ․ կմ ՚ի սատանայէ, ընդ նմին և ուրանային թէ Որդին Այ էառ զճշմարիտ մարմին. այլ միայն՝ ասէին՝ էառ զկեղծիքական՝ և զառաչօք. և զամ զվերաբերեալսն առ մրդկային բնութիւն Ք․սի ոչ ընդունէին լինել ճշմարտապէս, այլ առաչօք: Յոր վերածի և մոլորութի Ապօղինարի, որ ասէր, թէ՝ թէպէտ և Ք․ս էառ զմարմին ՚ի կուսէն, այլ առանց հոգւոյ. և յետոյ փոքր մի մեղմեալ՝ ասէր, թէ՝ թէպէտ և էառ զհոգի, բայց առանց մտաց, և Բանն Այ էր նմ ՚ի տեղի մտաց: Յայս վերաբերի և Վաղենտիայն, որ թէպէտ խոստովանէր ունել Ք․սի զճշմարիտ մարմին, բայց ոչ զադամայինն առեալ յԱ․ծածնէն, այլ յերկնից բերեալ և ընդ կոյսն Մարիամ իբրև ընդ խողովակ անցեալ:

'Ի սոյն վերագրի և հերձուածն միակամողականնից, որք ուրանային զմարդկային կամս Քսի, և միայն զածայինն խոստովանէին:

Եւ երրորդ՝ 'ի վն միաւորումն մարդկութեն և ածութեն Քսի, յորոց վն բազումք բազմօրինակ մոլորեցան:

Նեստոր դնէր զշնորհական միաւորութի 'ի մէջ մարդոյն Քսի և Բանին Այ. ուստի և բաժանեաց զՔս յերկուս անձինս և յերկուս բնութիս, վսյ և զսբ. կոյսն ոչ Ածածին, այլ Քսածին միայն անուանէր, որ և դատապարտեցաւ յերրորդ ընդհանուր ժողովն Եփեսոսի:

Ընդ հակառակս սորա Եւտիքէս յիմար հերեսիովտապետն եդ զմի անձն և զմի բնութի 'ի Քս, բաղկացեալ յերկուց յառաջագոյն եղելոց բնութեանցն, յածայնոյն և 'ի մարդկայնոյն: Եւ զայս մի անձն և զմի բնութի 'ի Քս եթէ նա ինքն Եւտիքէս, և եթէ հետևողքն աղանդոյ նր՝ որք 'ի պէսպէս ճիւղս բաժանեցան, բազմօրինակ իմացան և ամենեքեան եւս մոլորեցան:

Նախ՝ նա ինքն Եւտիքէս, էր՝ զի ասէր ուրեք խառնումն և շփոթումն երկուց բնութեանցն 'ի մի ինչ երրորդ բնութի 'ի Քս կորուսմամբ երկոցունց եւս յատկութեանց բնութեանցն. և էր՝ զի ասէր ուրեք ընկղմամբ և փոխարկմամբ միոյն 'ի միւսն, այս է՝ մարդկութեն յածութի, որպ կաթիլ մի գինւոյ 'ի ծով ընկղմեալ և փոխարկեալ 'ի ջուր:

Երկրորդ՝ այսմ կարծեաց առաւել ջատագով եկաց Պետրոս կնաբեցին կամ Թափիչն, և հետևողք նր, որք ասէին, թէ մարդկային բնութին Քսի ընկղմել յածային բնութին, Քս ածային բնութբն չարչարեցաւ, խաչեցաւ, մեռաւ, ևն. ուստի և ածաչարչար անուանեցան:

Երրորդ՝ այլք առաւել եւս մեղմագոյնք՝ խորշեցեալ 'ի խառնմանց և 'ի շփոթմանց երկուց բնութեանցն 'ի Քս, միանգամայն և յընկղմելոյ մարդկային բնութեն յածային բնութին 'ի Քս, յորմէ հարկաւ հետևէր չարչարիլ Քսի ածային բնութին ըստ կնաբեցւոյն կմ՝ ըստ Թափչին, եդին զմի բնութի 'ի Քս՝ միաւորել յերկուց բնութեանցն յածայնոյն և 'ի մարդկայնոյն անշփոթ և անխառն միաւորութբ՝ մնալով յատկութեանց երկաքանչիւր բնութեանցն եւս 'ի Քս: Եւ զայս միաւորեալ մի բնութի է ուրեք, զի բացատրեն իբրև զմի հաւաքական միաւորութի, որպ շեղջն 'ի բազում ցորենոյ,

և հօտն 'ի բաղում խաշանց. և է ուրեք, և իբր 'ի բազում՝ զի հաստատեն, լինել միաւորութիւն յերկուց բնութեանցն 'ի Քրիստոս, իբրև յերկուց կիսակատար էակաց բաղադրել մի բնութիւն Քրիստոսի, իբր օրինակի հոգւոյ և մարմնոյ, զոր բազում անգամ 'ի մէջ բերեն, որք կացուցանեն զմի բնութիւն և զմի անձն մարդկային՝ անշփոթ և անխառն մնալով յատկութեանց երկաքանչիւրոցն: Այս աղանդ եղև Դիոսկորոսեանց, Սևորւոց կոչեցելոցն Յակոբիկ. յորոց պատրեալ ընկալան և Հայք:

Գիտել պարտ է երկրորդ՝ զի ազգն Հայոց՝ զորմէ գլխաւորաբար խօսիմք աստանօր, ոչ երբէք մոլորեցաւ 'ի վերայ Ածութեան Քրիստոսի: Ըստ որում և նզովեն զԿերինթոս, զԷբիոն, զՊօղոս Սամոսատացին, զՓոտինոս, և զամ հետեւօղս նց:

Գիտել պարտ է երրորդ՝ զի ազգն Հայոց նոյնպէս ոչ երբէք մոլորեցաւ 'ի վերայ ճշմարիտ մարդկութեան Քրիստոսի իբր համօրէն տարածութեան աղանդաւորաց, որ 'ի վերայ նորա, և իբր ազգի ազգի դրութեանց նոցին. այլ ընդ ուղղափառ կաթուղիկէ եկեղեցւոյ խոստովանի միշտ, թէ էառ Բանն Աստուած զճշմարիտ մարմին մարդկային, և զբնութիւն մարդկային, և թէ էառ զմարմին ադամային 'ի Մարիամայ սրբոյ կուսէն, ընդ նմին և զհոգի, և զմիտս մարդկային, և զամ՝ որ ինչ է 'ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծեօք՝ բաց 'ի մեղաց. նմին իրի և նզովեն զամ աղանդաւորս սոյին կարծեաց՝ զՄանիքեցիս, զՄարկիոնեանս, զԱպողինար, զՎաղենտինոս, զմիակամադաւանս, զառաջօքադաւանս, և առ հասարակ զամ աղանդապետս և զաղանդաւորս այսց հերետիկոսութեանց: Թողումք զմանաւոր անձինս, որք ուրեք ուրեք գտան 'ի նս: Այլ և բազում վարդապետք 'ի նս ընդ ժամանակս ժամանակս ընդդէմ գրեցին սոցին աղանդաւորաց, յորոց մի է և Յովհան Օձնեցին, որ զայս տետրակ գրեաց՝ (սակայն եթէ իցէ բոլորին իւր գրուն, և ոչ յայլոց առեալ, զորմէ գրեսցուք ստորև.) ընդդէմ երևութականաց, այս է առաջօքադաւանից:

Գիտել պարտ է չորրորդ, զի իբր նմին օրինակի ազգն Հայոց ոչ երբէք ընկալաւ զաղանդն Եւտիքեայ, որ դնէր զմի անձն և զմի բնութիւն 'ի Քրիստոս խառնմամբ և շփոթութեամբ բնութեանցն, և կամ ընկղմամբ կամ փոխարկմամբ մարդկութեան յԱծութիւն: Ըստ որում և նզովեն զԵւտիքէս և զհամախոհսն

յայտոսիկ կարծիս: Այլ սահեցան միայն յաղանդն Ասոր-ւոց Յակոբիկ անուանելոց, ոպ վերագոյնդ յիշատակե-ցաք:

Զայս ամ ապաքէն քաջայայտ ցուցանեն համօրէն պաշտամունք և դաւանութիք հայաստանեայց Եկեղեցւոյ, և վկայութիք բովանդակ ընդ հարց նը, զորս աստէն յիշա-տակել զամ յանհնարից է, և աւելորդ իմն համարիմք, վս յայտնի լինելոյն ամենեցուն: Այս սակաւք շատասցին: 'Ի հանգանակին հաւատոյ, զոր երգեն միշտ յեկեղեցին՝ ասեն. „Հաւատամք... յՈրդին Այ... իջեալ յերկ-„նից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի „Մարիամայ ընդ կուսէն Հոգւով սրբով, որով էառ „զմարմին զհոգի և զմիտս, և զամ որ ինչ է 'ի մարդ „ճշմարտապէս և ոչ կարծեօք, չարչարեալ, խաչեալ," ևն: Եւ 'ի պատարագամատուցին ասի զՔսէ. „Միա-„պարհորդեցաւ ամ կիրս մարդկային կենցաղոյս առանց „մեղաց:" Եւ 'ի շարականոցին 'ի կանոն աւագ ուրբաթու ասի. „Կոչեալ յերկիւղ՝ քրոանց հոսման, ոլոռնաձև՝ „կայլակ վիժման... զի կատարեալ՝ էառ զմնութի, Ածն „Բան՝ զմ֊կուն, պարտ էր զերկիւղ՝ և զտրտմութի, յերումն „կրել՝ անօրէնութեն: Զաւագայթ՝ փառաց էին, որ ը „բնութեա մարմնային, տագնապեցար՝ 'ի գիշերին": Եւ ևս „Քարոզի 'ի պրանչելեաց, Ած մարմնով՝ վս իմ խաչեալ, „մեռով բնութբս մեռանի, Ած անմահ՝ խոստովանի:" Եւ յենդ կիւրակէի աղուհացից ասի. „Որ առաքեցար 'ի „հայրական ծոցոյ ծածկեալ խորհուրդ ը հօր յաւիտեան, „և առեր մարմին զմեղուցելոյ նախաստեղծին յանարա-„կան կուսէն:" Եւ 'ի կարգս յարութ շարականաց՝ գկ. „Զաստուածային զգեցեր մարմին 'ի քառանկիւն սեղան խա-„չին բարձրացեալ:" Եւ այլ բազում սոյին նման:

Եւ արդ՝ զայս ամ եդեալ և ցուցեալ, խնդիրն ան-կանի 'ի վը երկուց բնութեանցն Քսի միաւորելոց 'ի մի անձն Բանին Այ:

Եւ քանզի ուղղափառ վրդպտի կաթողիկէ հռով-մէական ընդ Եկեղեցւոյ, և Քաղկեդոնին ընդ ժողովոյն, և տումարի ընդյն Լևոնի ծայրագոյն քահանայապետի սահ-մանէ և հաստատէ՝ խոստովանիլ 'ի Քս զմի անձն բա-նին՝ ենթակայացեալ յերկուս կատարեալ բնութիս յածային,

և 'ի մարդկային անշփոթ և անխախտ միաւորելոյ, իբրև զհնիք ուղղափառ հաւատոյ. և զնմ հակառակորդս՝ որք ասեն զմի բնութի 'ի Ք.ս, որով եղանակաւ և իցէ, արգելու և դատապարտէ: Եւ զի ազգն Հայոց ընդ մեծի մասին՝ ոպ վերագոյնդ յիշատակեցաք, պատրեալ յԱսորւոց, եդին 'ի Ք.ս զմի անձն և զմի բնութի, ընդ իմացուածոյն, զոր բացատրեցաք 'ի վերոյ յիրդ կարծիս աղանդոյն Եւտիքեանց, որով և որոշեցան 'ի կաթողիկէ սբ Եկեղեցւոյն և 'ի Քաղկեդոնին սբ ժողովյն:

### Քննութիւն բանից Օձնեցւոյն:

Խնդրեմք նախ՝ ասա, թէ արդեօք այս տետրակ կմ գրութի անուանեալ Յովհաննու իմաստասիրի Օձնեցւոյ իցէ ուղղափառ վարդապետութեն Քաղկեդոնեան սբ ժողովյն, և Հռովմէական կաթողիկէ սբ Եկեղեցւոյն, թէ ընդ հակառակն: Եւ երկդ՝ ընդ հետևորդի, թէ արդեօք այս գրութի իցէ այն գիրքն Յովհաննու հայրապետին իմաստասիրի, զոր կոչեն 'ի վկայութի ուղղափառ դաւանութեն երկուց բնութեանցն 'ի Ք.ս, որն Ներսէս կլայեցին, որն Ներսէս լամբրոնացին, և այլք: Այո՝

### Լուծումն առաջին խնդրոյն:

Ասեմք նախ՝ թէ այս վարդապետութի կամ գրութի Յովհաննու Օձնեցւոյն գլխաւորաբար և ուղղակի է ընդդէմ ասողացն զմի բնութի 'ի Ք.ս, ընդ երևութականաց, կամ ընդ առաջօրդաւանից, այս է՝ ընդդէմ նց, որք ուրանային զճշմարիտ մարդկութին Ք.սի, և դնէին զմի բնութի աստուածային, ևն. ոպ 'ի վերոյ յիշատակեցաք:

Եզրակացութիս չունի ինչ պէտս ցուցման. քանզի որք միանգամ գէթ հարևանցի յակն արկանեն զայս գրութի նր, ապաքէն քաջայայտ տեսանեն զստուգութի զրուցս. թէպէտ և խառնիխուռն, յանդէպս, և անհեթեթ գրէ զայն: Այլ 'ի վր այսր ամի ցուցանի ծաղկաքաղ և համառօտիւ 'ի գրութե նր:

Նախ՝ 'ի մակագրութե նորին, որ է „Ճառ ընդդէմ „երևութականաց", ընդ առաջօրդաւանից. ոպ և խոս„տովանի նոյն իսկ տարապայման մեկնիչն նր Հ. Մկրտիչն Աւգերեան յերեսն 1. ծանօթ. 2. յասելն, „Յայտ է

„՚ի խորագրէս, և ՚ի բովանդակ ընթացից ճառիս, զի
„իմաստասէրն խօսի ընդդէմ երևութականաց, կ՚ամ առ
„աչօք առողաց զանօրէնութի Բանին մարմնացելոյ„. ևն։

Երկրորդ՝ նա ինքն Օձնեցին զկնի անդէպ փոքր յառաջաբանութեն՝ ասէ յերեսն 3. և 4. „Քանզի այն-
„քան նորբեն և նոճաղեցուցանեն նք՝ զորոց բանս է, որ
„վ՟ Ք՟սի մարմնոյն մտածութիք և ճառք, մինչ զի առ-
„աչս երևումն կարծիս արկանել մարմնացելոյ բանին, որ-
„քան ՚ի զօրումն բանից նց ՚ի միտ առնուլ է. քանզի զամե-
„նայնսն ՚ի Ք՟ս է՟ մարմնոյն կիրս՝ ոչ առնուն յանձն
„ասել է՟ մարմնոյ և կ՚ամ մարմնով, զի մի՛ երկուց ասեն
„ակնարկումն տայցեմք բնութեց ՚ի մին Ք՟ս. այլ ինքն
„իսկ Բանն Ա՟ծ էր՝ որ է՟ երկոսին անցանէր ասեն, է՟
„մարդկայինսն և աստուածայինսն։ Զարմանամ ընդ այն-
„պիսի կեղակարծ և գայթիգայթ խոստովանութի. եթէ
„անմարմնապէս զմարմնականսն կարելի էր կրել Ք՟սի,
„էէ՞ր և մարմին զգեցաւ ՚ի կուսէն՝ իննամսեայ ժամանակաւ
„յղացութբ, և ծննդեամբ յառաջ եկեալ՝ երևեցաւ
„տղայ„. ևն։

Յերեսն 5. ասէ. „Այլ և ոչ ՚ի կուսէն ասեն
„մարմնանալ, այլ ՚ի կուսին. զի մի արդեօք ՚ի կուսէն
„ասելով, զմերս յիշեցուցեն ՚ի ներքս ածիցեն բնութի։
„Իսկ ՚ի կուսին ասացեալ՝ ինքն ապա ասեն Բանն Ա՟ծ
„մարմնացեալ լինի յարգանդի կուսին։ Ըստ բնութն
„զմարմնանալս տայք Բանին, հարցանեմ զձեզ, եթէ է՟
„առ ինքն զառ ՚ի մէնջ միաւորելոյ։ Եթէ յիւրն ընկա-
„լաւ զայս գոյացութի, լուծանեալ եղև յայնմանէ՝ յո-
„րում էրն, ՚ի նանիր է և յոյս փրկութե մերոյ։ Բայց
„կարծեմ՝ զայլ ինչ երկնել մտաց ձերոց այսպէս կեղ-
„ծաւորելովդ։ Զինչ արասցես և զՀրեշտակապետին
„ձայն՝ որ ՚ի քէն ծնանելոցդ է ասէ, և ոչ թէ որ ՚ի
„քեզ“. ևն։

Յերեսն 17. ասէ. „Բայց սակայն և զայս լսեմք ՚ի
„ձէնջ ասացեալ. մի բնութի զա՟ծայինն իսկ ասեմ, զոր
„՚ի Հօրէ ունէր զիւր զխնկական բնութիւն. զի ոչ ասի
„յարարածականացս որք բնութի. քանզի արարչականն
„ասի միայն բնուի. իսկ զմարմինն՝ մարմին Ք՟սի ասեմք,
„և ոչ բնուի Ք՟սի։ փախչիս ՚ի բնութենդ անուանէ, է՟

„նմին և յերկուցդ ասելոյ. և ոչ գիտես, թէ մարմին
„ասելով՝ յերկուսին 'ի ներքս ըմբռնիս յորոց փախ-
„չիսդ: Արդ զնոյն՝ որովք բարեպաշտելդ կարծես, հա-
„կառակ ընդդէմ քեզ եդիր: Զմարմինն՝ մարմին Բա-
„նին ասելով, և զԲանն ասացեալ մարմին ունել,
„զի՞նչ այլ ինչ թուիցիս ասել, եթէ ոչ կրկին: Նոյն
„դարձեալ զԲանն 'ի Հօրէ ասելով զՀօրն տացես նմա
„զբնութի. իսկ զմարմինն 'ի մարդկանէ ասելով զպր ու-
„նել ասես նմա բնութի, եթէ ոչ զմարդկութ: Բայց կար-
„ծեմ թէ կամիք և ոչ մարմին Քրիստոսի ասել. զի թէ
„զմարմինն ճշմարտութեամբ խոստովանէիք ունել Քրիստոսի, և
„զայն 'ի մարդկանէ և մրդկային, զնոյն և բնութի մրդկային ոչ
„արդեօք խղճէիք ասել: Քանզի նոյն է մարմին մարդ-
„կային ունել Քրիստոսի, և բնութի մարդկային. և Քրիստոս ա-
„ռանց միաւորութեն ոչ ասի Քրիստոս Յիսուս, այլ Մարդ Բան:
„Նոյն Տէր Բասիլիոս ասէ. Զի թէ ասիցէ ոք զմարմին
„բնութեն Բանին, և զԲանն բնութեն մարմնոյն, ամպա-
„րշտութեամբ լի է այսպէս ասացեալքն": Այնպէս և
զկնի:

Նոյն յերեսն 31. ասէ. „Արդ՝ այսպէս բազմեր-
„ջանիկ հարանցն անորոշաբար յիշել 'ի մի՜ մի յ Քրիստոսի.
„ոչ առ 'ի բաժանել զմին Քրիստոս յերկուս դէմս, կամ
„յերկուս որդիս. քաւ լիցի. այլ զառաւելագոյն առ-
„տուստ զամփութի առ ճշմարտութի հաւատոյն տնտեսել
„կամեցեալք. միանգամայն թէ և զչարափառացն տա-
„պաստ արկանել խումբս. որք ի ձեռն մին ասելոյն
„Քրիստոսի բնութեն՝ ուրանային զանսուտ նր մարդեղութեն
„խորհուրդ: Զվերջինն Եւտիքէս, որ ոչ համագոյական
„կուսին դժոխաբանէր զմարմինն Քրիստոսի, և մի բնութի:
„Զառաջինն Եւտիքէս, որ յերկնից և անստացական
„ասէր զմարմինն Քրիստոսի, և մի բնութի: ԶՎաղենտիանոս
„և զՄանի, որ կարծեօք ասացին զերևումն Քրիստոսի, և մի
„բնութի: Զապողինար և զՍոփրոնիոս և զՅուլիանէ, որ
„կիսաբաժ և ոչ կատարեալ զմերս ասացին բնութի
„առեալ Բանին 'ի կուսէն, և մի բնութի: Զեւնոմիոս
„և զԱրիոս, որ զանեղանելի արարած ընդ եղանելի արա-
„րածոյ շարակարգեալ ասաց զԲանն ընդ մարմնոյն, և
„մի բնութի: Ոչ հեռի 'ի սոցանէ և զքրդ կարծեմ ա-

,,սեղ մի բնութիւն. որ առ վասանդի խոստանդանաց՝ մարմ֊
,,նանալ սուրբ Ա.յն Բանի. և յորժամ իցէ մարմինն,
,,զայն ուրանաս:"

Զայս ամ ունիս տեսանել և յորս զկնի 'ի բովան֊դակ թուղթս նր. այս է՝ թէ 'ի Ք.ս գտանին բնական բնութիւնք՝ աստուածային և մարդկային, կամ թէ Ք.ս է յեր֊կուց բնութեանց միաւորեալ՝ յաստուածայնոյն և 'ի մարդկայնոյն. և ոչ է մի բնութիւն՝ կամ սոսկ աստուածային, կամ սոսկ մարդ֊կային, կամ մարմին. կամ մարդկայնոյն փոխեալ յաստ֊ուածութիւն, և աստուածային բնութեան առ երևոյթ և ենթ ձևա֊ցեալ 'ի կուսին, կամ աստուածային բնութեան կիսակատար առեալ զմարդկային բնութիւն՝ առանց հոգւոյ և մտաց՝ են, և յորս 'ի սոցին սակի. զոր առ համառօտն զանց առնեմք ասելն մի առ մի նշանակել. և քաջայայտնիկ է որոց միանգամ յակն արկանեն զգրութիւն նր:

Եւ արդ՝ եկեալ զայսոսիկ, 'ի վ՛ր այսր ամի՝

Ասեմք երկրորդ, թէ այս գրութիւն անուա֊նեալդ Յուլեանոս իմաստասիրի ընծնեցեալ է մոլո֊րական, և ուսուցանէ բացայայտ զաղանդն Յակոբիկ անուանեալ Ասորւոց, ընդ նմին և զ֊ւոյց միայնակ անուանելոց, զոր և 'ի չարաժողովն խրում Անտաղ֊կերտի հաստատեաց, դնելով 'ի Ք.ս զմի բնութիւն յերկուց բնութեանց միաւորելոց, ընդդէմ ուղղափառ հաւատոյ կաթողիկէ ս՛բ եկեղեցւոյ և Քաղկեդոնի ս՛բ ժողովոյն, որ սահմանէ խոստովանիլ 'ի Ք.ս զմի անձն յերկուս բնութիւնս անշփոթ և անխառն միաւո֊րեալս ենթակայացեալ. թող զայլ մոլար և զհերետիկոսա֊կան նախադասութիւնս սփռեալս 'ի նմա, զորս նշանակես֊ցուք ստորև 'ի ցուցանելն, թէ ոչ է այս գործ Յուլեանոս իմաստասէր հայրապետի, վկայելոյ 'ի սր՛ց հարց մերոց 'ի Ներսիսէ շնորհալւոյն, 'ի Ներսէսէ Լամբրոնացւոյն. են:

Ցուցանի: Ընդհանուր կաթողիկէ ս՛բ եկեղեցին, և Քաղկեդոնին ս՛բ ժողովն արգելու բացարձակապէս առել զմի բնութիւն 'ի Ք.ս կամ Ք.սի, որով եղանակաւ և իցէ, եթէ խառնմամբ, և եթէ փոխարկմամբ, եթէ շփոթութբ, և եթէ անշփոթ, եթէ բաղադրութբ, և եթէ համաքմամբ, են, ըս վերադրոյն ասացելոցդ: Իսկ արդ՝ այս գրութիւն Յուլեանոս անուանեալ իմաստասիրին, դնէ

բացայայտ զմի բնութիւն Քնի յերկուց բնութեանց անշփոթ միաւորելոց, զոր և կոչէ ուրեք ուրեք „երկախումբ բնութիւն“։ Այս է մոլար և հերետիկոսական։

Ընդ. յայտ է ՚ի հաւատոց, ՚ի սահմանաց Քաղկեդոնին որ ժողովոյն, և ՚ի տումարէ սրբոյն Լեւոնի, այլ և ՚ի բնական իսկ լուսոյ, զորմէ չեն բանք մեր աստանօր, իբր զի ոչ գիտեմք աստանօր մեծել և ցուցանել ամաբանօրէն զանկարութիւն և զանհնարութիւն գոյութեան միոյ բնութեան ՚ի Քն՝ բաղկացելոյ յերկուց կատարեալ բնութեանց յածայնոյն և ՚ի մարդկայնոյն անշփոթ միաւորելոց, քանզի հակասական է երկուց կատարելոց և ամբողջ բնութեանց բաղկացուցանել զմի բնութիւն անխառն և անշփոթ, են, որ ՚ի կարգին, զորմէ ունիս տեսանել յածարանութեան, և յայլ գրութիւնս որոց հարց և վարդապետաց։ Ասաց

Յով. փոքր․ Երեւան 8․ առէ։ „Իսր ո՞մին օրինակի՝ զմին ասել բնութիւն. եթէ ոմ պարտն ասել ը̄ն „ճշմարտութեան կարգի ոչ ասիցէք, բայց շանց համաձ„սակ եղանիցիք՝ զհայհոյութեան բարբառեցող։ Քանզի „առ այս՝ ամ քնախիրաց լուսաւորեալ են մտաց աչք, „զի ոչ է մի բնութիւն մարմնոյն և Բանին ը̄ն նոյնութեան „բնութեան. զի ոչ մարդկային երկոքին, և ոչ ածային. „ոչ մարմինն յերկնից իջեալ ը̄ն առաջին Լուսիբեայ „բաջաղանացն, և ոչ Բանն Բան ՚ի Սարեմայ առեալ „ակիզբն, ոմ փոփոխմամբ թուեցաւ ասել. այլ էին անեղ՝ „յանեղագունեն իջեալ ՚օրէ՝ մարմին ստացական յար„գանդէ կուսին զգեցաւ։ Այս ուրեմն ոչ է ը̄ն բնութե „նոյնութեան մի բնութի. զի եթէ և ասեմք մի բնութի Բանին „մարմնացելոյ, ոչ այլ ինչ խելայեղ և ջաղջախ մտա„ծութիւն, ոմ թէ միայն ՚ի կուսէն ՚ի բաց բարձեալ. և „կամ լուծեալք ՚ի միմեանց՝ ոմ խոնաւութ բնութեանց, „յորմէ լինի և ոչ մի բնութիւն“։

Այսքէն յայտնի տեսանես ՚ի բանս յայտնի, թէ զիարդ խոստովանի և գնէ զմի բնութիւն ը̄ն իւր կարծեացն. „ոմ պարտն է ասել ը̄ն ճշմարտութեան կարգի“. և թէ՝ „եթէ և ասեմք մի բնութիւն Բանին մարմնացելոյ՝“ ոչ իմանամք „ը̄ն նոյնութեան բնութեան„ մարմնոյն և Բանին, և կամ բաղձմամբ միոյն, այս է՝ մարդկութեան, և կամ

„լուծեալք 'ի միմեանց, ոչ խառնաւուտ բնութիքն“։ Որով քաջայայտ ցուցանէ հակառակիլ նմա մի բնութի ատողացն փոխարկմամբ միոյն 'ի միւսն, կամ բարձմամբ միոյն, և կամ չփոթեալ երկոցուն ես Բ միմեանս, զոր ապաքէն վերագոյն ցուցաք։

Այլ քանզի գիտութի իմաստասիրիդ ոչ ժամանեաց մինչև ցտեղեկութի փիզիգական և այլ փիլիսոփայական մակացութեց, բայց եթէ 'ի հինգ ձայնս Պորփիւրի, կմ 'ի ներածութի նր 'ի ստորոգութեան Արիստոտելի. նմին իրի ոչ իմացաւ զֆիզիգական բաղադրութի բնութեց, թէ զիարդ 'ի բաղում բնութեց խառնելոց ֆիզիգապէս՝ ելանէ երրորդ մի բնութի, յասել անդ իւրում „և կամ „լուծեալք 'ի միմեանց՝ ոչ խառնաւուտ բնութեցն, յորմէ „լինի և ոչ մի բնութի“։ Աստի ներել պարտ է նմ յայսմ մասին։ Ապա թէ ոչ՝ պարտ էր ասել, թէ զորօրինակ 'ի լուծեալ բնութեց 'ի միմեանց, ոչ 'ի խառնաւուտ բնութեցն, ոչ ելանէ մինն 'ի լուծեալ բնութեց անտի, այլ երրորդ իմն բնութի. սոյնպէս ես 'ի լուծելոյ ածային և մարդկային բնութեցն 'ի միմեանց՝ ոչ լինի մի բնութի ածային կամ մարդկային, այլ երրորդ իմն. զորօրինակ 'ի բաղում հեղանիւթ դեղորէից խառնելոց և այլայլելոց՝ ելանէ քիմիական բաղադրութի մի երրորդ բնութի, զոր օգիս անուանեն, և կամ այլ խառնուածս, ևն. սոյնպէս և յամ բաղադրութիս խառնեալս և այլայլեալս, եթէ 'ի ֆիզիգականս, և եթէ յարհեստականս, ելանէ մի երրորդ բնութի ֆիզիգական, կամ արհեստական. զորօրինակ 'ի չորից տարերաց խառնելոց՝ երրորդ իմն բնութի խառնելոց, ոպ ծառ, կենդանի, ևն. սապէս և 'ի ջրոյ և յալերէ՝ հաց։

Այլ եկ դու աստ՝ զարմացիր, ոչ այնչափ Բ տգիտութի անիմաստ իմաստասիրին, որչափ Բ իմաստուն մեկնչի նր, որ յերեսն 9. 'ի ծանօթութին 1. վերոգրել բանիցն՝ ասէ. „Այս անհրաժեշտ եզրակացութի իմաս„տասիրին մերոյ՝ արմատաքի խլէ զամ տարապարտ վէճս „այնոցիկ, որք պնդեալ կացին մնացին 'ի վը համաձայ„նութենս Դ Բնա-Ըէ. զի թէ ոչ է Ը նոյնութե բնութե „մի բնութիւն, այլ ըստ նոյնութեան անձնաւորութե, „ապա ոչ լինի փախչիլ 'ի ձայնէս Եւչ-Բնա-Ըէ, և ոչ

„լինի այլազգ ասել մի բնութիւն բայց վասն միութեան անձին․ „որպէս և 'ի բովանդակ Հարց ուսանիս“։ Ով յանդուգն և անիմաստ գրութեա, որ զՀամօրէն ուղղափառ վարդապետացն Հայոց, և զազգային ուղղափառ ժողովոցն զբանս, և զուղղափառ վարդապետութիւն Համօրէն նր եկեղեցւոյ՝ որ ընդէմ մի բնութիւն ասողացն 'ի Ք.ս, Համարի տարապարտ վէճս, և սին սուտ,՝ 'ի վն Համաձայնութեան [illegible]“։ Արդարև այդ անՀրաժեշտ եզրակացութիւն իմաստասիրիդ ձերոյ արդարև արմատաքի խլէ զանդէպ և զանվայել կարծիս ձեր, որք յամառեալ պնդէք․ թէ մի բնութիւն ասելով նր աստ՝ իմանայ զմի անձնաւորութիւն, որ է գլխովին սուտ և կեղծուպատիր ընդդէմ խոկ քաղցրայոյն բանից նր, որ ասէ․ „Ապա ուրեմն ոչ է ըստ բնու- „թեան նոյնութեան մի բնութիւն․ զի եթէ և ասեմք՝ մի բնու- „թիւն Բանին մարմնացելոյ, ոչ այդպէս խելայեղ և ջաղ- „ջախ մտածութիւ, որպէս թէ միայն 'ի կուսէն“, կամ ըստ քո մեկնութեանդ անդ 'ի ծան․ 2․ ('ի միւսմէն) „'ի բաց „բարձեալ․ և կամ լուծեալք 'ի միմեանց“, են։ Իսկ ով այնչափ յետսամիտ իցէ, որ ոչ իմասցի 'ի քաղցրայոյն բանից նր, թէ ոչ առնու նա աստ զբնութիւն Համաձայնութիւ փոխանակ անձին, զի 'ի նոյն խոկ բանս ցուցանէ ունել Ք.սի երկուս բնութիւնս․ ապա իմանալ պարտ է ըստ քեզ ունել նր երկուս անձինս․ քանզի ասէ „Ոչ է ըստ „բնութեան նոյնութեան մի բնութիւն“․ ապա ուրեմն ըստ քեզ՝ պարտի լինել ոչ մի, այլ երկու անձն 'ի Ք.ս։ Արդ՝ տեսանես յոր խորս անմտութեան վառածանես։ Այլ և ասես, թէ „ոչ լինի այլազգ ասել մի բնութիւն, բայց վն միութեան անձին“։ Արդարև կարի անՀմուտ և անգէտ ես ցուցանես զանձնդ, զի բազմօրինակ Հնար է ասել մոլորութիւ, և ասացին խոկ Հերետիկոսք զմի բնութիւնն 'ի Ք.ս, յորոց մի է և անիմաստ իմաստասէրդ, զորօրինակ ունիս տեսանել 'ի նախադիտակին։ Իսկ յասելն նր՝ թէ „ոչ է ըստ բնութեան նոյնութեան մի „բնութիւն“ իմանայ, որպ ակներև ցուցանէ, թէ յերկուց բնութեանցն 'ի Ք.ս ոչ եղև մի բնութիւն սոսկ աստուածային կամ սոսկ մարդկային, բառնալով միայն՝ զ մարդկութիւնն յաստուածայնոյն, կամ ընկղմամբ, կամ փոխարկմամբ յաստուածութին, և կամ խառնութ և շփոթութ երկուցն 'ի մի պարզ

բնութի, որդ և օրինակն հեղանիւթոյ ցուցանէ, որդ և յամ դրութիւս իւր: Այլ զայս ստուգութի քաջայայտ ես տեսանես 'ի յաջորդ բանս նր, ուր որոշակի յախանէ յանուանէ դնէ 'ի Քս „Մի դէմ, մի անձն, և մի „բնութի". զորմէ գրեսցուք զկնի:

Յերեւան 11. ասէ. „Երդ՝ յայտ է թէ անհա„սանելի միաւորութիւն, և ոչ բնութեանցն այլայլութի „առաջնորդեն մեզ զմին ասել բնութի մարմնացեալ „Բանին: Զայն և մեծահանճարն Կիւրեղ աւանդէ Ա„ղեքսանդրի հայրապետ՝ ասելով. Ոչ 'ի մարմնոյ „բնութի փոխարկեալ Բանին, այլ և ոչ մարմնոյն 'ի „նորայն, այլ 'ի յատկութեն ըստ բնութեն երկաքանչիւրոյ „մնացելոյ և իմացելոյ, ըստ այժմու մեզ աւանդեցելոյ „Բանին անճառելի և անասելի միաւորութիւն՝ մի մեզ „եցոյց Որդւոյ բնութիւն. Երդ՝ 'ի յատկութեն ըստ բնութեն „ասել, զանշարժն մնալ ասէ յերկաքանչիւրսն՝ որոց „էինն: Իսկ 'ի գերագանց և 'ի սքանչելի միաւորութենն „ոչինչ է արգել միութեն զնմանէ խոստովանել 'ի Քս՝ „մի դէմ, մի անձն, և մի նր բնութի. զի որ 'ի Հօրէ „անմարմին Բանն էր, 'ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ այսինքն „'ի մարդկային բնութենէ՝ մարմին զգեցաւ. և զնոյն „միաւորեալ ըստ խորհումն դիմի և բնութեն, մի դէմ, և „մի բնութի ասի և հանդերձ մարմնովն: Ոչ եթէ ան„դոյ և կամ առանց մտաց և անձին, և թանց բնութեն „զմերն ընկալաւ 'ի կնոջէ, այլ ըստ ամի կատարեալ առն„լով առ իւրն միաւորեաց կատարելութի Բանն որ 'ի „Հօրէ. և այսպէս ասի մի կատարեալ՝ զմի ունելով կեն„դանութի և զդէմ: Ոչ 'ի միութենն զերկաքանչիւրոցն „ուրանամ զկատարելութի, և ոչ յաղագս երկաքանչիւ„րոցն կատարելութեն զմին հրաժարեմ ասել կատարե„լութի. միութի յանայլայլելի, և անայլայլութի 'ի „միութեն խոստովանելով: Ապա ուրեմն մի բնութի, և մի „դէմ Քնի եթէ պարտ է համառօտագոյնս ասել, ոչ „է ըստ նոյնութեն բնութեն, կամ ըստ միանձնականութեն. „զի այս զերկոսին 'ի միասին գրեթէ ջնջեսցէ, զԱծ 'ի „մարդն լինելոյ, և զմարդն յԱծ անալոյ. այլ է՝ որդ բա„զում անգամ ասացի, ըստ անճառ միաւորութեն Բանին „ընդ իւրում մարմնի":

Նոպաքէն կամելին կուրանայ՝ որ ոչ անսանէ յայտ յանդիման 'ի բանս յայսոսիկ գնել Օձնեցւոյն՝ զմի բնութիւն Քրիստոսի յերկուց բնութեանց միաւորելոյ. և համարձակ խոստովանի 'ի Քրիստոս „Մի դէմ, մի անձն, և մի Նր բնու„թիւն“. և „Մի դէմ, և մի բնութիւն առի և հանդերձ „մարմնովն“. ևն:

Եւ առ դէմ յանդիման կացուցանելոյ զստուգութիւ բանիս, և զհարազատ միտս Օձնեցւոյն, միանգամայն և զստութիւ բանից, և զմոլար մեկնութիւ մեկնչին Նր, որ ասէ յերես 13. ծանօթ. 1. թէ „'ի մի կարգ դասին աստանօր ձայն„քըս՝ դէմ, անձն, և բնութիւն“. և զայլ շաղփաղփութիւ Նր, ցուցանի: Նախ՝ ասէ. „Իսկ 'ի գերազանց և 'ի սքան„չելի միաւորութեան ոչինչ է արգել միութեն զնման „խոստովանել 'ի Քրիստոս՝ մի դէմ, մի անձն, և մի Նր բնու„թիւն. զի որ 'ի Հօրէ անմարմին Բանն էր, 'ի Մարիամայ „ոմն կուսէն՝ Քս 'ի մարդկային բնութենէս մարմին զգեցաւ. „և զնոյն միաւորեալ ընդ իւրում դիմի և բնութեն“: Նոպաքէն յայտ է՝ թէ որոշակի զանազանէ աստ զդէմն 'ի բնութենէ. ապա թէ ոչ՝ ասէր սոսկապէս „ընդ իւրում „դիմի“, կամ սոսկապէս՝ „ընդ իւրում բնութեն“. ուստի և հետևեցուցանէ, թէ „մի դէմ, և մի բնութիւ „առի“. և այն զի՝ յաւելու ևս 'ի վր, թէ „և հանդերձ „մարմնովն“. որով զկատարելութի մարդկային բնութեան ցուցանէ, և ոչ զգլխին, այլ և բացայայտ իսկ, թէ „Ոչ եթէ անդէմ, և կամ առանց մտաց և անձին, (այս է՝ „հոգւոյ), և թանց բնութեն զմերն ընկալաւ 'ի կուսէն. „(յայտ է՝ թէ զմարդկային բնութի), այլ Քս ամի կա„տարեալ անձամբ՝ առ իւրն միաւորեաց կատարելութի „Բանն որ 'ի Հօրէ. և այսպէս առի մի կատարեալ՝ զմի „ունելով կենդանութի և զդէմ“. որով յայտնապէս „խոստովանի՝ յերկուց կատարեալ բնութեանց, Քս՝ յաստ-ուածոյն և 'ի մարդկայնոյն լինել մի կատարեալ բնութի. այլ և ասէ, „Ոչ 'ի միութեն զերկաքանչիւրոցն ուրանամ „զկատարելութի, և ոչ յաղագս երկաքանչիւրոցն կա„տարելութեն՝ զմին հրաժարեմ ասել կատարելութի. միոյ „յանպայմանն, և անպայմանի 'ի միոյ խոստովանելով“:

Նոպաքէն իմաստասէրդ՝ գուցէ ագիտութիւ, բայց արդարապէս զստորոգելիս բնութեանց քաջայայտ ցու-

ցանէ, և ոչ զղխմացն։ Այլ իմաստուն մեկնիչդ զխ՟րդ շփոթես առ զբնութիւն ընդ դիմի, և ոչ իմանաս զբացարձակ ստորոգելիս, զոր տայ բնութեան, զոր անհնար է տալ դիմաց. վասն զի կատարելութիւն է բացարձակ կատարելութի բնութեան, որ պատշաճի երից անձանց եւ Այ, և ոչ առանձինն միոյ դիմի։ Յուսամք եթէ հանդիպեսջ իցես յա՟ծաբանութեան, (զոր բազում անգամ յիշատակես), խնդրոյն, թէ արդեօք ա՟ծային անձնաւորութիւքն կերպարար եթէ միանգամայն, և եթէ առանձինն՝ ՚ի մէջ բերեն զկատարելութի. զոր լուծանեմք, թէ ոչ. այլ վերացուցանեն ՚ի կատարելութէ և յանկատարութէ. ապա թէ ոչ՝ երեքին միանգամայն, կմ մինն առանձին յա՟ծային անձինս լինէր կատարելագոյն քան զմիւսն։

Իսկ յաւելու եւ „Միութի յանայլայլութեան, և „անայլայլութի ՚ի միութեան խոստովանելով“։ Արդ զինչ իցեն միտք բանիցս, զինչ իցէ այն միութիւն յանայլայլութեան, և զինչ անայլայլութիւն ՚ի միութեան. բայց եթէ՝ միութի անայլայլելի բնութեանցն ա՟ծայնոյն. և մարդկայնոյն, ոյք միաւորին անայլայլելի, ոչ փոփոխելով միոյն ՚ի միւսն, են. որպ ՚ի վերոյ յիշատակեաց. և անայլայլութիւն երկուց նոցին ՚ի միութեան բնութեան։ Իսկ թէ զխ՟րդ մարթ իցէ այսմ այսպէս լինել, կարծեմք՝ թէ և ոչ իմաստասէրդ խելամուտ եղև այսպիսի ձախողակ մտաց. այլ գուցէ զգրեալսն յայլմէ ՚ի նոյն միտս եղելոյ առեալ յառաջ բերէ։ Արդ՝ միտք բանիցս ոչ այլազգ՝ բայց եթէ յայս ևեթ ճշմարտին, թէ՝ զորօրինակ ը՟ ողջամիտ փիլիսոփայից աւանդի ՚ի բնաբանութեան՝ նիւթ և կերպ, կամ ՚ի մարդկայինս բաղադրութեան՝ հոգի և մարմին, միալով անայլայլելի՝ կացուցանեն զմի մարդկային բնութի. և նոյն մարդկային մի բնութիւն ոչ այլ ինչ է, բայց եթէ նոյն բնութի հոգւոյ և մարմնոյ, ը՟ որում միաւորեալ, ը՟ որում նիւթ և կերպ, կամ ը՟ որում կարողութի և ներգործութի։ Իսկ ահա այս է հարազատ մեկնութի բանիցս „միութի յանայլայլութեան, և անայլայլութի ՚ի մի„ութեան“։ Աստի և հեռանեցուցանէ թէ „Ապա ուրեմն „մի բնութի, և մի դէմ Քնի եթէ պարտ է համա„ռօտագոյնս ասել, ոչ է ը՟ նոյնութեան բնութեան, կամ „ը՟ միանձնականութեան. զի այս զերկոսին ՚ի միասին զրե-

„թէ զրկեսցէ, զՔ՟ծ 'ի մարդն լինելոյ, և զմարդն „յԱ՟ծանալոյ. այլ է՝ որ բազում անգամ ասացի, զի ան-„ճառ միաւորութեն Բանին ը իւրում մարմնի: Նպ և „նոյն Գրիգոր ասէ. Միացաւ 'ի մարմնի բնութը, և „խառնեաց զմարմինն ը իւր Ա՟ծութեանն: Ահաւասիկ զի „անճառելի և անպարփակելի խառնմամբն և միաւորութեն „համարձակիմք ասել մի բնութի Բանի, և ոչ ըստ այ-„լում իմք եղանակի”:

Այլ մինչև լցեալ խօսեցեալ զօրինակէ հոգւոյ և մարմնոյ, քննեսցուք նախ՝ զբանս հեռաւութեն նր, զոր իմաստուն մեկնիչն նր ջանայ յանդէպ և 'ի տարապարտ բառադ՝նութիս ծեդել, և աղաւաղել զբուն և զհարազատ իմացուած իւրումն իմաստասիրի:

„Ապա ուրեմն„ ասէ „մի բնութի, և մի դէմ „Բանի„ ասել „ոչ է զի նոյնութեն բնութեն, կամ զի մի-„անձնականութեն”. իբր զի զի վերագոյն ասացելոցն՝ ոչ փոխեցան մին 'ի միւսն՝ առ 'ի լինել նոյն, այլ մնացին անայլայլելի. և ոչ ըստ միանձնականութեն, այս է՝ զի միանձնաւորութեն. զի մի անձնաւորութիւն ոչ առնէ յերկուց բնութեանց զմիութի բնութեն, կամ զմի բնութի. „զի այս զերկոսին 'ի միասին գրեթէ զրկեսցէ, զՔ՟ծ 'ի „մարդն լինելոյ, և զմարդն յԱ՟ծանալոյ. այլ է՝ որ „բազում անգամ ասացի, զի անճառ միաւորութեն Բանին „ը իւրում մարմնի.... Ահաւասիկ զի անճառելի և ան-„պարփակելի խառնմամբն և միաւորութեն համարձակիմք „ասել մի բնութի Բանի, և ոչ զի այլում իմք եղա-„նակի”. որով 'ի բաց բառնայ զայլ ամ եղանակս մի-աւորութեանց բնութեանցն 'ի Բանն, ևս և զի եղանակի միաւո-րութեն բնութեանցն 'ի մի անձն Բանի: Արդ՝ եթէ այս են հարազատ միտք վերոյգրեալ բանից իմաստասիրիդ, կար-ծեմք եթէ և համբակք փիլիսոփայական և Ա՟ծաբանական իմաստից գիտութեն կարող են համարձակ տեսանել և իմանալ: Իսկ զինչ ապա իմաստուն մեկնիչն նր:

Նախ՝ յերեսն 13. ծանօթ. 1. և 2. զդէմն, զանձն, և զբնութիւն 'ի մի կարգ դասէ ստութը՝ ևս և 'ի բանս իւրոյ իմաստասիրի, զորմէ խօսեսցուք յետոյ, շեղ-ջակուտեալ զՅունաց բառից զնշանակութիս և զառումն կանխաւ, անդէպս և անյարիրս 'ի մեր խնդիր:

Երկրորդ՝ յերեսն 13. ծանօթ. 2. 'ի վերջն. և յերեսն 14. ծանօթ. 2. զմիանձնականութիւն դնէ առնուլ ատէն իմաստասիրին իւրոյ փոխանակ միահոգութեան. վասն զի անձն 'ի մեր բարբառ նշանակէ երբեմն ևս զհոգի. և առ այն 'ի վկայութիւն կոչէ զթարգմանութիւն աւետարանին, և զառաքելոյն. և ոչ թէ ոք տարակուսի, եթէ գտանի համաձայնութիւն բառից ինչ 'ի մերում լեզուի, կուտակէ զհամաձայնութիւն բառից ինչ Յունաց և Լատինացւոց բարբառոյն: Մի՛ սքանչելի համարիցս և զ'ի վերայ դիտողութեան՝ առ ապաւաղելոյ զհարազատ իմաստ բանից իմաստասիրին իւրոյ, և միանգամայն պատրելոյ զմիտս պարզամիտ ընթերցողաց: Արդ՝ ասա՛ աղաչեմ ով հայր պատուական, թէ ով է, և ես և 'ի համբակաց լեզուագիտաց աշխա, որ ոչ գիտիցէ, եթէ անձն 'ի մեր բարբառ նշանակէ ևս երբեմն զհոգին, և թէ գտանին և 'ի մեր լեզու բազում համաձայն բառք. այլ զի՞նչ պիտէր առ այսոսիկ վայրապար դիտողութիւն բանից: Այլ պարտ էր ցուցանել 'ի բանից անտի իմաստասիրին, եթէ 'ի նախընթացից, և եթէ 'ի հետևորդաց, թէ ատ առնու համաձայնութեամբ փոխանակ հոգւոյ: Ուրեք ուրեք առնուլն իմաստասիրին զանձն և կամ զշունչն փոխանակ հոգւոյ, ոչ ուրեմն, վասն զի յայտ է 'ի բանից անտի նր, եթէ առնու այնպէս. բայց ատ զհակառակն է տեսանել:

Նախ՝ զի անձն է այն համաձայն 'ի բառին հոգի. այլ ո՞ւր արդեօք տեսեր, կամ գտեր, եթէ միանձնականութիւն է համաձայն 'ի բառս միահոգութիւն: Երկրորդ՝ զի 'ի այդմ մեկնութեան խօսս խանդարի ատ իմաստած նր. մի զի Ապողինար, ընդդէմ որոյ ասէ՝ գրէ ատ իմաստասէրդ, ոչ եդ 'ի Քն զմի կամ զերկու հոգի մարդկային, այլ իսպառ ուրացաւ զմարդկային հոգի, զի Բանն Ած առեր՝ ինքն զտեղի նր. և երկրորդ՝ զի միահոգութիւն ոչ դիմաբաժանի միութեան կամ միաւորութեան բնութեանց 'ի Քն, այլ վերաբերի՝ եթէ իցէ մի հոգի բանական 'ի Քն՝ առ կատարելութիւն մարդկային բնութեան նր. և եթէ ոչ՝ առ անկատարութիւն նորին մարդկային բնութեան. ուստի և ստութիւն հետևեցուցանէր իմաստասէրդ, եթէ „այս զերկոսին 'ի միասին դրեթէ

„ զրկեսցէ, զԱ՟ծ ՚ի մարդն լինելոյ, և զմարդն յա՟ծանա-լոյ. այլ է՝ որպ բազում անգամ ասացի, ը̅ անճառ „ միաւորութեն Բանին ը̅ խորում մարմնի“: Այս քաջա-յայտ է, և ակներև՝ որոց աչք չիցեն պղտորեալ, եթէ սուտէն իմաստասէրք առնու զմիանձնականութիւն փոխա-նակ միանձնաւորութեն կամ միոյ անձին. մինչ քաջ գի-տէր, եթէ ուղղափառք, և Բաղկեդոնին որ ժողովն գնեն զմիաւորութի բնութեցն Քնի ՚ի մի անձն Բանին Այ. ուստի և միաւորութի բնութեցն էր ՚ի միութեն անձին, կմ միանձնական, և ոչ միութի բնութեց, զոր սու-տէն գիտէ հերքել իմաստասէրք ընդ համախոհիցն իւրոց:

Իսկ վս՟ օրինակի միաւորութեն հոգւոյ ը̅ մարմնոյ, որք անայլայլելի գոլով՝ կացուցանեն զմի բնութի մարդ-կային, զոր և շնորհալի Նրն Ներսէս հայրապետ յառաջ բերէ ՚ի գլխոց միաբնակաց, այս է՝ մի բնութի ասելոյն ՚ի Քն՟ ՚ի տրամախոսութեն ընդ Թէոփանեայ. գիտել պարտ է, զի գոլով երկոքին եւ, այս է՝ հոգին և մարմինն՝ կիսամասնեայ բնութիք գոյացական բաղադրելոյ, այս է՝ մարդոյ. ի բն՟ նիւթ և կերպ. կամ իբրև կարողութի և ներգործութի ֆիզիքական, բաղկացուցանեն զմի կատա-րեալ գոյացական բնութի մարդկային անայլայլաբար, որ ոչ հոգի սոսկ է բաղկացեալն, և ոչ սոսկ մարմին, այլ երրորդ մի ը̅ ինքեան գոյացութի մարդկային, այս է՝ մարդ. ը̅ վերոգրեալ մեկնութեցն: Զայս օրինակ այն բերին և ոմանք ՚ի Սրց հարց ը̅ նմանութեն և եթ՝ ը̅ ան-այլայլելի և ը̅ անբաժանելի միաւորութեն մասանցն, և ոչ ը̅ այլոյ, այս է՝ ը̅ բաղկացուցանելոյն զմի ը̅ ինքեան բնութի մարդկային: Բայց յերկուց կատարեալ բնու-թեցն ՚ի Քն՟, այս է՝ յա՟ծայնոյն և ՚ի մարդկայնոյն՝ յանհնարին է ծագել մի միաւորեալ բնութի, առանց փոփոխելոյ միոյն ՚ի միւսն, կամ առանց այլայլելոյ. և ծագել մի երրորդ բնութի, որչափ և անճառելի կմ անպարփակելի՝ ը̅ իմաստասիրին ձայնի՝ իցէ այն միա-ւորութի. զի հակառակն է ՚ի բազում գլխոց՝ ա՟ծային անպարագիր բնութեան, և մարդկային կատարեալ բնութեն բաղադրել և կացուցանել զմի ը̅ ինքեան բնութի. զի այնուհետև բաղադրեալն ՚ի նոցանէ ոչ Ա՟ծ լինէր և ոչ մարդ. որպ մ՟դն ոչ հոգի է, և ոչ մարմին, այլ մի էակ ը̅ ինքն

քեան բաղկացեալ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ. զորմէ չէ մեզ աստ երկարս գրել, զի ոչ զփիլիսոփայութի, և ոչ զա՟ծա-բանութի դիտեմք աստէն գրել, զի յայտնի է այս ա՟մ փիլիսոփայից և ա՟ծաբանից. այլ միայն զհերետիկոսական միտս Նր ցուցանել:

Ասիցես: Եթէ այդ այդպէս է. ապա զիա՞րդ ասէ սրն Կիւրեղ, թէ՝ Μία ἡ φύσις Λόγου σεσαρκωμένη: Ապաքէն սրն Կիւրեղ տայ և զբնութենցն միութի Բա-նին մարմնացելոյ, կամ Ք՟ի:

Պնեմ ուրանալով զհետևութիւնդ. զի սրն Կիւրեղ ասաց, Μία ἡ φύσις Λόγου σεσαρκωμένη ἢ σεσαρκωμένου. և ոչ՝ թէ մի է բնութի Ք՟ի. և դու ասես, մի է բնութի Ք՟ի. որ է սուտ, և ընդդէմ բանից սրյն Կիւրղի: Առ որոյ իմաստ՝ ծանիր համառօտիւ, զի զայն բան կանխաւ ասաց սրն Աթանաս ընդդէմ Արիոսի, որ դնէր երկուս բանս յԱ՟Ծ, մի անստեղծ և յաւիտե-նական, և երկրորդ՝ ստեղծեալ. և բարբանջէր. թէ ստեղծեալ Բանն մարմնացաւ. զոր 'ի հերքել սրյն Աթա-նասի՝ ասաց. թէ մի է Բանն յԱ՟Ծ, և մի է բնութի Բանին ա՟ծային, որ մարմնացաւ: Զայս բան սոյն Աթա-նասի 'ի գործ եած սրն Կիւրեղ և ընդդէմ Նեստորի, որ դնէր, թէ Բանն Ա՟Ծ ոչ մարմնացաւ, և ոչ էառ զմարմին, կամ զմարդկային բնութի, այլ միայն շնորհօք միաւորեցաւ ը՟ մարդոյն, որ անուանեցաւ Ք՟Ս: Աստի 'ի հերքել նրյն Կիւրղի զպիղծ աղանդ Նր, ասաց, թէ՝ Μία ἡ φύσις Λόγου, կամ Λόγου, (նոյն գոլով յա՟ծա-յին ստորոգելիս կամ յերրորդութեն՝ թանձրացեալն ը՟ վերացելոյ փ՟ ծայրագոյն ներգործականուն իւրեանց,) σεσαρκωμένου, կամ ὡς ἔστι σεσαρκωμένη. որով յայտնապէս ցուցանէ, թէ նոյն Բանն Ա՟Ծ՝ որ ունէր զմի բնութի ա՟ծային՝ մարմնացաւ, այս է՝ ընկալաւ զմարմին, կամ զմարդկային բնութի, որով եղև նոյն Բանն ունող երկուց բնութեանց, կամ ենթակայացեալ յերկուս բնութիս, յա՟ծային և 'ի մարդկային. որով կատարեցաւ խորհուրդ մարդեղութեն Բանին: Այսպէս մեկնէ նոյն ինքն սրն Կիւրեղ զբանս իւր 'ի գիրս իւր 'ի բազում տեղիս, մա-նաւանդ 'ի գիրս՝ որ առ Սեկունդոս, գլ. 41: Իսկ եթէ լիագոյն ես կամեցիս խելամուտ լինել և հասու ճըշ-

մարտութեան բանից, և մնաց նոյն Կիւրղի, ընթերցեալ զվերագրեալ գիրս նոյն Կիւրղի մատենագրութիւնս, միանգամայն և զբացատրութիւն Նորին 'ի վիճաբանութեան Թէոդորիտանեայ ը̄ նոյն Ներսեսի շնորհալւոյն, և առաւել ևս զբացատրութիւն բարեյիշատակ Հօրն մերոյ Մխիթարայ Աբբայի և Վրդպի՝ 'ի մեկնութեան Մատթէի աւետարանին գլ. ժը. համ 11: Բանզի մեք, որպ բազում անգամ ասացաք, ոչ դիտեմք գրել աստէն զվիճաբանութիւն: Բայց աստէն ոչ այնչափ զարմանամք ընդ թիւր իմացեալ բանից նոյն Կիւրղի յանիմաստ իմաստասիրէն ընդ հակառակորդաց Նորին սոյն վրդպի, որչափ ընդ անիմաստ մեկնութիւն և ընդ չարաչուք ջատագովութիւն իմաստուն մեկնչի բանից Նր․ որպ յայտ է որոց միանգամ յակն արկանեն զայն․ զորովք համառօտութեան աղագաւ զանց առնեմք:

Բայց առ բառնալոյ ևս լիով զպատրանս, և զհնարս իմաստուն մեկնչի բանից անիմաստ իմաստասիրին Իւրոյ, որ առ պատրելոյ զմիտս պարզամտաց, որք չեն անձամբ բաւական հասու լինելոյ 'ի բացայայտ բանից Նր՝ մնաց Նորին, և որոշելոյ, եթէ յինչ միտս առնու զբառս Բնու—ն, անձն, և դէմ, ասէ՝ թէ 'ի մի կարգ դասին 'ի բանս իմաստասիրին Իւրոյ․ թէպէտ և ցուցաք ը̄ բաւականին 'ի վերոյ, թէ զբնութիւն և զդէմս առնու Նա ը̄ բնական նշանակութեանց իւրեանց, և զանձն ևս՝ թէպէտ և ուրեք ուրեք առնու ևս փոխանակ հոգւոյ․ սակայն յաւելումք ևս զորս զկնի, խորշելով ըստ կարի յերկարաբանութենէ:

Նախ՝ իբր մեկնել կամելով զբանս երանելւոյն Յուլիոսի Հռովմայ հայրապետի, զոր Նա ինքն աղաւաղ յառաջ բերէ, որոց և ոչ Նորա ուղիղ թարգմանութիւ մեկնչի Նր Նպաստէ ինչ մնաց Նորին, և բանից․ ասէ յերեսն 17․ „երկախումբ խոստովանեալ ըստ բնութեանց, „և մի ը̄ միաւորութ: Այդ զմին ասելով՝ զբնութեանցն խզանել „կամակորեսցուք զաղբիւրս, և մի յասելոյ անտի երկա„խումբն՝ պատառել կամելով զմիաւորութիւնն պատմու„ճան․ այլ բարեպաշտաբար առ երկոսինն զալ գիտա„ցեալ, միուքն ճանաչել զբնութիւն, և 'ի բնութեանցն „անտի ելանել առ միաւորութիւն․ որպ հրաշալին ասէ „Յովհան Կոստանդնուպօլսի, Մինչև խոստովանիմ, և ոչ „քայքայումն ինչ ելուծումն այսր բնութեան յայն, կամ այնր

„յայս. այլ միացեալ, մի լեալ: Որդ՝ մի լեալ, ո՞չ յա-
„ռաջն ասացի, ընդ միաւորութիւն գոլ ասէ զերեւելին եւ
„զաներեւելին, եւ ոչ ընդ համագոյութեան. զի ո՞չ արդեօք
„եղիցի որք ոչն են“: Որդ՝ ո՛ իցէ արդեօք այնչափ յետ-
ամիտ, կամ յամառ 'ի կարծիս իւր, որ ոչ տեսցէ
համարձակ 'ի բանս յայսոսիկ, եթէ ասացեալ իմաս-
տասէրն իւրեանց անուն զբնութիւն ասէն 'ի յատուկ
նշանակութեան իւրում. եւ քաջայայտ ցուցանեն բանք
նր, թէ երկախումն բնութիւնքն, ա̃ծայինն եւ մարդկայ-
ինն 'ի Ք̃ս, միաւորեցան 'ի մի բնութի. „Մի զմն ա-
„սելով, ասէ, զբնութեանցն խցանել կամակորեսցուք զաղ-
„բիւրս, եւ մի յասելոյ անտի զերկախումն՝ պատուել
„կամելով զմիաւորութեան պատճառն. այլ բաւեպար-
„տարար առ երկուսինն գալ գիտացեալ, միութիւն ճա-
„նաչել զբնութիւնս, եւ 'ի բնութեանցն անտի եղանել առ
„միաւորութիւն“: Ապաքէն տեսանես ակներեւ, թէ
զխօսք զբնութիւն անուն ասէն փոխանակ՝ անփոփոխ
նշանակութեան բնութեան, եւ ոչ դիմաց, կամ անձին, եւն.
ուստի եւ զմիութիւն եւ զերկախումն փոխանակ նոցին բը-
նութեանց: Նոյն առ այն բերէ եւ զվկայութիւն զի բանհար ինչ
հեղինակի յանուն Յովհաննու Կոստանդնուպօլսի, որ
չէ ինչ անտեղի այդպիսի աղանդաւորաց. „Միութիւն
„խոստովանիմ, ասէ, եւ ոչ քայքայումն ինչ եւ լուծումն
„այսր բնութեան յայն, կամ այնր յայս. այլ միացեալ,
„մի լեալ: Որդ՝ մի լեալ, ո՞չ յառաջն ասացի, ընդ միաւո-
„րութեան գոլ ասէ“, յայտ է՝ թէ ընդ բնութեանցն՝ „զերեւե-
„լին եւ զաներեւելին“: Ապա թէ ոչ՝ եթէ ընդ թիւր մեկ-
նութեան մեկնչի նր աւանդոյր ասա զբնութիւն փոխանակ ան-
ձին, հարկաւ հետեւէր նոր իմն աղանդ եւ հերետիկոսս ի
ընծայել իմաստասիրին իւրոյ, այս է՝ յերկուց անձանց,
կամ յերկախումն անձնաւորութեանց ծագել միոյ անձին, ան-
պայմանելի մնացեալ երկոցունց եւս, ո՞չ եւ յայտ է. այլ զայս
մեկնութիւն եւ հետեւութիւն եւ ոչ իմաստասէրն իւր երա-
զեաց, զի կամելով մեկնչին զմիաբնակ աղանդ իմաստասի-
րին իւրոյ ջատագովել, յայլ մեծագոյն եւս աղանդ եւ 'ի
հերետիկոսութիւն արկանէ զնա: Նոյն յաւելու եւս 'ի մի
իմաստասէրն իւր՝ թէ „եւ ոչ ընդ համագոյութեան. զի
„ո՞չ արդեօք եղիցի՝ որք ոչն են“: Ասա զկայ անուն

իմաստուն մեկնիչն նր̃. զի քաջ գիտէ, եթէ յինչ-միտս և մեկնեսցէ, սուսեր անձին մատուցանէ: Արդարև եթէ որք ը̃ ձայնիցն, և ը̃ գրաւորականն նշանակութեան նր̃ մեկնել կամեսցի զմիաւորութի̃ երկուց և աներևոյթ բնութ̃ցն Քս̃ի, նման աղանդն Նեստորեայ, որ խառնութ̃ և շփոթութ̃ դաւանեաց զմի բնութի̃ 'ի Քս̃. ուստի և երկու բնութիւնքն ը̃ նր̃ ոչ էին համագոյ, այս է՝ ոչ գոյ-ին 'ի միասին 'ի Քս̃. զի ո̃ղ արդեօք լինէին՝ որք ոչն են, գոլով խառնեալ և շփոթեալ, և յայլ երրորդ ինչ բաղադրեալ: Բայց չէ յիրաւի այս իմացուած մտաց նր̃, զի նա ա̃մ ուրեք հակառակի այնմ: Այլ հարազատ իմացուած նր̃՝ որ 'ի նախընթացէն յայտնի մակաբերի, է այս. թէ՝ եթէ երկու բնութիւնքն 'ի Քս̃ ոչ միաւորէին ը̃ միմեանս անայլայլելի և անփոփոխելի միաւորութ̃ 'ի մի բնութի̃, այլ փոփոխէին և այլայլէին մին 'ի միւսն, ոչ ար-դեօք կարէին կալ 'ի միասին, և միաւորել զմի բնութի̃. զի ո̃ղ արդեօք կարէին գոլ՝ որք ոչն են անփոփոխ և անայլայլելի:

Երկրորդ՝ յերեսն 21. առարկեալ ընդդէմ իւր 'ի դիմաց առաջօքադաւանից, որք ուրանային առնուլ Բանին 'ի կուսէն զճշմարիտ բնութի̃ մարդկային, թէ՝ „ Եթէ „ այդպէս ասեմք՝ ասեն, երկուս լինիմք ասացեալ դէմս, „ և երկուս բնութիւնս“. արդ՝ միտ դիր բաժանման բնութ̃ցն 'ի դիմաց: Պ̃նէ „ Դարձեալ փախչելով 'ի „ սնոտի երկիւղէ՝ 'ի մեծագոյն անկանիս չար: Եթէ „ յերկուց ը̃ բնութ̃ ոչ կամիս ասել զմին, կարի յոյժ „ չարաչար ը̃ բնութ̃ զմին գտանիս ասացեալ բնութի̃: „ Այլ անմարմին բնութի̃ ա̃ծային Բանին զմարմնական „ բնութի̃ 'ի կուսէն ընկալեալ՝ ը̃ ինքեան միաւորեաց. „ որ է ը̃ բնութ̃ յերկուց՝ յա̃ծային և մարդկային. իսկ „ ը̃ միաւորութ̃ մի: Զի եթէ այս երկուք գեղեցկա-„ գոյն հաւատոյ ոտիւք առ ճշմարտութի̃ 'ի վեր կանգ-„ նեալ ոչ հաստատիս, առ ո՞ր և յենուցուս առ մինն 'ի „ նոցանէ՝ կաղ գտանիս առ խոստովանութի̃ ճշմար-„ տութեանն, այլ կատարեալ ը̃ երկաքանչիւրոցն գիտելով „ զերկուսն, ը̃ միաւորութ̃՝ մի կատարեալ, մի դէմ, և „ մի Որդի Ա̃յ խոստովանելով“: Ահաւասիկ քեզ յայտ-նի խոստովանութի̃ նր̃, թէ յերկուց կատարեալ բնութ̃ցն 'ի Քս̃ խոստովանի պարտ է և զմի բնութի̃

կատարեալ, մի դէմ, և մի Որդի Այ. և թէ ՚ի չարչարեալ ստորոգելիք անկանի ՚ի մի բնութիւն ՚ի Քս, և ոչ ՚ի մի անձին Բանին, աւանիկ ցուցաք ՚ի վերոյ։

Իսկ երրորդ՝ յերեսն 23. կշտամբելով զնս, որք զմի բնութիւն ածային միայն դնէին ՚ի Քս, ևն. ասէ. „Արդ այսպէս շամբուշ խորհրդով բանդագուշիս, և ոչ „գիտես գտանել զշաւիղս Այ գրիւրինս. զի Բանն Այ՝ գոյ-„ութի հանդերձ մարդկային բնութբ ընկալեալ յանա-„րատ արգանդէ կուսին՝ ընդ ինքեան միաւորեաց անճա-„ռապէս գոյութն և բնութն, ոչ զյառաջագոյն գոյա-„ցեալն. քանզի զգոյութ մարմնոյն՝ միաւորութբ Բանին „ծանեայ, ասաց ոմն ՚ի նըց. և այսպէս ասի մի դէմ, „և մի բնութի Բանին մարմնացելոյ։ Ոչ ըստ ինքեան ասի „մի բնութի, և առանձնաւորութի, քանզի զայս ՚ի Հօրէ „իսկ անժամանակաբար յինքեան բերէր Բանն Այ. „այլ ըստ անճառ տնօրէնութնն ՚ի կուսէն“։ Իսկ փոքր մի զկնի յերեսն 25. ասէ. „Երկնչիս յերկուց ասել բը-„նութեց. երկիւղ մեծ գոյ, եթէ ոչ արժանապէս՝ և զմին „ասել Քսի բնութի։ Իսկ եթէ իրաւապէս և բարե-„պաշտաբար զերկոսին լսես, ոչինչ է արգել, զմին ասելով՝ „յիշել և զառ ՚ի յերկուցն. և դարձեալ՝ ոչ մոռանալով „զերկուցն՝ խոստովանել և զմի“։ Ապաքէն կամովին կուրանայ, որ ոչ տեսանէ ՚ի բանս յայսոսիկ յայտնապէս և բացայայտ, թէ ըստ մտաց իմաստասիրին իւրեանց՝ Բանն Այ ընկալեալ զմարդկային բնութի, միաւորեաց ընդ ածային բնութն իւրոյ. և ընդ այնմ եղև ՚ի Քս մի բնութի յերկուց, ՚ի մարդկայնոյն և յածայնոյն, և մի անձնաւորութի։ Իսկ եթէ երկիւցեն յերկուց ասել բնութեց, յիրաւի՝ ասէ, երկիւղ մեծ գոյ, եթէ ոչ արժանապէս և զմին ասիցեն Քրիստոսի բնութիւն, և որ զկնի։

Իսկ զինչ առ այս իմաստուն մեկնիչն նր յերեսն 24. ՚ի ծանօթութին 2։ Օձային՝ բնութեան, դէմ, և անձնաւորութեան, կամ տարանձնաւորութեան առաքէ տեսանել ՚ի վերոյ, ուր զերեսին ես ՚ի մի կարգ դասէ, առ խանդարելոյ զհարազատ և զյայտնի իմացուած բանից իմաստասիրին իւրոյ, զորս գրեցաք և մեք ՚ի վերոյ, ցուցեալ բացայայտ զստութիւն նր. Այլ ցուցանի ես նոյն-

պէս ՚ի բացայայտ բանից իմաստասիրին Խւրդյ, որ յերեսն 37 ըդէմ երևութական հակառակամարտին, որ զբանս սրբ̃ գրոց և սրբ̃ց հարց ՚ի Թիւր միտս մեկնէր, ասէ՝ „Ըստ „նմին և յորժամ ասէր (Գ.Ծ.) Թէ ես և Հայր իմ մի „եմք, ոչ ըստ դիմաց և առանձնաւորութե̃ն զմին ասէր գոլ, „այլ ըստ բնութեան: Առ որ դու կուրացեալ միտօք „հայելով ոչ գիտացեր զանազանել, այլ մեղադիր „եղեալ առաջնոցն ածխօսութեան՝ գրեցեր և ասա- „ցեր, թէ զի՞նչ պարտ է զճարտարսն Յունաց համարել, „որք ասեն զԵրրորդութին դիմօք և առանձնաւորութբ̃ „բաժանեալս, և ածութբ̃ միաւորեալ: Աստի յայտ ա- „րարեր, թէ դու և ոչ զմի յերկոցունց յայդցանէ ոչ „ընդունիս. և այդպէս՝ ոչ բաժանելով ըստ դիմաց՝ լինիս „սաբելացի, և ոչ միաւորելով ըստ բնութե̃՝ արիո- „սեան: . . . . Ասացեր, թէ դիմօք և առանձնաւորութբ̃ „բաժանեն, և ածութին միաւորեն: Այն ՚ի սրբ̃ց հարանցն „ասացեալ եղև. Ոչ ծանօթութիւնքն յիւրաքանչիւր ու- „մեքէ բարձեալ լինի, և ոչ առանձնաւորական նմա- „նութիւնքն յայլում ումեք երևեալ: . . . . Եւ զի՞նչ զար- „մանք են յածազանիցն ոչ պատկառել քեզ արանց. „զի և առ նոյն ինքն վեհագոյն բնութին անամօթեցար „զհայհոյութեան քո ձգել բան, ոչ խոստովանելով ՚ի մի- „ում անեղ բնութե̃ զերիս դէմսն և զերիս առանձնա- „ւորութիւնս, զՀայր և զՈրդի և զսր̃ Հոգի: . . . . Իսկ „մինչ անձն ասես, ընդէր հրաժարես զնա դէմ ասել. „եթէ արդեօք վրդովեցար ՚ի քում արուեստարանիդ՝ „այլ գոլ անձն, և այլ զդէմս. որ թէպէտ և է ուրեք՝ „որ զանազանի ՚ի զանազան տեսակսն, սակայն առ մի և նոյն „առեալ իրակութի̃ զնոյն երկոքին ակնարկեսցեն: Վասնզի „զումեմնէ ասի թէ անձն և եթէ դէմ. և այս հասարա- „կարար զհետ երթիցէ մարմնական և անմարմին տեսա- „կացն. քանզի իւրաքանչիւր առանձնաւորեալքն ՚ի տե- „սակին՝ դէմ անուանի. որպ̃ ՚ի մարդկանէ պօղոս յատ- „կացեալ դէմ առկոչի. իսկ յանմարմնոցն գաբրիէլ „առանձնացեալ դէմ անուանի. սոյնպէս յանեղագոյն „էութէն՝ Հայր կամ Որդի կամ Հոգի առանձնակի յիշեալ՝ „դէմ առասի: Եւ արտորոշեալ ճանաչի ՚ի նոսա դէմս „այսոքիկ. Հօր ծնօղ գոլ. Որդւոյ ծնունդ. իսկ Հոգւոյ

„ելուծ։ Այս նոյն սա է առանձնաւորութիւն. զի որով իւիք „նշանակեսցի դէմ, նոյն և առանձնաւորութիւն նմին եղի„ցի։ Արդ զի՞րդ դու մոլորեցար՝ կամ ոչ իսկ ասել „դէմ և առանձնաւորութի՛ երեքանձնական զօրութեն, և „կամ թէ ասել՝ չարաչար ասել՝ ընդ լիբէացւոյն ելանել „սուր. փոխանակ երից դիմաց և առանձնաւորութեան՝ „մի ասել դէմ և առանձնաւորութիւն։" Արդարև մինչ 'ի ձանձրոյթ հարկիմ բազմապատիկ ցուցմամբք ապացուցանել զարդէն ապացուցեալ ճշմարտութիւնն բանից մերոց, և առ այս հարկ ստիպէ զմեզ ինքնաստեղծ և թիւր մեկնութիւն մեկնչի բանից իմաստասիրին իւրեանց առ խանգարելոյ և իսպառ աղաւաղելոյ զհարազատ իմացուած բանից նր։ Ապաքէն ամենայն ոք, որ յակն արկանէ զգրութի իմաստասիրին՝ քաջայայտ տեսանէ, եթէ գիտէր նա բարւոք զզանազանութիւն բնութեան, դիմի, և անձին, կամ առանձնաւորութե՛, զորոց և զսահմանս իսկ յառաջ բերէ. միայն նրբահայեաց մեկնիչ նր ասէ յերես 13. 'ի ծանօթութիւն 1. և յերես 24. 'ի ծանօթութիւն 2. թէ՝ 'ի մի կարգ դասէ զձայնս՝ դէմ, անձն, կամ առանձնաւորութի, և բնութիւն։

Իսկ զինչ ապա առ այն՝ յերեսն 25. թէ „Երկիւղ մեծ գոյ, եթէ ոչ արժանապէս՝ և զմին ա„սել Քսի բնութի". ծանուցանէ 'ի ծանօթութիւնն 1. այս է՝ „եթէ ոչ արժանապէս (խորհիս) և զմին ասել „Քսի բնութի"։ Ո՛վ սքանչելի մեկնութեան, և սրբագրութե բանից իմաստասիրին իւրոյ. զի ըղ խորհին միայն յաւելլով համարի ուղղել զբանս նր, որով ոչ ինչ իրօք փոփոխի իմացուած բանից նր։ Այլ լաւագոյն եւս լինէր նմ յաւելուլ, և մեկնել այսպէս. „եթէ ոչ արժանապէս (ընդ իս ը մեկնչի նր, որ յամի կամիմ զբառս եզբանս նր փոփոխել, և յեփիբել ը մտաց իմոց, ևս և ըդէմ նորուն իսկ մտաց, առ հաստատելոյ զկարծիս իմ, և զիմայնոյն. նմին իրի) և զմին ասել Քսի անձն. քանզի ոչ ոք 'ի նրց հարց ասաց երբէք զմի բնութի Քսի, զոր անիմաստ իմաստասէրն սոցա բաղում ուրեք ասէ յայտնապէս։

Այլ զայսցանէ շատ լիցին ցայսվայր ասացեալքս,

զի զնի ուր ուրեք եւ խօսի 'ի վ՟ր բնութեանց Փ.ծի՝ են 'ի նոյն ալերէ զանգեալ։

Այլ զայսոսիկ եւեթ ոչ կարեմք զանց առնել, զոր իմաստասէրն անուանեալ գրէ յերեսն 22. „Մ՟ „հարքն, ասէ, 'ի Նիկիա ժողովեալքն ասացին՝ զնոյն „բնութիւն Հօր վասն մերոյ փրկութեան ծնեալ մարդա„ցեալ 'ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով. եւ ապա 'ի „շար արկեալ թուէին զկատարելութիւն բնութեանս մերոյ. „հոգի, մարմին, եւ միտս. եւ նովին մարմնով համբար„ձեալ յերկինս. եւ նովին մարմնով գալոց է ասացին„։ Արդ յիրաւի կարծէի զկայ առնուլ իմաստունն մեկնչի նորա, եւ զպարտութիւն խոստովանել. ցուցեալ ամենայնիւք զստութիւն բանիցս նորա, ըստ վկայի սուտ ստասացին. եւ կամ գէթ զլխովին ընդ լռութիւն անցանել, թողեալ զնա յիւրում ստութեան։

Ասացաք „ըստ վկայի սուտ ստասացին“։ Օրի պատմի, եթէ յառաջս, եւ եթէ իսկութիւն. եթէ ան-ճոռնի ստասաց ումն դաշնադրեալ էր ումեք, ասէ. եկ ընդ իս, եւ եթէ ասացից ինչ, դու վկայեա, եւ մեկնեա զայն։ 'Ի միում աւուր 'ի հրապարակի պատմէ, թէ գնացի յորսորդութիւն, եւ գտի զեղնիկ մի. հարի զնա նետիւ, եւ պարանեցի զյետին ոտս նորա ընդ ականջին իւ-րում։ Իսկ յասելն ունկնդրաց, թէ այդմ անհնար է լինել, ասէ, հարցջիք զսա, որ վկայէ ճշմարտութեան։ Իսկ նա ասէ. այո՛ հնար է այդմ լինել. վասզի յորժամ սա նետիւ եհար զնա, եղնիկն յայնժամ յետին ոտամբն քերէր զականջս իւր. ուստի եւ նետն պարանեաց զեր-կոսին 'ի միասին։ Իսկ զայսօրինակ մեկնեաց զստութիւն նորա։ Իսկ յայլում նուագի պատմէ ըստ նմին օրինակի, թէ չոգայ յորս, եւ տեսի զթռչուն ինչ 'ի վ՟ր թփոյ. հարի զնա նետիւ, եւ մինչեւ ժամանեցի առ նա, գտի զնա խո-րովեալ, եւ կերայ։ Իսկ ըստ նմին օրինակի 'ի չհաւա-տալն ունկնդրաց ստուեն բանիցն, ասէ. հարցջիք զսա։ Իսկ նա ասէ. այո՛ այդպէս է. զի 'ի ներքոյ թփոյն էր վէմ ինչ, եւ 'ի հարկանել նետիւ զթռչունն, եհար միան-գամայն եւ զվէմն՝ որ 'ի ներքոյ թփոյն, եւ ել հուր 'ի վիմէն, եւ զի խոտերն էին չորացեալ՝ վառեցան, եւ խո-րովեցին զթռչունն։ Իսկ ըստ այսմ եւս մեկնեալ՝ հաւա-

տարմացուցանէր զստութի պատմութեն: Իսկ յերրորդումն Նոճագի՝ տեսեալ ստասացին զյարմարական մեկնութիս վկային, համարձակեցաւ և ես պատմել, թէ տեսի զթռչուն ինչ թռուցեալ յօդս. հարի զնա նետիւ, տեսի՝ զի էջ խարշեալ և եփեալ 'ի կերակուր, և կերայ: Եւ ըստ նմին օրինակի 'ի չհաւատալ ունկնդրացն՝ կոչէ զվկայն 'ի հաւատարմութի: Յայնժամ վկային ստութե տեսեալ զամենեւին անմեկնելի ստութի նր, ասէ ցնա. ով մարդ, զայնպիսի ստութի խօսեաց, զի մարթ իցէ գէթ ը̅ իմիք պատրուակել և մեկնել. արդ՝ ես ուստի՞ տարայց յօդս զհուր, ուստի՞ զանօթս, և ո՞ւր կարգեցից խոհարանս եփելոյ, զի եղեալ կերակուր՝ յիջանելն 'ի վայր կերիցես: Եւ այսպէս խայտառակեաց զնմ բանից նր զստութիս, և մեկնեցաւ 'ի նմանէ:

Արդ՝ աստէն ասացաք, պարտ էր մեկնչի իմաստասիրիս ըստ օրինակի վկային ստութե ասել. ով իմաստասէր, զի՞արդ մեկնեցից զայս բան քո՝ թէ „նոյն բնութի „Հօր վն մերոյ փրկութե ծնաւ մարդացեալ“. են: Եթէ զնոյն բնութի Հօր մեկնեցից փոխանակ ածային անձին, ապաքէն լինէր հերետիկոսութի Սաբէլեան, որ զմի անձն դնէր Երրորդութե, և ը̅ այլ և այլ գործոյն անուանէր Հայր, և Որդի, և Հոգի սուրբ: Եւ եթէ զանձն Հօր միայն մեկնեցից, այնուհետև լինէր այլ մոլորութի, թէ անձն Հօր մարմնացաւ, և ոչ Որդւոյն, որ է ևս մեծագոյն մոլորութի և հերետիկոսութի: Իսկ եթէ զբնութին մեկնեցից փոխանակ բնութե Հօր, այնուհետև բոլոր Երրորդութին լինէր մարմնացեալ, զի գոլով մի և նոյն բնութի Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սբյ, 'ի մարմնանալ բնութեն Հօր, մարմնանային և այլ անձինքն, կամ որ նոյն է՝ ամենայն Երրորդութին. որ ևս է ծայրագոյն մոլորութի, և հերետիկոսութի: Եւ այն զի՝ մարդկային բնութին առեալ 'ի Բանէն՝ գոլով կատարեալ բնութի, ոչ ունէր պէտս ածային բնութե, այլ անձին միայն՝ 'ի լնուլ զտեղի ստեղծական անձին, որով եղև մի անձն Բանին յերկուս կատարեալ բնութիս՝ յածային, և 'ի մարդկային: Այլ ասես ով իմաստասէրդ, թէ այս ոչ են իմ բանք. այլ „որ հարքն „'ի Նիկիա ժողովեալքն ասացին՝ զնոյն բնութի Հօր *

„մերոյ փրկութեան ծնաւ մարդացեալ“, եւն: Բայց զարմանամ, պարտ էր ասել մեկնչին, թէ այդ քո պնդի. զի մեք գուն գործեմք հոգւով չափ 'ի դէպս և յանդէպս՝ զքեզ իմաստասէր համբաւել, և դու այնչափ անմտացար՝ մինչև զանհեթեթ և զամենախալ բանս քո՝ 'ի մէ՞ նր հարց Նիկիոյ ժողովոյն արկանել: Եւ ո՞ւր արդեօք ընթերցար, և կամ ուստի՞ լուար զայդպիսի խեղաթարական բանս 'ի նրց հարց անտի: Ապաքէն գիտէ աշխարհ ամ, եթէ Նիկիոյ նր ժողովն ընդդէմ ամբարշտին Արիոսի, որ զնծութի Բանին ուրանայր, սահմանեաց 'ի հանգանակին՝ իբրև կնիք ընդդէմ հայհոյութեանց նր, թէ նոյն ինքն Բանն է ὁμοούσιος Հօր, որ մարմնացաւ, մարդացաւ, եւն: Դուցէ ասիցես, թէ նր Գրիգոր լուսաւորիչն մեր այսպէս բացատրեալ է 'ի հանգանակին մերում: Բայց նախ՝ պարտ էր քեզ իմաստասիրապէս ասել, թէ նր Գրիգոր լուսաւորիչն մեր այսպէս բացատրէ 'ի հանգանակին մերում, և ոչ եթէ նր հարքն 'ի Նիկիա ժողովեալք այսպէս ասացին: Եւ երկրորդ՝ զի և այդ իսկ է գլխովին սուտ. զի ոչ երբեք նրն Գրիգոր լուսաւորիչն մեր բացատրեաց 'ի հանգանակին մերում, թէ նոյն ինքն բնութիւն Հօր մարդացաւ, եւն. այլ է տեսանել յամ հանգանակս Հայոց, եթէ 'ի ձեռագիրս, և եթէ 'ի տպագրեալս. այլ ὁμοουσίου բառն հանգանակին նր ժողովոյն Նիկիոյ, որ ըստ Յունաց ὁμοούσιον, որ չէր կանխաւ այնչափ գործածական բառ եւս և առ Յոյնս, եւս առաւել 'ի մեզ, գէթ առ ժամանակաւ նրյն Գրիգորի լուսաւորչին, թարգմանեաց '՚ի բնութենէ Հօր, այս է՝ նոյն ինքն Բանն է 'ի բնութէ Հօր, կամ՝ համագոյակից Հօր, որ այնչափ հեռի է 'ի քումդ բանից, որչափ երկինք յերկրէ. ուստի ոչ է այն՝ և ոչ իսկ բացատրութի լուսաւորչին 'ի մէ՞ հանգանակին: Այս յիրաւի սաստ խոստովանիմ զպարտութի ո՛վ իմաստասէր, զի ոչ ի՞նչ իրօք կարող եմ ես մեկնել զայս բան քո:

Իսկ զի՞նչ ապա իմաստուն մեկնիչ նր: Դուցէ խոստովանի՞ զստութի ամենախալ բանից նր: Ո՛չ անդր, 'ի բաց տար: փակէ այժ՝ թէ զրուցանաւ լռութե զբանս նր, մէ՞ անկարելիութեն տալոյ զմեկնութիւն

ինչ, եթէ 'ի դէպս, և եթէ յանդէպս. և առ չզարթուցանելոյ զմիտս պարզամտաց 'ի քննութի և 'ի տեսութի ամենասխալ բանից նր, արկանէ զբանն 'ի մջ̃ նոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ՝ իբր զբացատրութի նր, գիտելով զամենամեծ համարումն, զոր ունի ազգն մեր 'ի մջ̃ ուղղափառ և ըստ հաւատոյ, և ողջամիտ բանից նր: Իսկ ոչ այսչափ միայն, այլև զատուցէ կոչելն նր զ̃ մեկնչին զբացատրութի լուսաւորչին մերոյ. իբրև զբանս սրց հարց Նիկիոյ ժողովոյն, կամ հանգանակի նր, ջատագովէ ևս, և ասէ, թէ Ներ——սէս ասնէ, "իբր զի "Նիկիականն հիմն է հանգանակին մերոյ (որպ և այլ "հանգանակաց)": Աստի և զ̃ այսմ զ̃ պաշտելի մեկնչիս, խրատամիք լինի զմ̃ բացատրութիս և զմեկնութիւնս վարդապետաց, զոր տան սր̃ գրոց, յանուն հեղինակաց նց կոչել. զորօրինակ զմեկնութի բանից սրյն Մատթէի աւետարանին, սրյն Մարկոսի, թղթոցն սրյն Պօղոսի, եւն. ասել, թէ սրն Մատթէոս, սրն Մարկոս, սրն Պօղոս, եւն. այսպէս գրեցին, փխ հիմն մեկնութեանց և բացատրութեանց նց՝ է աւետարանն սրյն Մատթէոսի, սրյն Մարկոսի, թուղթքն սրյն Պօղոսի, եւն: Մարթեօք յողջամիտ բանագիտաց կարող է անխռով և անվրդով ունկնդնել այսպիսի անուօտ և դժպատեհ զրուցաց: Նմ̃ լաւագոյն է ասօղն լռել, քան և ևս հետամուտ լինել:

Ասացաք 'ի վերոյ, եթէ "իմաստուն մեկնիչն նր "յամի կամի զբառս և զբանս նր փոփոխել, և յերկրել "զ̃ մտաց իւրոց, ևս և ընդդէմ նորուն իսկ մտաց": Նա քաջայայտ ապացոյց սորա, թողեալ առ այժմ զայլ բազումս, զայս և եթ առաջի դիցուք: Իմաստասէրն իւր վիճարանելով ընդդէմ առաշօքադաւանից, որք ուրանային զմարդկային բնութիւն 'ի Քս̃, և որք ասէին յերես 22. և 23. "Որ 'ի Հօրէ բնութիւն է՝ նոյն բնաւորեալ է 'ի նր կուսին". հարցանէ. "Մինչ 'ի Հօրէ "բնութի էր, զինչ այլ ինչ բնութիւն յարգանդի "կուսին գտանայր: Ոմանս ած, յորքանեաց չարաչար հայհոյութեանց պտոյտս ընկղմիմ՝ զայդ այդպէս ասելովդ.... (թէ) որ 'ի Հօրէ բնութիւն՝ բնաւորեցաւ "յարգանդի կուսին. և յաղագս այնր ասի մի բնութի: "Եթէ յարգանդի կուսին բնաւորեցաւ, ապա 'ի Հօրէ

„ոչ էր բնաւորեալ։ Դարձեալ՝ եթէ յարգանդէ „կուսին սկիզըն էառ լինել մի բնութիւն ընդ Հօր, ա„պա նախ քան զխոնարհելն յարգանդ կուսին՝ օտար „գոյր բնութենէ Հօր....։ Դարձ՝ զմի բնութիւնդ ապաքէն „ընդդէմ երկուց բնութեանս ասողացն ասես դու. և որ „երկուսն ասէ բնութիւնս, զԱստուածայինն ասէ և զմարդկայ„ինն դու զո՞վ ուք ՚ի նոցանէ ասես,“ զո՞ր դու զո՞ր ըն-նութիւն ի նոցանէ ասես, զԱստուածայի՞նն, թէ զմարդկայինն, „զմիդ ասելով, կամ ըստ որո՞ւմ յեղանակի“, այս է՝ ըստ որոյ եղանակի։ „Արդ՝ այսպէս շամբուշ խորհրդով „բանդագուշիս,“ են։ Ապաքէն քան զայս արեւու յայտնի է տրամախոսութիւն իմաստասիրին իւրեանց ընդդէմ նոցին խակ հերետիկոսաց, որք զմի բնութիւն դնէին ՚ի Քրիստոս, և ասէին ևս՝ թէ բնաւորեցաւ ՚ի կուսին որ ՚ի Հօրէ բնութիւն էր, և առ երեւոյթս համարէին զամենայն մարդկային ներգործութիւնս Քրիստոսի. միանգամայն և ասէին, թէ նոյն բնութիւն բնաւորեցաւ յարգանդի կուսին. ընդդէմ որոց զինի նա, թէ զո՞ր բնութիւնն ասէք բնաւորեալ ՚ի կուսին, զԱստուածայի՞նն, թէ զմարդկայինն, ասելովդ՝ մի բնութիւն, կամ ըստ որո՞յ եղանակի ասես մի բնութիւն։ Իսկ զի՞նչ ապա իմաստուն մեկնիչն նորա, յերեսն 23. ծանօթ. 1. ասէ. „Զայս բան իմաստասիրին գեղեցիկ „ընդլայնէ նորին Ներսէս Լամբրոնացի յասելն զՅունաց՝ „յառնենաք. ՚ի տպ. յեր. 32. „Զմի Քրիստոս յերկուց ճանա„չեն բնութեանց (Յոյնք). վասն զի Աստուած է և մարդ, և ոչ „թէ ՚ի ճանաչելն՝ զանձառ խառնումն բաժանեն....։ „Արդ միոյ քնի՝ որում մեք անուն տամք, նոքա բնութիւն ՚ի „վերայ յաւելեալ զէութեան հաստատութիւն յայտ առնեն. „և որում մեք մարդկութիւն, նոքա դարձեալ յաւելուածով „բնութեան անուան՝ զէութիւն մարդոյն ստուգեն. և „զմիութիւն ՚ի վերայ սոցին՝ հաւասար մեզ ամբողջ հաւա„տան, չունելով անաչառ քննութիւն՝ առ այս ինչ մեզ „նիւթ հակառակութեան“։ Ոչ այլազգ վկայէ և երանե„լին Գրիգորիոս ՚ի թուղթն առ Հայս՝ յասելն „Երկուս „բնութիւնս խոստովանելով ՚ի վերայ միածնի Որդւոյն „Աստուծոյ տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի. յետ ըստ ամենայնի նմանե„լոյ նորա մեզ՝ առանց մեղաց. ոչ այլ ինչ ասեմք կամ „իմանամք. բայց միայն՝ զի Աստուած գոլով և Հօր համագոյ՝

„մարդ եղև ճշմարտապէս մարդկան համագոյ“։ Որդարև եթէ ոք ը̅ հասարակաց ասից՝ կաթիլ մի խելս ունիցի, ապաքէն յայտ յանդիման տեսանէ զանդէպ և զանյարիր, ես և ընդդէմ տրամախոսութն և մտաց իմաստասիրին իւրոյ, զյառաջբերութի բանից նըյն Ներսեսի լամբրօնացւոյն, և զայն ես՝ իբր ընդլայնութն վերօգրեալ բանից իմաստասիրին իւրոյ, ը̅ ամի իբրև զպխին՝ ը̅ առակին, թէ ձուկն որսամ, որում ողջունէ զառաւօտն։ Օ՞ի ո՛ արդեօք երբէք յիրազեաց, եթէ ՚ի Յունաց, և եթէ յայլոց ողջամիտ ազանց, եթէ Հայք ոչ ընդունին ՚ի ՔՍ զկատարեալ ածութի, և զկատարեալ մարդկութի. և թէ ՔՍ էր ճշմարտապէս կատարեալ Ած, և կատարեալ մարդ. ոչ և խոկութի այնպէս ընդունին Հայք. և ոչ երբէք ազգն Հայոց եդ զմի բացարձակ բնութի ՚ի ՔՍ, զածայինն միայն, կամ զմարդկայինն, զորօրինակ ՚ի վերոյ ասացաք, (զորմէ և ոչ մի ինչ խօսի Լամբրօնացին, ոչ գոլով այն նպատակ բանից նր.) բաց յոմանց հերետիկոսաց Սոյրադոմեցւոց, են. ընդդէմ որոց զինի աստ իրաւամբք իմաստասէրդ անոճանեալ։ Որդ՝ զի՞նչ համեմատութի, և կամ զի՞նչ վերաբերութի բանից սոյն Ներսեսի լամբրօնացւոյն առ վերօգրեալ բանս իմաստասիրին իւրեանց. զի սին Ներսէս լամբրօնացի՝ զճշմարտութիւն և զուղղութի, եթէ ըստ մտացն, և եթէ ըստ բանիցն՝ զդաւանութեանն Յունաց, որք ասէին, եթէ են երկու բնութիւնք ՚ի ՔՍ՝ ածային և մարդկային՝ անքակ և անբաժան ՚ի միում անձին բանին միաւորեալ, ցուցանէ՝ թէ նոյն է ը̅ ասելոյն մերոյ, թէ ՔՍ ունի զճշմարիտ ածուի, և զճշմարիտ մարդկուի, կմ թէ ՔՍ է ճշմարիտ Ած, և ճշմարիտ մարդ, և եթէ Յոյնք յաւելմամբ բնուէն ՚ի վը̅ փոցուն, զէութեցն հաստատութի յայտ առնեն, և ստուգեն զէութի երկոցուն եւ բնութեց, չունելով անուշառ քննութի առ այս ինչ մեզ նիւթ հակառակութե, զի նոյն է Ած և մարդ ասել զՔՍ, և երկու բնութի։ Նա զայսոսիկ յետին բանիւ կարծեմք խորհրդով զանց արարեալ մեկնչի Օձնեցւոյն, զի իմաստասէրն իւր թէպէտ և ընդունի զՔՍ յերկուց բնութեց, այլ յածայնոյն է ՚ի մարդկայնոյն, այլ ոչ ընդունի զերկուս բնութիս

Քնի, այլ զմիաւորեալ մի բնութիւն, որպէս 'ի վերոյ ցուցաք:

Ասացաք 'ի վերոյ, թէ զայս և եթէ առաջին դիցուք: Բայց կարևոր համարիմք զմիւս ևս 'ի վր յաւելուլ, որ անցանէ զանցանէ զառաջնովն: Լո՛ւր աղաչեմք:

Օձնեցին իմաստասէրն նշ, յերեսն 34. 'ի ցուցանելն հակառակամարտին, թէ առերևոյթ և նմանութիւ էին երևելն Քնի, ուտելն, ընթանալն, ևն. և ոչ իսկապէս. առարկելով 'ի նը գրոց, թէ առ Աբրահամու ևս երևեցաւ, ճաշակեաց, և ոտք հոտցին սակի. պնդէ թէ նոքին ըստ անուանց միայն ասէին երևիլ, ճաշակել, ևն. և ոչ ըստ իսկական գործոյն՝ և իրացն, վասն չունելոյն զմարմին. իսկ 'ի Քն սոյն ըստ անուանցն, և ըստ իսկական գործոցն, վն ունելոյն զիսկական մարմին. և թէ չէ պարտ բաղդատել զերևոյթն ընդ իսկական գործոյ. ապա թէ ոչ՝ եթէ երևութական լինէին իսկական գործքն Քնի՝ որ 'ի մարմնի, առ երևոյթ լինէր և ծնունդն, աճումն, մահն, թաղումն, յարութիւն, համբարձումն. և զի նա իբրև զլուխ անցեալ ընդ այնոսիկ՝ զբոլոր զառ 'ի յեկեղեցւոյ զհետ հրաւիրեալ կոչէ զպատրաստեալ իւր անդամսն, ապա ըստ քեզ և մեր ամենեցուն ամ՝ յոյս և ակնկալութիւ առ հանդերձեալ միաւորութիւն ընդ Քնի ընդ գլխոյ մերում լինին սուտ և երևութիւք: Զի՞մ ջանաս, ասէ, փոփոխել զմակագրութի անուանն, և դնել զայլոյ ուրուք անուն, այլ՝ փոփոխել զանուն առ երևոյթ գործոյ ըստ իսկական և իրական գործոյ. յորմէ հետի են ստացուածքն. և կամ թէ յեղանակել զբանն՝ ոչ որպէս ինքն խնդրէ, այլ՝ մեկնել և իմանալ զբանն՝ ոչ որպէս է ըստ ինքեան իմացուած նր: Այդ զքեզ ներխորհրդումն բանի, և մի զխորհուրդ բանին առ քեզ լանդամտեալ թիւրեսցես, այլ՝ խելամուտ լեր հարազատ իմացուածոյ բանին, և մի զբանն ըստ քմաց քոց թիւրեսցես: Եթէ այս է հարազատ և իսկական իմացուած առաջարկեալ բանից Օձնեցւոյն, և որոց զկնի, թէպէտ և գրութի նր է խառն և անկարգ, թողումք դատել ամենեցուն, որք փոքր մի խելամուտ իցեն տրամաբանական իմաստից. և համարիմք, եթէ

յանձնարիցն է այլազգ ինչ իմանալ ումեք: Եւ ահա նորին իսկ բանք:

„Մի՛ բաղդատեր զայժմ ՚ի միմեանց տարբերեալսն.
„քանզի անդ անմարմնաբար և միայն ձևացութբ ներ-
„գործութի. իսկ աստ մարմնով և հանդերձ ճշմար-
„տութբ: Կերակրեցաւ առ Աբրահամու. ճաշակեաց և
„ընդ աշակերտսն. անդ յանմարմնուն. և աստ ՚ի մարմ-
„նաւորութեան. ուստի յայտ է՝ եթէ այն նմանութի
„գործոյ. իսկ այս՝ գործ ճշմարտութեամբ: Եթէ
„զգործս առ գործն տարեալ հաւասարեսցես, հաւասա-
„րեալ լինին և երեւմունքն՝ առաջինն և վերջինս:
„Զնորին զհետ երթիցէ ծնունդն, աճումն, մահն, թա-
„ղումն, յարութին, համբառնալն. ընդ որս ինքն ան-
„ցանելով ըստ նմանութն գլխոյ՝ զբոլոր զառ ՚ի յեկե-
„ղեցւոյ զհետ հրաւիրել կոչէ զպատշաճեալ իւր անդամ-
„սըն. և ամենայնքս մեր՝ ընդ քեզ՝ ստուեր և երեւութիք
„առ ՚ի յայսն ակնկալութիք: Աստուստ ապա և Մանի և
„Մարկիոն կենդանացին՝ զկնի այնքան ամաց՝ տեսանե-
„լով զքեզ իւրեանց եղեալ զարմ: Կորուսանես աւէ
„մարգարէն զատութն խօսօղսն. եթէ կորուսանէ բանն,
„առաւել ևս գործն լինձեռէ կորուստ: Աբրահամ հայր
„մեր ոչ ապաքէն ՚ի գործոց արդարացաւ՝ ասէ մեծն
„Յակոբոս. ընդ է՛ր զատութի, և ոչ զհաւատս ՚ի բանս և
„՚ի գործս առփոփձիս ցուցանել, կամելով լինել որդի
„անդրանիկ ՚ի հօրէ սատանայէ: Ընդէ՞ր ջանաս փոփոխել
„զմակագրութի անուանն, և դնել զայլոյ ուրուք անուն,
„յորմէ հեռի են աստուածքն. և կամ թէ յեղանակել
„զբանն՝ ոչ ոք ինքն խնդրէ: Մուտ զքեզ ներխորհր-
„դումն բանի, և մի զխորհուրդ բանին առ քեզ բըռ-
„նադատեալ թիւրեսցես", և որ զկնի: Եւ յերեսն
51. և 52. զնոյն կրկնեալ ընդդէմ հերետիկոս հա-
կառակամարտին՝ ասէ զԱնէ. „Ապա ուրեմն ընդ օրինք
„մարմնոյն իւրոյ՝ զոր ՚ի մէնջն ընկալաւ, զմերն կերեր կիրս.
„և ոչ ընդ անձութեն, ոչ քեզ թուի ասել: Զի եթէ ընդ
„անձուն հնար էր զմարդկայինս կրել կիրս, ապա թեր-
„ևս և ոչ մարմին էր զգեցեալ ՚ի կուսէն ՚ի մերմէ բնու-
„թէս, այլ զնոյն զնախահայրց ներպաշնել զերևութական
„տեսութի. ոչ և առ Աբրահամուն եկեր, և ը՛ Յակոբայ

„եղև կառուակից․ ցԱդամ և ցԿայէն անգիտաբար հարցա-
„նէր։ Իսկ եթէ այն՝ նմանութիւնք և օրինակք էին ճշմար-
„տութեան․ իսկ այս նոյն ինքն ճշմարտութիւն և ոչ օրինակ․
„ապա յայտ է ուրեմն, թէ ճշմարտութի էր և երե-
„ւումն, ճշմարտութի էր և երևեալն․ ճշմարտութի էր և
„կերպն, ճշմարտութի էր և կերպքն։ . . . Իսկ ճշմարտութի
„կոչեմ զիրն, և ոչ զանունն միայն։ Արդ ուր իր է երե-
„ւելն ՚ի կնոջէ, իր ուրեմն էին և ներգործելքն ՚ի նմանէ
„և կերցեալքն։ Իսկ ուր զմարմին Բանին ոչ յայլմէ իմիքէ
„ծանեաք, այլ ՚ի կուսէն, այսինքն ՚ի մարդկային զանգ-
„ուածոյս, նոյնպէս և զկերպն մարդկայինս ընդ մեզ և զմերն
„ասեմ կրեալ Բանի, և ոչ ածայնոյ և կամ այլոյ ու-
„րուք։“

Այլ զինչ առ այս իմաստուն և նորահայեաց մեկնիչն նր։ Այլ աղաչեմ զք, մի ինչ դժկամակ համարեսջիք, զի ՚ի խոյզս քննութեան ճշմարտութեան անաչառ փափկի համօրէն ողջամիտ գիտնականք, զի ոչ մարթ է ընդ անձանց, այլ ընդ կարծեաց նոցին՝ ուր ուրեք վրիպակ գտանին ՚ի ճշմարտութե։ Ա․ Ք․ Մեկնիչն աւգերեան մեկնիչն իմաստակին իւրոյ, ընթերցեալ առա, թէ „Քրիստոս ջանայ
„փոփոխել զմակագրութիւն անուանն, և դնել զայլոյ
„ուրուք անուն․ յորմէ հեռի են առաքեալքն“. Համարեցաւ, եթէ իմաստասէրն իւր խօսի զփոփոխութէ անուան իւրոյ․ և զմակագրութեն, և զփոփոխութէ կամ զայլայլութէ բանից իւրոց, զոր և ոչ իմաստասէրն իւր յերազեաց․ իւրզի ընդ վերագոյն ասացելոցն՝ խօսի նա զփոփոխութէ լոկ անուան և նմանական գործոց ընդ իսկական գործոց։ Այդ ասէ ՚ի ծանօթութեն 4. յերեսն 35,
„Մոլին մեկն բանից լուծանի ընդ տարակոյս, թէ զիարդ
„թշնամիք սքանչելի հայրապետին յաւուրց անտի նր
„սկսեալ են հնարել եղծանել զանուն նր, փոփոխութեմբ
„մակագրութեն անուան, կամ աղաւաղելով զգրուածս
„ինչ նր, և կամ յօդելով բանս անյարմարս յանուն նր,
„զորմէ քաջ գուշակութեմբ խօսեցաւ հեղինակն պատ-
„մութեն, միայն պակասէր նմա այս բան իմաստակին,
„որով ապացուցանէր զիւր անպարտելի ձեռնարկութիւնս․
„Այսպիսի անձք անցին և ընդ ոչ սակաւ գրուածս այ-
„լոց մեծամեծ վարդապետաց, զորօրինակ Ակեփելեանի,

„ Հերոնիմոսի, Օգոստինոսի, ևն. որպ յայտ է բանադի-
„ տաց :“

Մեծ սքանչելի նրբատեսութիւն մէկնչիս, որ զորս ենն ոչ տեսանէ, և զորս ոչն են տեսանէ: Եւ ոչ այսչափ միայն, այլ և ասէ զայն եղջերուէաքաղ իբր յառաջատեսութեան իմն գուշակեալ Հեղինակին պատմութեն, այն է՝ Մ. Խ. Միքայէլին չամչեան. զոր եթէ նա ունէր 'ի ձեռին և տեսանէր, որպ նա ինքն տեսանէ, ապաքէն „ապացուցանէր զխուր անպարտելի ձեռնարկութիս“: Եթէ անպարտելի ձեռնարկութենն ապացոյց՝ է կեղծուպատիր ցնորք և եղջերուէաքաղ. զինչ լինիցի ձեռնարկութենն զօրութի՛, բայց եթէ ամենապատիր ցնորք երևութից, որպ ինքնին իսկ յայտ է: Այն զի՝ „սովին մեկն բանիւ „ասէ, լուծանի ամ տարակոյս“. և թէ զինչ տարակոյսք լուծանին, և յորոց մնաց, ցնա իսկ պարտ է հարցանել, որ այսչափ սրատես է, և տեսանէ զորս ոչն են, և զորս այլք ոչ տեսանեն: Արդարև կարծեմք, եթէ ներելի եւ լինէր այս մեկնիչ, եթէ պատմէր տեսեալ յիրազի զայս ամ ը օրինակի Ղազարու կաթուղիկոսին ջահկեցւոյ, զորմէ ասի՝ թէ տեսեալ 'ի գիշերի զքն Ներսէս լամբրոնացի, ասէ ցնա՝ թէ հայր որ ընդէր գրեր ես յառեննաբանութի քում զերկուս բնութիս Քնի, ևն. և նը պնդի տուեալ՝ ասէ, թէ ես ոչ եմ գրեալ, այլ ախտարմայքն են մուծեալ: Այլ զարմանք մեծ այն են, զի այսպիսի և այսչափ նախադատութի և կրկ պաշտպանութեան պաշարեալ մեկնչի սորա, զգերանն յիւրում ական ոչ տեսանէ, և ջանայ զկարծեցեալ շիւղն հանել յականէ ընկերին: Բայց գոնէ աստ 'ի խրատուէ իմաստասիրին իւրոյ պարտ էր զգաստանալ, և իմանալ, և մեկնել զբանս մատենագրաց, որպ և զիմաստասիրին իւրոյ. որպ ինքն խնդրէ, խելամուտ լեալ հարազատ իմացուածոյ բանիցն, և ոչ յեղանակել և փոփոխել, և ը քմաց իւրոց ձեւել: Այլ զայսպիսի արգասիս յիրաւի սեփական տեսանեմք այժմ անդաստանի Երանելեաց կղզւոյն, որ անաշխատ, և առանց քրտնաջան մշակութեն հայթայթ բուսուցանէ զանլուրս և զանկայնս ողջամիտ լսելեաց:

Թէպէտ և այլք շատ են, և առաւել եւ քան զբաւականն, բայց ոչինչ անդէպ լինի յաւելուլ զայս

միւս ևս: Օձնեցին իմաստասէրն նր̄ յերեսն 42. ընդդէմ Հակառակորդին, որ ուրանայր առնուլ Փրկչին զմարմին 'ի մարդկային բնութէ̄, և զածային միայն բնութի̄ դնէր 'ի նմա, յառաջ բերէ զբանս նր̄, և յիրաւի կշտամբէ: „Իսկ „յաղագս այդր երկիւղի, ասէ, թէ մի գուցէ զՓրկչա-„կան մարմինն 'ի մարդկայնոյս ասել Հարկեցիս բնութէ̄, „'ի Հանուր իսկ էակացս 'ի բաց բարձեալ տարար զա-„նուն բնութն̄, ասելով. ոչ ասի այլ բնութի̄, բայց ա-„րարչականն և եթ. և ամենեքեանքս 'ի նմանէ ածան-„ցեալք՝ զնա ունին միայն իւրեանց բնութի̄: Ապա թէ ը̄ „քեզ՝ յերկուց մին պատկանեսցի. կամ զարարիչն թուել „ընդ արարածս, որ է անածութի̄, և կամ զածութն̄ „կարծիս բերել 'ի վր̄ արարածոյս, որ է բազմաստուա-„ծութի̄. և նոյնպէս երկոքին անածութի̄: Այս է քո պան-„ծալի ածաբանութիդ, մանաւանդ թէ յիմարութեդ „ցնցք, զնիւթս զայս յաւէժակից ասել արարչական զօ-„րութեն. բնութի̄, և ոչ ստացուած նմա զսա համարել:"

Բանք առարկութն̄ Հակառակորդին, և իմաստ նր̄ յայտնի է. այլ և պատասխանի Օձնեցւոյն, և Հետեւութի̄ նր̄ քաջագէտ և ճշմարիտ: Քանզի գոլով սովորութի̄ Համօրէն Հերետիկոսաց՝ ոչ 'ի միում և եթ զկայ առնուլ 'ի մոլորութն̄, այլ 'ի մոլորութէ̄ 'ի մոլորութի̄, և 'ի խորոց 'ի խորս գահավէժ ձգիլ. նք՝ զորոց բերէ զառարկութին՝ ոյք և իցեն, եթէ յԻսուքականաց, և եթէ յայլ ինչ Հերձուածոց, որք զմի միայն բնութի̄ ածային դնէին 'ի Քս̄ի, և ոչ զմարդկային, ոչ զկայ առին անդէն, այլ անկան 'ի չարագոյն ևս մոլորութի̄, կամ յանածութի̄, որ կոչի Բնութենական, այն է՝ ը̄ իմիք աղանդն Եպիկուրեանց անած փիլիսոփայից, և որոց 'ի նոցին սակի՝ եթէ նախնեաց, և եթէ արդեաց ևս բազմաց, որք դնեն, թէ բնութին է Այ̄, և Համօրէն նիւթականքս, կամ Հիւլէքն յաւէրժականք կամ յաւիտենականք, ինքնագոյ, և Հոգևորեալ իմացական մօք: Իսկ զայս աղանդ նց̄ թէպէտ և 'ի Հարևանցի յիշատակէ Օձնեցին նաև յերեսն 17. 'ի դիմաց նց̄, թէ „ոչ ասի յարարածականացս ոք բնութի̄. „քանզի արարչականն ասի միայն բնութի̄. իսկ զմարմինն՝ „մարմին Քս̄ի ասեմք. և ոչ բնութի̄ Քս̄ի:" Սակայն

ղանց արարեալ անդէն զայսմիկ աղանդով, զՀակառա-
թի բանից նց միայն կշտամբէ, և ցուցանէ, որք ասէ-
ին զմարմինն՝ մարմին Քսի, և ոչ բնութի։ Այլ աստ
յատկապէս յառաջ բերէ զայն աղանդ նց, և յիրաւի
Հետևեցուցանէ երկուստեք ևս զանածութի նց ասելով,
ապա ըստ քեզ՝ յերկուց մինն պատկանի ասել, կամ
զարարիչն թուել ը արարած, որ է անածութի, իբր-
զի յանՀնարիցն է արարչին լինել նիւթական ինչ. և կմ
զածուն կարծիս բերել ՚ի վր արարածոյս, որ է բազմաստ-
ուածութի, փոխ գոլով նիւթականացս բիւրաղցի և
բազմապատիկ, լինէր այնուՀետև բազմաստուածութի,
և այսպէս երկոքին ևս անածութի. աՀա այս, ասէ, քո
պանծալի ածաբանութիդ, մանաւանդ թէ յիմարութեդ
ցոյցք, զնիւթս զայս յաւէժակից ասել արարչական զօ-
րութեն. բնութիւն, և ոչ ստացուած, այս է՝ ստեղծ-
ուած, նմա զառ Համբաւել։

Իսկ զինչ առ այս իմաստուն մեկնիչն նր։ Ոչ իմա-
ցեալ, և կամ ոչ եղեալ մտադիր ուղիղ բանից Օձնեց-
ւոյն, և աղանդոյն Հակառակորդաց, ընդդէմ որոց խօսի
Օձնեցին, մեկնէ զայն ըստ քմաց իւրոց՝ ընդդէմ մտաց
և բանից իսկ Օձնեցւոյն. յերեսն 43. ՚ի ծանօթութին
1. ասէ „Զայս ձախողակի կարծիս, կշտամբեն յԵւ-
„տիքականս՝ ընդ իմաստասիրին մերոյ և ոմանք յերե-
„ւելի ածաբանից, բերելով առ այս զբանս Տիմոթէոսի
„աղէքսանդրացւոյ՝ կուզն անուանելոյ, որ *զածութին
„ևեթ (ասէ) լինել բնութի Քսի։ Յայտ է թէ ՚ի
„նոյն Հայլին և բանք Հակառակորդին աստ. և յեր. 17.
„զորս և Հերքէ իմաստասէրս„։ Ապաքէն զձախողակի
կարծիս Եւտիքեանց, Կուզին, և որոց ըստ նց, Հերքեաց
լիով Օձնեցին յայլ տեղիս։ Ապա միտ դիր, թէ աստ
զորպիսի կարծեաց և զորպիսի աղանդոյ խօսի. և յայնժամ
խելամուտ լինիս ճշմարտութե բանիցս, և ոչ ըստ քմաց
քոց մեկնես և ծեքես զբանս այլոց, ոպ և կամիս։ Ա-
ղանդն Եւտիքեայ ոչ երբէք եդ, թէ մի միայն բնութի
է Այ և արարածոց, կամ թէ Ած միայն ասի բնութի,
և արարածք են բնութենակից Այ, և կամ թէ բնութին
է Ած. որ է աղանդն Եպիկուրեանց, կամ Բնութենա-
կանաց, յորմէ Հետևի անածութի, կամ բազմաստուա-

ծութիւն. այլ թէ մի է բնութիւն Քրիստոսի, խառնմամբ կամ շփոթութեամբ, եւն։ Արդ՝ տես՝ թէ որչափ հեռի է մեկնութիւդ 'ի բանից իմաստասիրիդ։

### Լուծումն Երկրորդ Խնդրոյն։

Արդ՝ կամեցեալ 'ի բովանդակութիւն ածել զգրութիւնս մեր, զոր առ հարկի բացատրութեան իրացն ակամայ յերկարեցաք փոքր մի, յորմէ խորշիմք մեծապէս, մատիցուք 'ի լուծումն երկրորդ խնդրոյն մերոյ, զոր վճռադրոյն եդաք. թէ արդեօք այս գրութիւն Յովհաննու օձնեցւոյ իցէ՞ այն գիրքն Յովհաննու հայրապետին իմաստասիրի, զոր կոչեն 'ի վկայութիւն ուղղափառ դաւանութեան երկուց բնութեանցն 'ի Քրիստոս՝ որն Ներսէս կլայեցին, որն Ներսէս լամբրոնացին, և այլք։ Եւ զայսոսիկ ես թէպէտ և գիտեմք ըստ կարի համառօտիւ անցանել, բայց երկնչիմք. եթէ առ նոյն հարկի բացատրութեան՝ ստիպեսցուք փոքր մի յերկարել։ Այս՝

Ասեմք, թէ այս գրութիւն, կամ գործ ոչ է ամենեւին Յովհաննու իմաստասէր հայրապետին, զոր կոչեն 'ի վկայութիւն որն Ներսէս կլայեցին, և այլք, որպէս 'ի վերոյ. և ոչ իսկ գործ իմաստուն վարդապետի. այլ է հարազատ գրութիւն և գործ Յովհաննու օձնեցւոյ անիմաստ իմաստասիրի։ Եւ այս եզրակացութիւն քաջայայտ ցուցանի 'ի բազում գլխոց։

Նախ՝ ցուցանի ընդ հետեւորդի 'ի լուծմանէ նախընթաց խնդրոյն։ Քանզի գոլով գրութիւն Յովհաննու իմաստասիրին, ընդ վկայելոյ սրբոյն Ներսեսի շնորհալւոյ, և սրբոյն Ներսեսի լամբրոնացւոյ, եւն. համաձայն դաւանութեան և խոստովանութեան Յունաց, և կաթուղիկէ եկեղեցւոյն, և 'ի նպաստ և 'ի ջատագովութիւն երկուց բնութեանցն Քրիստոսի ընդ Քաղկեդոնի ժողովոյն՝ ընդդէմ միաբնակ հերետիկոսաց. այս գրութիւն զմիաբնակն ուսուցանէ, այս է՝ զաղանդն միաբնակաց, որ զմի միաւորեալ բնութիւն դնէ Քրիստոսի, որպէս ցուցաք 'ի վերոյ։ Ապա ոչ միայն չէ վարդապետութիւն կամ գրութիւն ուղղափառ իմաստասէր հայրապետին Յովհաննու, այլ հակառակ նմա։ Առաջարկութիւնս յայտ է. վասնզի յետ երկար վիճաբանութեան սրբոյն Ներսեսի շնորհալւոյն 'ի դիմաց միաբնակաց ընդ Թէորիանեայ, որ հարցանէր,

և խնդրէր, թէ ընդէ՞ր զմի բնութիւն ասեն Հայք Քրիստոսի, և ոչ խոստովանին ընդ կաթուղիկէ եկեղեցւոյ, և ընդ Քաղկեդոնին որ ժողովոյն՝ երկուս բնութիւնս Քրիստոսի, զաստուածային և զմարդկային 'ի միում անձին Բանին միաւորեալս, ևն. Հուսկ յետոյ վերջ տայ վիճաբանութեան որն Ներսէս Շնորհալին՝ ցուցանելով նմա զգիրս Յովհաննու իմաստասէր հայրապետին, որ զնոյն վարդապետութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ, և Քաղկեդոնին որ ժողովոյն ընդդէմ միաբանակաց հաստատէր. „Ի բազմապատիկ „վկայութիւնք գրոց և իմաստից, զօրաւոր հաւաքա-„բանութիւնք, և մեկին իմացուածովք և ապացու-„ցիւք“: Ապա այս գործ ոչ է նորա:

Երկրորդ՝ բանք ճշմարիտ իմաստնոյն լինին կարգաւորեալ, զի իմաստնոյն է դնել զկարգ՝ ասէ առածն. մեկին ըստ կարի, և բացայայտ՝ եթէ ըստ բանիցն, և եթէ ըստ մտացն, որպէս վկայէ Շնորհալին զգրոցն Յովհաննու իմաստասիրի: Իսկ 'ի գրութեանս յայսմիկ Յովհաննու օձնեցւոյ՝ բովանդակ զհակառակն է տեսանել, զանկարգութիւն, և զխառնակութիւն բանից և իմաստից, որպէս յայտ է մտադիւր ընթերցանելեաց, որք զայս գրութիւն նորա յակն արկանեն: Ապաքէն իմաստունն ջանայ զբանս իւր ըստ կարի բացայայտ և մեկին եղերօք ցուցանել, խորշեալ 'ի խառնիխուռն համաձայնութեանց, և ըստ կարգի եդեալ զդրութիւն իւր, և զցուցմունս նորա, զձեռնարկութիւնս հակառակորդաց, և զլուծմունս նոցին. զի ըստ այսմ և եթ ասի զումեքէ իմանալ, գրել, և խօսիլ իմաստնապէս: Այլ ահա զուրկ է ամենեւին 'ի կատարելութենց աստի այս գրութիւն նորա 'ի խուռն գրութեանս յայսմիկ. խառն վարէ համաձայնութեամբ զեղերս՝ [illegible], հոգի, [illegible]՝ փոխանակ միմեանց. և անձն փոխանակ յատուկ անձին և դիմաց ևս. ուրեք ուրեք [illegible] և [illegible] փոխանակ ինքնագոյութեան կամ ենթակայութեան, և [illegible] փոխանակ գոյութեան: Թո՛ղ զանսովոր և զդժուարալուր բառս, զորս ուրեք ուրեք վարէ. թէպէտ և մեկնիչ նորա ճգնի արդարացուցանել զնա՝ ասելով, թէ այնպիսի համաձայնութիւնք գտանին և 'ի Յունաց բարբառս, ևն. և ըստ թարգմանութեան նոցին բարբառոյ գրէ: Այլ աղաչեմ, ասա

ինձ, թէ իմաստասէրդ քո առ Յոյնս գրէ, թէ առ Հայս. և եթէ առ Հայս՝ ոչ և յայտ է, առ ի՛նչ զհամաձայնութիւն նց, և զանլուր և զանսովոր բարբառս նց 'ի Հայ լեզու յեղանակէ: Որ թողցուք զաւելորդ կրկնաբանութիւն նր, և զմիջահատեալ հատուկտիր բանս նր. Թողումք յիշատակել զանհեթեթ կշտամբանս նր, որովք կշտամբէ զհակառակամարտ հերետիկոսն, զորս համարի լինել իբրև զցուցմունս ճշմարտութեն, յորս և կուտակէ զվկայութիւնս կշտամբանաց նր գլոց, զորոց և մեկնիչ նորա երկիւղածութիւն նշանակէ զտեղիս 'ի լուսանցն:

Երրորդ՝ յաղագս 'ի չփոթ, և յանորոշ բանից վկայութեանց հեղինակաց, զորս յառաջ բերէ, ես և ը անուանց հեղինակաց ինչ նոցին, զորս այլ ը այլոյ յառաջ բերէ, և կամ զորս բնաւ իսկ ոչ եղեն, քաջայայտ ցուցանի, թէ չէ ընթերցեալ նր երբէք, և կամ իմացեալ զբանս նոցին, այլ հանդիպեալ հատուկտիր գրութեանց ինչ սորա և նր, կամ հաւաքածոյ գրութեն ինչ ուրուք ընդդէմ Երևութականաց, օրինակեալ է 'ի գրութեն իւրում իբրև ծնունդս մտաց իւրոց, առանց հասու լինելոյ իմաստից նոցին, որպէս յայտ է ընթերցանելեաց, ես և 'ի մեկնչէ նորա, որ բազում ուրեք ջանայ զայնոսիկ յորոշ միտս վերածել, եթէ մեկնութեն, և եթէ նորոգ թարգմանութեն 'ի բնագրէն Յունաց, եւն: Ասացաք, եթէ զանուանս հեղինակաց ես այլ ընդ այլոյ յառաջ բերէ, և կամ զորս բնաւ իսկ ոչ եղեն. և յայտ է նախ՝ 'ի վկայութէն, զոր 'ի վերոյ յառաջ բերաք, եթէ „նր հարքն 'ի՛ Ափրիկեայ ժողովեալք այսպէս „ասացին“. զորոյ ոչ միայն զբանիցն, այլ և զանուանն ստութի ցուցաք 'ի վերոյ. տես անդ: Երկրորդ՝ դնէ զերկուս հերեսիովտապետս Ատիքէս՝ զառաջին, և զերկրորդ. որ ըստ համօրէն ազանց վկայելոյ ոչ երբէք եղև երկրորդ հերետիկոսապետ Ատիքէս այլ անգիտացեալ իմաստասէր Օձնեցւոյս, եթէ հերետիկոսապետք ոչ միշտ նոյն օրինակ խօսէին, այլ հարկադրեալ յուղղափառ վարդապետաց զբանս իւրեանց յայլ և այլ եղանակս ձևացուցանէին, յորոց և եղեն պէսպէս աղանդաւորք նոցին հերետիկոսութեանց, ես առաւել յիմար

Հերետիկոսապետն Նեստորիոս, որ ուրեք ուրեք ասէր զմարդկու՟ին Ք՟ի խառնեալ ը̅ ա̅ծուէն, և ուրեք ուրեք ընկղմեալ յա̅ծութեն, և անհետ եղեալ, և ուրեք ուրեք բերեալ յերկնից, և՟ն. համարեցաւ, եթէ ը̅ այլևայլ վարդապետութեանցն՝ իցեն և այլևայլ հեղինակք։ Սապէս անուանէ և զՊանդորոս հերեսիովտապետն, որ ոչ երբէք եղև, և ոչ իսկ յիշատակի բնաւ յայլոց ազգաց. որպ և մեկնիչ ն՟ր վկայէ։ Ըստ այսմ իմա և զվկայութիւնս ինչ յառաջ բերեալս ՚ի Նմանէ յանուն Յովհան հայրապետի Կոստանդնուպօլսի, և Աթանասի, որք ոչ գտանին ամենևին ՚ի գրութիս ն՟ց, որպ և մեկնիչն ն՟ր վկայէ, գուցէ ՚ի մատենադարանս Օձնեցւոյն միայն ծածկեալ կան։

Ապաքէն այս ա̅մ, և որք ՚ի սոցին սակի, զորս յայտնի տեսանէ ա̅մ ոք ՚ի գրութիս ն՟ր, ոչ են գործ և գրութիւնք իմաստնոյ, այլ անիմաստ բանագրի։ Նա չէ իսկ հնար զմտաւ իսկ ածել ողջամիտ ընթերցանողաց, եթէ վերոյիշատակեալ ս՟բ հայրքն մեր՝ որոց իմաստութեն վկայեն գործք ն՟ց, և ամենեքեան, զայսպիսի անիմաստ գրութի՟ համարեսցին, կամ ասասցեն գոլ գրութի կամ գործ իմաստասիրի ուրուք։

Բայց քանզի վախճանն պսակէ զգործն, մեք ևս ՚ի վախճանի զվախճանական տրամախօսութի ն՟ր, և զբանս ՚ի վերջոյ ցուցցուք, որ պսակէ յիրաւի զանիմաստ իմաստասիրութի ն՟ր։ Քանզի կամեցեալ ն՟ր ՚ի քերթողական արհեստէ՝ թէպէտ և ը̅ հայկաբանութես կարի խորթ և անհմուտ, և ՚ի ծառոյն Պորփիւրի՝ ՚ի փիլիսոփայական և յա̅ծաբանական մակացութիս առանձին իմն թևակոխութե՟ սլանալ, զբազում մոլար նախադասութիս, եթէ ողջամիտ փիլիսոփայութե, և եթէ ա̅ծաբանութե յառաջ բերէ, սկսեալ ՚ի 45. երեսէն, մինչև ՚ի 66։ Նա անգէտ գոլով գլխովին սկզբանց մարդկային բնութես, և հանգամանաց ն՟ր, եթէ ը̅ վիճակի սոսկ բնութե ը̅ ինքեան մտածելոյ, և եթէ ը̅ վիճակի և ը̅ պարգևաց ամբողջ բնութեն՝ յորում ստեղծ Ա̅ծ զԱ̅դամ, և եթէ ը̅ վիճակի յանցուցեալ բնութեն՝ յոր անկաւ բնութիս զկնի պատուիրանազանցութեան նախահօրն, և որ զկնի, խառնակէ զա̅մ, և նորալուր աղանդս, և զվարդապե-

տութիւնս՝ եթէ ողջամիտ փիլիսոփայութեան, և եթէ ճշմարտութեան ուսուցանէ։

Նախ առաջին՝ յառարկելն առաջօրադրեալն հակառակամարտին ընդդէմ խակական կրից քաղցու, և ծարաւոյ Պ.ծի, Ե.Ն. յերեսն 45. և 46. թէ „Ո՞չ վայել „է Այ քաղցնուլ. զքաղցն իմանամ, և ոչ մարդկայ„նոյն օրինակեալ ներքստակեմ զնորայն. զի մարդոյս „քաղցնուլն զապականութի ներգործէ, և նոյն ինքն „քաղցն ոչ այլ ինչ, եթէ ոչ ապականութի. Այլ ես „նախկին, զի և ոչ ի՞նչ գիտեմ զձայինն հարկաւորա„գունիցն նեղքոյ անկեալ բնութե. զի թէ այս էր, հարկ „էր և մարմին ասել զոլ զպարզն և զանմարմին զօրութին“։ Իւ այսմ առարկութե նախ պինէ իրր հետևեցուցանելով, զոր նոքա համարձակաձայն խոստովանեցան միշտ, և որոց ցայսվայր ընդդէմ գրեաց և նա. այլ զորօրինակ յիշատակեցաք ՚ի վերոյ, բաղում են նր աւելորդ կրկնաբանութիւնք. ասէ. „Սուտ լինի (ապա) ճ ձեզ՝ ՚ի կնոջէ և „մարդ զնա լինել զրեալն. այլ զինքեանն բերեալ երե„ւեցոյց մեզ յերկնից մարմին։ Ընդ ձեռն որոյ երթեալ „հանդիպիս՝ զոր միշտն խնդրես, Նուրիքեայ առասպե„լականին. օրինակ իմն, մանուկ մոլորեալ՝ ուրանօր և „երթիցէ, զմայրն վերաձայնեալ կարդայ“։ Այս դարձեալ պինէ երկրորդ՝ առարկութե. „Դարձեալ՝ զի և որ ՚ի մեզ „բնաւորականքն են՝ հոգեկանք և մարմնականք, ոչ են ա„պականիչք և կամ ապականութի բնութեա մերում։ Քանզի „ապականութի ներլինելութե ներհականայ. և ներհակքն „ոչ կարեն համանգամայն ՚ի միում և ՚ի նոյն ժամանակի „բաղկանալ. իսկ քաղց և ծարաւ և աշխատութի և „տրտմութի և հոգք և երկիւղ և ցասումն, ես և անգիտութի, „և որ սոցին նմանք՝ համանգամայն ընդ լինելութե բանին առեալ „լինի մարդումս. ապա ուրեմն և ոչ են այսոքիկ ապա„կանութի. զի եթէ էր ապականութի, ոչ կարէր ՚ի „միասին ընդ գոլոյն բաղկանալ. այլ են բաղկացականք „գոյացութե“։ Մի՛ սքանչելի նորաձայն և նորալուր վարտապետութեա, եթէ ՚ի մարդկայինս բնութե, զորօրինակ յԱդամ, ոչ կարեն լինել սկզբունք բնական ապականութե և այլայլութե. „Զի և որ ՚ի մեզ բնաւորականքն են՝ „ասէ, հոգեկանք և մարմնականք, ոչ են ապականիչք և

„կամ ապականութիւն բնութեանս մերում“։ Իսկ թէ հարցանես՝ առ ի՞նչ. ահա զպատճառն 'ի վեր ածէ. „Քան-„զի ապականութիւն՝ ասէ, ներլինելութեան ներհակաց. և „ներհակքն ոչ կարեն համանգամայն 'ի միում և 'ի նոյն „ժամանակի բաղկանալ“։ Յօրեալ է արդեօք նա զսկիզբն տրամաբանից՝ 'ի ճառն որակութեան, եթէ ներհականք, այս է՝ ներհական որակութիւնք միանգամայն 'ի նմին ենթակայի ոչ կարեն գոլ 'ի միասին, զորօրինակ ջերմութիւն և ցրտութիւն 'ի նմին ենթակայի, որպէս 'ի ձեռին, կամ 'ի յոտին. զի մարթ է լինել ջերմութեան 'ի միում մասին՝ 'ի սրտին, և ցրտութեան յայլում՝ զորօրինակ յոտին, ևայլն։ Բայց նախ՝ ոչ իմացեալ սորա զիմաստ սկզբանս, յայլ սկիզբն վերածէ. զի ներհականքն՝ ասէ, ոչ կարեն համանգամայն 'ի միում և 'ի նոյն ժամանակի բաղկանալ. և զարմանամ յիրաւի, թէ զիա՞րդ նորին Ներսէս շնորհալին, որ զգիրս Յովհաննու իմաստասիրին գովէ, ոչ իմացաւ զայս սկիզբն Օձնեցւոյն, և գրեաց յերգս պաշտաման եկեղեցւոյ, որ յամենայն կիւրակէս երգի, թէ „Նորաստեղծեալ՝ բանն յանէից, 'ի „սկզբանէ՝ զերկինս երկնից, և զերկնային՝ զօրս անմարմ-„նոց, իմանալեացն զուարթնոց, և զգալի՝ տարերց „քառից, հակառակաց՝ միաբանից“. և ոչ գիտաց. թէ ըստ Օձնեցւոյն ներհականք կամ հակառակք ոչ կարեն համանգամայն 'ի միում և 'ի նոյն ժամանակի բաղկանալ։ Իսկ այն՝ զի հասարակաց է կարծիք և համարումն, ես և անուսումն մարդկան, թէ ենթաղունեալք ամենայն 'ի չորից տարերաց են բաղկացեալ 'ի ներհականաց միմեանց, այս է՝ 'ի հողոյ, 'ի յօդոյ, 'ի ջրոյ, և 'ի հրոյ։ Երկրորդ՝ զհետ գայ այսմ սկզբան նա, թէ ըստ նորա՝ ամենայն տարրականքս, ոչ միայն բուսականք և կենդանիք, այլ և համօրէն մարմնական խառնուածք՝ անապական արարչագործեցան. զի 'ի լինելութեան իւրեանց անդ ոչ կարէին բաղկանալ յապականիչ սկզբանց։ Իսկ թէ քանի անտեղի և բացարձակապէս սուտ իցէ այս, գիտեն ամենեքեան, նաև յետին տխմարքն 'ի մարդկանէ։ Երրորդ՝ զպատահական զապականիչ և զայլայլիչ կիրս մարդկային բնութեան խառնէ ընդ գոյացական սկզբանց բաղկացուցչաց նա, յաւելն՝ „իսկ քաղց և ծարաւ և աշխատութիւն... ոչ են ո-

„պականութի․․․․ այլ են բաղկացականք գոյացութեն“։ Այլ չեն ինչ զարմանք, զի զներածուին ևեթ առ տասն ստորոգութիւն Արիստոտելի, այս է՝ զհինգ ձայնն Պորփիւրի ’ի հարևանցի միայն ընթերցեալ է, և ոչ զճառս տասն ստորոգութեանցն Արիստոտելի, առ խելամուտ լինելոյ բնութեանց գոյացութեանց և պատահմանց, և սկըզբանց նց։

Երկրորդ՝ առ ’ի ցուցանել նր, թէ այս կիրք, քաղցնուլ, ծարաւիլ, տրտմիլ, աշխատիլ, են. են բնականք, և գտանէին յԱդամ ’ի դրախտին յառաջ քան զմեղանչելն. վս ցանկութեան՝ ասէ յերեսն 48. „Իսկ զցանկութիւն յորոց ցանկացաւն հրաժարեցուցեալն „պտղոյ՝ խմանամ“. որպ եթէ յորկորստութէ շարժեալ Ադամ եկեր զարգելեալն պտուղ։ Եւ վս տրտմութեան ասէ. „Եւ զոր ասէն, Ադամայ ոչ գտաւ օգնական նմա, „այսուհետև զտրտմութի նշանակէ զնախաստեղծին, զայս „’ի կենդանեացն զուգակենակցաբար ըն ազգի տեսանելով „փայելչացեալս, յաղագս նորին տրտմէր ը իւրն միայն „անտուն ամայութի և զրկանս“։ Արդարև լուեալ էի ’ի կանանց և ’ի պառաւանց, թէ Ադամ, ցորչափ չև էր ստեղծեալ Եւա՝ կայր տրտում, և ոչ ծիծաղէր. իսկ զկնի տեսանելոյն զնա՝ ժպտեաց, և ուրախացաւ։ Կարծեմ, թէ և Օձնեցին ’ի նոցանէ լուեալ՝ գրէ զայս։ Այլ արժանի ցուցմանս ըստ արժանահաւատ վկայից նորա։

Երրորդ՝ դնէ յերեսն 48. թէ այս բնական կիրք զգայական մասին գրեթէ ըն նմի էին ’ի յԱդամ յանմեղութե վիճակի. որպ և են այժմ ’ի մեզ զկնի մեղացն՝ տուեալ զնոսա ’ի ձեռս առաջնորդականին, ըստ անձնիշխանութե, զի ’ի գործ ածեալ զնս առ բարին՝ շահեսցի զվարձս բարիս առ յաւիտենական կեանս, և ’ի գործ ածեալ առ չարն՝ ստասցի զպատիժս և զմահ. և զբանսն Պօղոսի՝ որ զայսմ վիճակէ՝ եթէ զտեսանելոյ զայլ օրէնս յանդամս մեր, և ի թէ զսերմանելոյն ’ի մարմին կամ ’ի հոգին, և զորս զկնի, համարի լինել և յԱդամ յանմեղութե վիճակի. այսուհետև ևեթ տարբերեալ, ասէ, զի դժուարաշարժ էին առ մեղսն յայնժամ, և դիւրաշարժագոյն առ բարին, իսկ այժմ ընդ հակառակն՝ են դիւրաշարժ առ

մեղսն, և դժուարաշարժ առ առաքինութիւն։ Որովք յայտ-
նապէս հակառակի վարդապետութեան հաւատոյ, և համօրէն
ածաբանից, եթէ համօրէն շարժումն և կիրք զգայական
մասին մարդոյ պարգևօք ամբողջ բնութեան և սկզբնական ար-
դարութեան ամենեքին հպատակ էին իշխանութեան հոգւոյ և բա-
նականին 'ի նախաստեղծ հայրն մեր, ցորչափ էր 'ի պատ-
ուիրանապահութեան, և բանն հպատակ Ա՟Յ. իսկ պատուի-
րանազանցութիւն, որ հոգին ապստամբեցաւ յԱ՟Յ, և կորոյս
անհնազանդութեամբ զպարգևս ամբողջ բնութեան և սկզբ-
նական արդարութեան, սոյնպէս և զգայական մասն ապս-
տամբեցաւ 'ի հոգւոյն և 'ի բանականէն, և ընկալաւ
զվէրս և զլուցկիբ մեղաց դիմելոյ առ չարն։ Նա ահա
քաջայայտ բանք նր՟՝ յերեսն 48. և որ զկնի։ „Արդ՝
„յայտ է, ասէ, եթէ ըստ բնութեան և նախ քան
„զյանցանսն այսուքիկ, և ոչ յետամնականաբար 'ի
„մեղացն 'ի ներքս անկեալ 'ի բնութիւս. որ և քեզ թուէ-
„ցաւ ասել։ Բայց փոքի մի և նոյն անձնիշխանութիւն առաջ-
„նորդականին՝ յերկուս կողմանս հակամիտեցի յարձակ-
„մամբ ցանկութեան, երկատեսակ իմն սոցայն կարծեցի գոլ
„տրամադրութի. որ մին հոգւոյն անուանի, և միւսն
„մեղաց։ Օրէնք հոգւոյն կենաց ազատեցին զիս յօրինաց
„մեղաց և մահու՝ Պօղոս ասէ։ Նա եթէ՝ տեսանեմ
„այլ օրէնս զինեալ հակառակ օրինաց մտաց, և գերեալ զիս
„օրինօք մեղաց՝ որ են յանդամս իմ։ Արդ ոչ եթէ ներքս-
„ածողականք են մեզ մահու և ապականութեան. քանզի
„քաղցն և տրտմութիւն և այլքն ամենեքին, և կմ՟ լինքեանք
„սոքա ապականութիք իցեն. այլ 'ի ձեռն առնլոյ առաջ-
„նորդականին, որ երկրագործն զսերմանսն սերմանելով
„նոքօք առ մարմին՝ 'ի մարմնոյ անտի հնձեսցէ զապակա-
„նութի. և սերմանելով 'ի հոգին՝ 'ի հոգւոյ անտի հըն-
„ձեսցէ զկեանսն յաւիտենից։... Արդ՝ յայտ է յասա-
„ցելոց անտի՝ և փ՟ նախաստեղծին ասել, թէ ցորքան
„զպատուիրանապահութիւն թեւակոխէր, նոքումբք այ-
„սոքիւք բնաւորականօքս ընդդիմամարտեալ 'ի բաց
„յինքենէ հալածէր զմահն և զապականութի". այս է՝
նախասացեալ նր՟ կրիւքն ցանկութեան, տրտմութեան, ուրա-
խութեան, ուտելոյ, և որ 'ի կարգին, անձնիշխանութեամբ՝ ցոր-
չափ էր 'ի պատուիրանապահութեան՝ ընդդիմամարտեալ,

'ի բաց յինքենէ հալածէր զմահն և զապականութիւն։
,,Սու այն յարատևողագոյն գոյացութի՞՝ անճառելեաց եր-
,,թեալ հանդիպանայր կենաց". այս է՝ կացեալ ընդ
երկար ժամանակ առանց մահու երթեալ հասանէր ան-
ճառելի կենաց։ ,,Իսկ յորժամ առ պատուիրանազան-
,,ցութիւն 'ի վայր սողոսկեալ անկաւ, յորմէ և մեղացն
,,եղև բողբոջ, յայնժամ ընդ լծով մահու և ապակա-
,,նութեն մտեալ հնազանդիւր։ Սու այսպէս՝ ոչ ստեղծիչն,
,,և ոչ ստեղծեալն 'ի նմանէ, այլ՝ ինքնակամութի ստեղծ-
,,ուածոյն և պատրանք բանսարկուին զմահն և զապա-
,,կանութիւն 'ի մերումս յարադրեաց բնութեն։ Նայց
,,սակայն դժուարաշարժ առ մեղսն յայնժամ, և դիւ-
,,րաշարժագոյն առ բարիս. որպէս և այժմիկ յապականա-
,,ցուս անկեալ կեանս՝ հակառակաւն այսոցիկ փոխան-
,,գիմք, դիւրաշարժ առ մեղսն, և դժուարաշարժ առ
,,առաքինութիւն փոփոխելով։ Սու զայս այսպէս՝ որպէս յըն-
,,թացման ըմբռնեալ բանիս՝ քոյինն սակս բանի. զի
,,զնոյն ինքն բնաւորականս՝ ապականութի թարգմանե-
,,ցեր. ոչ միայն որք 'ի մարմնումս են յարահիւսեալ՝ աշ-
,,խատութիւն, և քաղցն, և քունն, այլ և որ յոգւոյ են
,,եռատեսակ մասունք, խոհականն, և ցանկականն, և
,,ցասմնականն. որք են ոչ այլ ինչ, այլ բնաւորականք,
,,և բնութիւնք մարդկայինս կազմածիս, հակառակամարտք
,,զլինելոյ պատուիրանապահութիւն առ մահն և ապա-
,,կանութի. իսկ 'ի պատուիրանազանցութենէն՝ վահանընկեց
,,լինելով մատն եղանին թշնամեացն": Նպաքէն ամ
դք յայտնապէս տեսանէ յայսոսիկ, եթէ փոքր մի միտս
ունիցի, զորինչ ասացաք։

Չորրորդ՝ դնէ, թէ ապականութիւն և այլայլութիւն
ոչ եղեն 'ի բնութեն մերում, ոչ յԱ.Ծ, և ոչ 'ի մար-
դոյն, իբր զի ,,ներլինելութեն է ներհական", զոր օրի-
նակ յառաջն յերեսն 46. ասաց. և յերեսն 63. ևս կրկնէ,
թէ ,,քանզի ներլինելութեն է ներհական, որպէս յառաջն
,,ասացի. որ ապականէ զիրն, և գոգցես թէ յանգոյութի
,,զգոյն խնդրէ ներածել . . . . այլ 'ի բանսարկուէն մու-
,,ծեալ": Այս յերեսն 61. ասէ. ,,Իսկ ոմանք յետամտա-
,,կանք 'ի մեզ եղեն։ Յորոց մին 'ի նոցանէ՝ 'ի մէնջ
,,ընկալաւ զսկզբնաւորութիւն, որ մեղքն, որ զպատուիրանն

„ուսոյց արհամարհել. իսկ ոմն յարարչէն պատուհաս
„ընդ յանցանացն 'ի վերայ եդաւ՝ մահն: Իսկ ապա-
„կանութիւն հեշտեանք ասին մահուն. ոչ 'ի մէնջ և
„ոչ յարարչէն յարեալ եղև 'ի բնութիւնս, այլ որս
„գտեալ (բանսարկուին) և կերակուր արարեալ իւր
„զընդ մահուամբ անկեալսն.... Սովաւ առաւել խըն-
„դայր, և չարաչար յուսովն զուարճանայր խաբեբայ
„և պատրիչն մերոյ նախահօր, որպ յաղթեալ նախան-
„ձելոյն. և զանուանեալն 'ի բոլոր գոյացելոցս պատ-
„կեր արարչին խափանել կարացեալ, որում ոչ իցէ հնար
„լուծեցելոյն առ նիւթն՝ յորմէ գոյացաւ՝ վերստին
„միւսանգամ գոյանալ վստահանայր. և վն այսորիկ
„անշունչ և անշարժ նիւթոյն անփոյթ արարեալ՝ միայն
„բանացեալ պահէր զկենդանական շունչն": Եւ յե-
րեսն 65. ասէ: „Որդ՝ երիս եցոյց մեզ բանս զկործան-
„մանն մերոյ տեղիս. զառաջինն՝ մեր իսկ գտեալ և անձին
„մատուցեալ՝ զմեղսն. և զերկրորդն, որ դատէրն զմեզ՝
„զպատուհասն 'ի վն ընկեց՝ Ած, զմահն. իսկ զվերջինս
„հեշտեանս ասացաք լինել մահուն՝ զապականութիւ.
„մանաւանդ թէ յաղթանակ հակառակորդին գտեալ
„զսա խաբէութեն իւրոյ հանդիսի:... Որդ են ծայրքն
„պարզաբար ասացեալ չար՝ և անուամբ և իրօք. իսկ
„մէջն ոչ պարզաբար՝ և ոչ նոյնպէս, այլ 'ի մի-
„մեանց ընկալեալ, և շարամանեալ ընդ միմեանս:
„Քանզի որ ասի մահն, նոյն և քուն ասի. և որ կե-
„նացն է վախճան, սկիզբն է կենաց: Եւ ծայրիցն՝
„մարդն եղև գտող, և բանսարկուն. ոմն զմեղսն, և ոմն
„զապականութին՝ բնութենս առթելով": Այսինքն է.
երկու ծայրքն, որք են մեղք և ապականութիւ, պար-
զապէս անուամբ և իրօք են չար, զի միոյն՝ մր մեղացն՝
գտիչ եղև մարդն, և միւսոյն՝ մր ապականութեն՝ բանսար-
կուն. իսկ մահն՝ որ է միջինն ինչ, կամ մէջն՝ ոչ պար-
զապէս և ոչ նոյնպէս է չար, այլ իբր շարամանեալ,
կամ յարակցեալ ընդ ծայրիցն, մր՝ ը մեղաց, և ը ապակա-
նութեն. և զայս քննեսցուք ստորև:

Այլ արդ՝ հարցանեմ նախ զիմաստասէր անուա-
նեալդ: Ասա ինձ աղաչեմ, գոլով ապականութեն և այ-
լայլութեն յետամուտ մեղաց, և գտիչ նր բանսարկուն,

զի՞նչ մեղս գործեցին անասունք, որոց յետամուտ եղև ապականութիւն անդստին 'ի լինելութենէ իւրեանց. և զի՞ կոչեմ զանասունս ևեթ, և ոչ զհամօրէն երկրաւոր ընական և զտարրական խառնեալ մարմինս, որք անընդհատ 'ի սկզբանէ լինելութեան իւրեանց կան հանապազ յապականութեան և յայլայլութեան: Նա՛և առ ի՞նչ արդեօք բանսարկուն լինէր գտիչ նորա. գուցէ արդեօք մախայր և ընդ նոցա զիւրին յարութիւն, որով ջանայ այլայլել և լուծանել զնոսա յապականութիւն և 'ի տարրական մասունս իւրեանց, զորօրինակ ըստ քեզ եմոյծ զայն 'ի մարդկայինս մարմին: Բայց զայս չէ հնար ասել և կարծել զբանսարկուէն, զի նա քաջ գիտէր, եթէ անհնար է նոցա յառնել յայլ կեանս, գոլով սոսկ նիւթականք:

Հարցանեմ երկրորդ: Արդեօք այսմ հնարից բանսարկուին, այս է՝ ապականութեան, զոր եմոյծ 'ի մարդկայինս մարմին՝ իբր զյաղթանակ զինի մահուն, չէ՞ր հնար մարդկան զդարման ինչ գտանել՝ առ 'ի դերև հանելոյ, և խափանելոյ զխորհուրդս նորա: Այո՛ ասեմ, հնար էր, և գտին իսկ բազումք, և կարօղ են միշտ գտանել, ոչ արդեօք վասն զլխովին սուտ՝ սնոտի՝ և կեղծուպատիր այդր քումդ պատճառի, այլ՝ յայլ սակս. ահաւասիկ զմնացեալ յետ մահուան զմարմինս՝ միայն անապական զբազում դարս. ահաւասիկ և մոմեայք ամբողջ մարդիկ կան միայն ցայսօր 'ի բազում դարուց հետէ. թո՛ղ և զայլ կենդանիս և զվիժեալ մանկունս՝ յօղի՝ կամ 'ի ցքի, և կամ յայլ օգնեղէն նիւթս պահեալս ըստ քեզ անապական յանօթի՝ 'ի տեսարանի բնագիտութեան մեծամեծ համալսարանաց և տէրութեանց:

Հարցանեմ երրորդ: Ապաքէն ըստ քեզ ևս յերեսն 47. Նախաստեղծ ծնօղքն մեր 'ի դրախտին յառաջ քան զպատուիրանազանցութիւն ուտէին 'ի պտղոց ծառոց դրախտին, կամ գէթ կարօղ էին ուտել՝ ըստ հրամանին Այ, և կերակրէին նոքօք. ապա թէ ոչ՝ „աւելորդ վարկանիմ" ասես, „զամենապտուղն զայն տնկագործողին տնկեալ զդրախտն, „և 'ի նմա դնելով զմարդն՝ հրամայեալ անգուստ վայե- „լել նմա": Արդ՝ ասա, թէ զիա՞րդ այն կերակուրք 'ի նախաստեղծ ծնօղս մեր առանց ապականութեան և այլայլութեան կարօղ էին սնուցանել զնոսա, և կամ զիա՞րդ առանց ինչ ընակա

այլայլիչ և փոխարկիչ զօրութեանց կամ որակութեանց եղելոց 'ի նախաստեղծ ծնօղս՝ կարօղ էին զնիւթ կերակրոցն փոխարկել 'ի մարմին, յարիւն, 'ի միս, 'ի յոսկերս, և յայլ մասունս մարդկայինս մարմնոյ՝ 'ի սնունդ և յաճումն նորա : Ապաքէն և համբակք բնաբանութեան, և կամ որք փոքր մի գիտակք իցեն սկզբանց բնութեան, քաջայայտ տեսանեն, և ապացուցանեն, թէ չէ հնար այլազգ լինել, այլ ըստ ընթացից բնութեան : Նա և քանզի որ ներգործէ․ նոյն և կրէ, ըստ ասից փիլիսոփայից․ այսպիսի այլայլիչ և փոխարկիչ բնական զօրութիւնք 'ի նախաստեղծ ծնօղս մեր, ո՛չ և 'ի մեզ, թէպէտ և 'ի նոսա կարի առոյգք և զօրաւորք 'ի նախաստեղծ բնութենն, տակաւին գոլով մարմնաւոր զօրութիւնք և որակութիւնք, ըստ երկար ժամանակս ներգործելով, կրէին և՛ս և տկարանային․ յայնսակս ամենախնամ տեսչութիւն Աստուծոյ, որ ետ նոցա զծիրս անմահութեան եթէ կային 'ի պատուիրանապահութեանն, տնկեաց 'ի դրախտին և զծառն պտղոյն կենաց, որ ըստ սրբոյն Թովմայի հրեշտակային վարդապետի, և ըստ համօրէն աստուածաբանից Թովմայականաց և այլոց՝ ունէր զզօրութիւն բնական՝ զօրացուցանելոյ, և նորոգելոյ զամենայն տկարացեալ և զխաթարեալ զօրութիւնս և զգործարանս մարդկայինս մարմնոյ, որով կարօղ էր կեալ յառողջութեան զբազում հազարաւոր ամս․ ապա թէ ո՛չ առ ի՞նչ պիտէր 'ի դրախտին ծառն կենաց, որովհետև ունէին արդէն զծիրս անմահութեան․ նմին իրի և յետ պատուիրանազանցութեանն արտաքսեաց զնոսա Աստուած 'ի դրախտէն, զի մի՛ ձգեսցեն զձեռն և առնուցուն 'ի ծառոյն կենաց, ուտիցեն և կեցցեն յաւիտեան : Յորմէ քաջայայտ է, թէ պտուղն ծառոյն կենաց զնոյն ներգործութիւն ընծայէր մարդկայինս մարմնոյ, ևս և զկնի մեղացն, ո՛չ յառաջ քան զնոյն 'ի դրախտին․ ուստի յայտ է, թէ 'ի նոյն վիճակի էին խառնուածք մարդոյս՝ ո՛չ այժմ, նոյնպէս և յառաջն, ըստ ապականութեան և այլայլութեանցս այսոցիկ, թէպէտ և ըստ 'ի վերոյ ասացելոցս՝ 'ի նախաստեղծ բնութեան կարի առոյգ և զօրաւոր էին, քան զկնի և 'ի մեզ : Այլ հրամայեաց Աստուած քրովբէից, և բոցեղէն սրոյ շուրջանակաւ պահել զճանապարհս ծառոյն կենաց :

Ասացաք 'ի վերոյ, եթէ զայս քննեսցուք 'ի ստորև․

ծ է՝ „Արդ են ծայրքն պարզաբար ասացեալ չար՝ և՝ „անոՃամբ և՝ խրօք" որոց մարդն եղև գտօղ, և բանսարկուն, որք են մեղքն և ապականութիւն. „Իսկ մէջն „ոչ պարզաբար և ոչ նոյնպէս", որ է մաՀն, „այլ ՚ի մի- „մեանց ընկալեալ, և շարամանեալ ընդ միմեանս:"

Արդ՝ Հարցանեմ դարձեալ, թէ ո՞րպիսի ծայրք իցեն սոքա, և ո՞րպիսի մէջն. զի ը̅ ծայրիցն իմացեալ լինի և մէջն, և ը̅ միջոյն՝ ծայրքն: Ապաքէն քաջայայտ է, և ապացուցական, թէ ՚ի քանակականս ՚ի գնիլ ծայրիցն՝ Հարկաւ գնի և մէջն. և ՚ի գնիլ միջոյն՝ Հարկաւ և ծայրքն, ը̅ յայտնի սկզբանց քանակաբանութն և բնաբանութն. յորմէ և քաջ մակաբերեն, թէ քանակութիւն կից շարունակն բաժանի և բաժանի ՚ի մասունս փաղատաբոգապէս անսաՀմանս, և ոչ երբէք լինի ժամանել յանբաժանելիինչ մասն. զոր քաջ գիտեն՝ որք խելամուտ են գէթ ընդՀանուր սկզբանց քանակաբանութն և բնաբանութն: Իւ յայտ է, եթէ քո եդեալ ծայրքն և մէջն ոչ են ծայրք և մէջ շարունակլին կամ քանակութն: Ապա կարծեմք, թէ գուցէ լռեալ քո, թէ ՚ի բնական բարոյական մարդկային ներգործութիւ երկոքին ծայրքն են մոլեկան, և ուղղութիւն կամ առաքինութիւն կայանայ ՚ի մէջն, որ է ճշմարիտ. Համարեցար իմաստասէրդ, թէ որո՛յ և իցէ՝ և զխորդ և իցէ ծայր անոՃանեալքն են մոլար, և մէջն ուղիղ: Այլ պարտ էր քեզ նախ գիտել, թէ զի՞նչ են, և յորու՞մ կայանան ծայրք բնական բարոյական մարդկային ներգործութեանց, և զի՞նչ և յորու՞մ մէջն: Այլ քանզի չեն մեզ կամք, և ոչ իսկ փոխձան քննութեան՝ ընդ երկար վարդապետել և խօսել զփիլիսոփայական և զածաբանական իմաստից. և ցուցանել փաստիւք իւրեանց ընդդէմ ներՀակեալ վարդապետութեանց քոց, այլ Համառօտիւ և ՚ի Հարևանցի դիտեմք յիշատակել, և անցանել զնորօք, ոչ ցարդ արարաք ը̅ կարի, վ̅ այնորիկ նոյնպէս արասցուք և այժմ, և յորս զկնի: Արդ՝ քանզի ուղղութի բնական բարոյական մարդկային ներգործութեանց կայանայ ՚ի Համաձայնութն ն̅ց ընդ ուղիղ բանին. որ է կանոն և ուղղիչ ն̅ց, զանցանելն զնովաւ բնական բարոյական ներգործութեանց մարդոյն յառաւելն կամ ՚ի նուազն՝ վրիպլին ՚ի Համա-

ձայնութե՛ բանին 'ի կանոնէ նոցա. նմին իրի և լինին մոլեկանք, որք են ծայրք արտաքոյ ուղիղ կանոնի իւրեանց ը̅ս առաւելուն կամ ը̅ս նուազուն: Այլ քաջայայտ է, թէ քո եդեալ ծայրքն՝ ը̅ս մեղքն և ապականութիւն, և մէջն՝ ը̅ս մահն, ոչ են ծայրք և մէջ բնական բարոյական ներգործութեանց մարդկան. այլ հեռի են յայնցանէ՝ որպէս երկինք յերկրէ, զորօրինակ ինքնին իսկ յայտ է: Նա այն՝ զի մեղքն է չար բարոյական, և ապականութիւն՝ չար ֆիզիգական. իսկ մահն չար քան զամ̅ բնական կամ ֆիզիգական չարս, որպէս արդ ունիմք ասել: Աստի զի՞նչ ծայրք, և զի՞նչ մէջ գտանին 'ի սոսա. ոչ բարոյական, ոչ ֆիզիգական, և ոչ այլ ինչ ամենևին, որպէս յայտ է որոց լոյս բանին չև է խանգարեալ:

Ասեն դարձեալ, թէ մեղքն է մի ծայր 'ի մարդոյ պատճառեալ, և ապականութիւն միւս ծայր 'ի բանսարկուէն հնարեալ, իսկ մահն իբրև միջին ը̅ մէջ սոցա իբրև պատուհաս յԱյ 'ի վե̅ր եդեալ: Արդ՝ աստ աղաչեմ, թէ զի՞նչ է ապականութիւն, և զի՞նչ մահն: Զմեղացն յայտնի է, թէ է պատուիրանազանցութի և արհամարհութի ընդդէմ անսահման բարւոյն Այ, զոր արար մարդն: Զմահն դնես իբրև միջին ինչ՝ շարամանեալ ընդ մեղաց և ընդ ապականութե: Գուցէ երբեք ո՞չ իցէ լուեալ քո զհասարակաց բարբառ համօրէն փիլիսոփայից, եթէ մահն է չար քան զամ̅ բնական չարիս, զի բառնայ զգոյն իւրաքանչիւրոց, յորոյ 'ի պահպանութի ջանան և գուն գործեն համօրէն արարածք, ոչ միայն զգայականք, այլև անզգայ մարմինք. ուստի և յառածս ընկալեալ՝ ասի զամենեցուն, թէ ամենեքեան բաղձան գոլոյ իւրեանց, որ է ընդաբոյս բերումն նոցին առ այն: Իսկ ապականութիւն զհետ եկեալ մահուն ը̅ս քեզ՝ զի՞նչ վնաս բերէ որոց արդէն կորուսին զգոյ իւրեանց, զորօրինակ շան ապականիլն, քայքայիլն, և լուծանիլն շաղղի նր̅, որովհետև չիք ևս շունն. և զի՞նչ վնաս ոչխարին սպանելոյ՝ նեխիլ, փտիլ, և լուծանիլ մսոյ նր̅, որովհետև ոչ ևս կայ ոչխարն. և կամ զի՞նչ օգուտ նմա պահիլն մսոյ նր̅ աղխտեալ կամ զմռսեալ, և կամ այլազգ՝ ևս և յաւիտեան: Այսպէս ևս զի՞նչ վնաս բերէ մարդոյն, զորօրինակ Պետրոսի, կամ Պօղոսի՝ յետ մահուն ապականիլ, լուծանիլ, և նեխիլ մարմնոյ նր̅,

կամ կերեւալ լինել 'ի գաղանաց և 'ի մարդակերաց, ևն, որպէս եւս ոչ գոյ Պետրոս, կամ Պօղոս կենդանի. և կամ զի՞նչ օգուտ այնպիսի արանց, որոց մարմինք զմռսեալ, կամ մոմեայ եղեալ, որպէս 'ի վերոյ յիշեցաք, կան տակաւին մինչև ցայժմ 'ի բազում գարուց հետէ: Ապա առ ի՞նչ ջանացաւ բանսարկուն մուծանել զայնպիսի ապականութի և այլայլութի զկնի մահուն 'ի մարդկայինս մարմինս: „Արս գտեալ՝ ասես, և կերակուր արարեալ „իւր զընդ մահուամբ անկեալսն. զի (ապականութիւն) „ներլինելութեն է ներհական, որպէս յառաջն ասացի. որ „ապականէ զիրս, և գոգցես թէ յանդգնութի զգոյն „խնդրէ ներածել: Որով առաւել խնդայր, և չարաչար „յուսովն զոմարձանայր խաբեբայ և պատրիչն մերոյ „նախահօր, որպէս յաղթեալ նախանձելւոյն. և զանուանեալն 'ի բոլոր գոյացելոցս պատկեր արարչին խափանել „կարացեալ, որում ոչ իցէ հնար լուծեցելոյն առ„նուլ թէ՝ յորմէ գոյացաւ՝ վերստին միւսանգամ գոյանալ „փոտահանայր. և վն այսպիսիկ անշունչ և անշարժ „նիւթոյն անփոյթ արարեալ՝ միայն բռնացեալ պահէր „զկենդանական շունչն": Ո՜վ թանձրամիտ և անհեթեթ ռամկական մտածութեան. որպէս եթէ անգիտացեալ է բանսարկուին զամենազօր և զամենակալ զօրութի արարչին, թէ որ յանէից զամ՝ արարածս 'ի գոյ էած, տկարանայր արդեօք զնիւթս հողածնելոց, որ ըստ համօրէն փիլիսոփայից իսկ է անապական, անկորուստ պահել՝ և ևս և ըստ անհատական գոյութեանց նոցին վերաբերելոց առ իւրաքանչիւր սեփական կերպ կամ առ հոգի բանական, որպէս և համօրէն ածաբանք վկայեն: Եւ այնզի՝ պականելոցն միանգամ 'ի կերպէ իմէքէ, որպէս կենդանական մարմնոց 'ի հոգւոյ, ևն. եթէ մարմինք նց քայքայեսցին, և եթէ ոչ, անհնար է միւսանգամ դառնալ նց բնաւ պէս 'ի նոյն. այլ պահանջի միօրինակ առ այն ամենակալ զօրութե արարչին, ըստ ամ փիլիսոփայից, և ածաբանից: Այս սուտ է զլխովին, և յերազելոց սակի այս մտածութի, և անհեթեթ եղջերուաքաղ խորհուրդ, զոր ամ ոք իմաստնոյն տեսանէ:

Եւ ոչ այսչափ միայն, այլև որ չարագոյն ևս է՝ առ 'ի ցուցանել և 'ի հաստատել զայդպիսի ցնորս քո, ուրանաս զվճիռ և զհրամանն Աստուծոյ, որով զպատ-

ուիրանազանցն ընդ մահու գրաւեաց և պատուհասեաց, և զբանս սուրբ գրոց՝ հակառակ մտաց նորին իմանաս և ծեքես, և զհակառակն վարդապետութե հաւատոյ ուսուցանես, յասելն քո անգ յերեսն 65. „Օի թէ„պէտ և ասաց ստեղծիչն հողածնիցելոյն, հող էիր և 'ի „հող դարձցիս, ոչ հրաման տալով, այլ՝ առ որինչ „երթալոցն էր զկնի մահուն, մակձայնելով զայն ասէր. „զորօրինակ քար ինչ 'ի բարձուստ ուստեք հոլովեալ, որ „մօտն կայցէ՝ ասասցէ, երթեալ ունիս՝ մինչև ուրանօր „արժանն իցէ երթալ“: Որով նախ՝ յայտնի ուրանաս զվճիռ և զհրամանն Այ տուեալ նախաստեղծին յետ պատուիրանազանցութեն՝ մահու մեռանիլ, և 'ի հող դառնալ. այլ ասես լինել [illegible] ինչ, կամ սին սոսկ ծանուցումն ձայնի՝ իբրն լինելոյ կամ եղելոյ. զորօրինակ ասես, եթէ քար ինչ 'ի բարձուստ ուստեք հոլովեալ, որ մօտն կայցէ՝ ծանուսցէ ձայնիւ, եթէ երթալոց և անկանելոց է մինչև 'ի վայր.

Երկրորդ՝ զի՞նչ իմանաս այնու՛իկ բանիւ Տն թէ „Հող էիր, և 'ի հող դարձցիս“: Ըստ պարզին յառաջ քան զպատուիրանազանցութի նախաստեղծիցն սպառնացաւ նմ միայն, թէ *յորում աւուր ուտիցէք 'ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի, մահու մեռանիջիք‖. որ չէր վճիռ և հրաման դրական՝ պատուհասի մահուն, այլ ըսպառնալիք նր և թէական, որ և յայտ է: Իսկ յետ պատուիրանազանցութեն՝ ասէ, *Դարձցիս յերկիր, ուստի առար. զի հող էիր և 'ի հող դարձցիս‖: Արդ՝ եթէ այս բան՝ սին սոսկ մակձայնութի իցէ ըստ քեզ, ապա ո՞ւր է դրական վճիռ և հրաման մահու դատապարտելոյ զնն. զի չիք այլ ինչ դրական վճիռ և հրաման պատուհասի մահուն, թէ այսուհետև մահու մեռանիցիս, բաց 'ի վերոգրելոցդ, թէ *Դարձցիս յերկիր՝ ուստի առար, զի հող էիր, և 'ի հող դարձցիս‖:

Երրորդ՝ եթէ այս բան չէ բացարձակ վճիռ և հրաման մահու, այլ սոսկ մակձայնութի, նաև նախընթաց բանքն Այ ոչ լինին դրական վճիռ և հրաման, յասելն Տն *փոխանակ զի լուար ձայնի կնոջ քո, և կերեր 'ի ծառոյ անտի, յորմէ պատուիրեցի քեզ անտի միայն չուտել, և կերեր 'ի նմանէ. անիծեալ լիցի երկիր 'ի գործս

[illegible] ‖. Եւ: Այնպէս և բանք պատու-
հասին տուեալ Նախամօրն, եթէ՝ *[illegible] ‖: Բանզի միօրինակ հրամայէ Ն.Տ զայսոսիկ: Նայ
բացարձակապէս սուտ է հետեւութիւս, ապա և առաջար-
կութիւն:

Զորրորդ՝ զի՞նչ այլ ինչ հնար է իմանալ յայն բան արարչին, թէ *[illegible] ‖, բայց եթէ զբացարձակ և զգրական վճիռ և զհրաման մահու մեռանելոյ նախաստեղծիցն վն պատուիրանազանցութեան նց, զոր կանխաւ սպառնացեալն էր. քանզի անբաւմարդասիրութիւն Ն.Յ ոչ ստեղծ զմ՛դն 'ի վիճակի սոսկ մարդկային բնութե, ոչ 'ի վերոյ յիշատակեցաք, այլ 'ի գերագոյն կարգի և յանմահութե, պարգեւօք ամբողջ բնութե և սկզբնական արդարութե. այլ վն պատուիրանազանցութեան նոցա երարձ 'ի նոցանէ զգերազանց և զչնաշխարհիկ ձիրսն զայնոսիկ, և զչնորհս, և մատնեաց զնս մահու: Զայս վճիռ բազում անգամ և 'ի ձեռն մարգարէից քարոզէ, և հրատարակէ, զի գիտասցեն մարդիկ, և յիշատակեսցեն, եթէ ոչ են անմահ, այլ գրաւեալ ընդ մահու դատապարտութե:
*[illegible], աւէ ցԱյսայի, գլ. խ. հմր. 6. [illegible] ‖: Եւ Դաւիթ աւէ՝ Սաղ. ճբ. 15. *[illegible] ‖: Եւ այլ բազում ուրեք: Եւ առ անմոռաց պահելոյ մարդկան զյիշատակ այսր անդառնալի վճռոյ մահու, եկեղեցին Ք.ՏԻ բարեպաշտ արարողութեք յառաջնում աւուր չորեքշաբաթի աղուհացին ցանէ ըզ մոխիր 'ի վր գլխոց մարդկան, և աւէ. *Յիշեա՛ ո՛վ

„մարդ, զի հող էիր, և 'ի հող դարձցիս‖: Ահա արդեօք ը՟ քումդ զառանցանաց՝ արարիչն Ա՟Ծ, մարգարէք, և որ եկեղեցին, զսատանայահնար ապականութի բանսարկութիւն՝ զթակտումն մարմնոյ մեռելոց մարդկան 'ի մասունս և 'ի փոշի՝ ծանուցանէին և յիշեցուցանէին: Ապաքէն տեսանես, թէ զիա՛րդ խորք զխորս կարդան, և զիա՞րդ 'ի մոլար դրութէդ յայլ և այլ մոլորութիս ընդդէմ յայտնի որ գրոց և վարդապետութեան հաւատոյ զառածանիս:

Եւ զարմանք մեծ ևս այս է, թէ զիա՞րդ և որն Ներսէս շնորհալի, որ զիմաստասէր Հայրապետն Յովհան, և զգիրս նո՛ր պանծանօք գովէ, և գրեթէ զհամօրէն որ գիրս հին և նոր կտակարանաց 'ի բերան և 'ի մտի ունէր, զայս բան տեսրակի Օձնեցւոյն, որ ը՟ մեկնչի նո՛ր՝ է նոյն իսկ գրութի ճշմարիտ իմաստասէր Հայրապետին վկայելոյն 'ի նմանէ, ոչ ետես, և ոչ իմացաւ, և կամ ոչ 'ի մտի կալաւ, որ ը՟ հակառակն նորին գրէ յերգս պաշտաման եկեղեցւոյ աւուր ուրբաթու, թէ, „Պապանձեալ՝ առ դատողին, յետ յանցա- „նաց՝ Ադամն հին, զկենն պատճառ՝ եդեալ խաբման, „և կենն զօձն դաւաճան, որով երկիրս՝ այս անիծաւ, „փուշ և տատասկ՝ 'ի սմա բուսաւ. վճիռ մահու՝ մար- „դոյն տուաւ, դառնալ 'ի հող՝ ուստի ստեղծաւ“: Որով յայն բան Տեառն դնէ զդրական վճիռ կամ զհրաման մահու, և ոչ զսոսկ մակձայնութի ըստ Օձնեցւոյն: Որպէս և 'ի հանգստեան շարականի չորրորդ ձայնի ասէ՝ „Անսկիզբն Ա՟Ծ սկիզբն արարչութե, 'ի հողոյ ստեղծեր զմարդն „առաջին՝ գործել և պահել յանտրուսում 'ի կեանս. իսկ „'ի ստուգանել հրամանի քո Տէր՝ զվճիռ մահու 'ի վե՛ր „եդեալ՝ հող էիր անդրէն և 'ի հող դարձիս, ե՛ն“: Բայց որպէս բազում անգամ ասացաք, այսպիսի տեսութիւն բանից ծածկեալ է յայլոց, և է սեփական միայն սրատեսութեան մեկնչի նորա, և որոց ընդ նմա:

Եւ դարձեալ՝ եդեալ, այլ ոչ ընկալեալ, թէ զայն բան, զոր ասաց Ա՟Ծ, թէ *Հող էիր, և 'ի հող „դարձցիս‖, ասաց նախագիտութի միայն զլինելոցէն կամ զապագայէն, և ոչ վճռելով և հրամայելով:

տան աղաչեմ, եթէ գիտիցես, յի՞նչ կայանայ Նախագիտութիւն Ե.Ջ զապագայէն, և կամ ի՛նչ գիտէ Ե.Ծ զապագայս։ Ո՞չ ապաքէն ընդ սմին Օգոստինոսի, ընդ սմին Թովմայի ակուինացւոյ հրեշտակային վարդապետի, և ընդ որոց հարց, և ընդ համօրէն ողջամիտ ածաբանից, կայանայ 'ի վճիռ խելք՝ որ է 'ի հրամանի, և նովաւ ճանաչէ և գիտէ զապագայս։ Զեն արդեօք պէտք, և ոչ իսկ է կարևոր՝ ցուցանել աստէն զայս ճշմարտութի. զի զորօրինակ բազում անգամ ասացաք, չեն մեզ կամք գրելոյ աստէն զածաբանութի. և զի գիտեմք ստուգիւ ես, եթէ ոչ կարես գիտել 'ի սակ Մոլինեան միջակին գիտութիւն. զի առ ժամանակօք քո, և ոչ զանուանն իսկ և զհեղինակին յերազեալ էր ոք երբէք 'ի համօրէն դպրոցս ու. զածաբանից, որ 'ի ժզ. դարու ևեթ 'ի վեր երևեցաւ։ Այս այսչափ ինչ առ այս շատ լիցի։

Բայց արդ՝ քննեսցուք դարձեալ զապականութիւն, զորմէ գրես յերեսն 64. թէ կամիս „սակաւուք ես „ձգտել՝ որ յաղագս ապականութեն ինչէ բանս. զի և „արժան իսկ է զատուցեալզանցս զայս չար մարդկայինս „ազին՝ յոլովագունիւք հրապարակել բանիւք“։ Զորմէ և մեր շարժեալ՝ կամեցաք առաւել ևս հետամուտ լինել 'ի քննութի դորա, և ասացելոցդ։ „Արդ՝ է ապականութի՝ „ասեմ, բոլոր իրի քակտութեն պատճառ՝ այլայլութե „'ի վե հասեալ. քանզի բոլորն 'ի մասանց բաղկանայ. և „զբաղկացեալն 'ի մասանց քակտէ ապականութի՝ զայլ- „այլութիւն 'ի գործ արկանելով“։ Իսկ արդ՝ քանզի ըստ եդելոցդ՝ ապականութիւն է քակտումն բոլորի իրիք բաղկացելոյ 'ի մասանց, ընդ տեսակաց բաղկացեալ բոլորից 'ի մասանց՝ լինի և ապականութի կամ քակտումն 'ի մասունս։

Այս հարցանեմ դարձեալ, թէ քանի՞ ազգ կամ տեսակք բաղկացեալ բոլորից գտանին յիրս։ Յայտ է, թէ խօսիմք աստէն զֆիզիքական կամ զբնական բոլորից, ոպ և դու, և ոչ զմեթաֆիզիքականէ, այս է՝ զբաղադրելոյն 'ի ներգործութեէ և 'ի կարողութեէ, յորս ոչ մտանէ ապականութի և այլայլութի։ Արդ՝ ապաքէն ընդ համօրէն ողջամիտ փիլիսոփայից և ածաբանից՝ երկու ազգք են բոլորից բնական բաղադրելոցս, էական և պատահական՝ կամ ամբողջական, զանց արարեալ զայլովք, որք ոչ

վերաբերին յայս խնդիր, առ խորշելոյ յերկարաբանութենէ։ Էական բոլորն է, որ բաղկանայ յէական մասանց, որք կացուցանեն էապէս զէակն բնական, յորոց 'ի քակտիլն՝ կորնչի էապէս այն էակ բնական։ Պատահական կամ ամբողջականն է, որ բաղկանայ յամբողջացուցիչ մասանց բոլորի կամ բնական էակի, յորոց 'ի քակտիլն՝ կորնչի արդեօք ամբողջութիւն բնական էակին, այլ ոչ էութիւն նորա, եթէ ոչ ժամանէ մինչև ցքակտումն էական մասանցն։ Արդ՝ էական մասունք ֆիզիգական կմ՛ բնական բաղադրեալ էակացս, ըստ Արիստոտէլի, ըստ նորին Թովմայի, և ըստ համօրէն ողջամիտ փիլիսոփայից և ճարտարանից՝ են նիւթն և կերպն, որք 'ի մարդկայինս բնութեան են հոգի և մարմին։ Իսկ ամբողջական մասունք են ըստ իւրաքանչիւր տեսակաց բնական էակաց մարմնաւոր մասունք կատարիչք լրութեան մարմնոյ նոցա. զոր օրինակ 'ի կենդանիս՝ ոտք, ձեռք, աչք, ականջք, և այլ համօրէն անդամք, և մասունք մարմնոյ՝ եթէ արտաքինք, և եթէ ներքինք. ըստ այսմ իմն և զայլոց ըստ իւրաքանչիւր կատարելութեանց իւրեանց։ Եւ վասն այսորիկ հարկաւ հետևի, թէ որչափ կատարելագոյն է բոլորն բաղադրեալ 'ի մասանց, այնչափ չարագոյն և մեծագոյն լինի քակտումն նորա 'ի մասունս, կամ ապականութիւն։ Եւ քանզի բոլորն էական է կատարելագոյն, որ տայ զբացարձակ գոլ էակին, քակտումն մասանց նորա, կամ ապականութիւն, որ բառնայ բովանդակ զգոլ նորա, է չարագոյն ապականութեան քան զայլ ըստ մասին բնական ապականութիւնս. զոր օրինակ 'ի քակտիլ կամ 'ի բաժանիլ կերպի իրիք 'ի նիւթոյ իւրմէ, որպէս հոգւոյն 'ի մարմնոյ, իսպառ կորնչի և բացարձակ գոլն այնորիկ. որպ 'ի քակտիլ կամ 'ի բաժանիլ հոգւոյ այս ինչ ոչխարի, կամ այս ինչ մարդոյ՝ զոր օրինակ Մարկոսի, եւն. իսպառ կորնչի էական կամ գոյացական գոլն նց։ Եւ զի համօրէն ծնունդք և ապականութիւնք ենթալուսնեայցս ըստ ողջամիտ փիլիսոփայից և ճարտարանից յածին զայսուիկ փոփոխութիւք, գոլով նիւթոյն ենթալուսնեայցս 'ի կարողութեան առ համօրէն գոյացական կերպս նոցին բնական էակաց, և միշտ ընդ կերպիւ իւիք 'ի նոյնանէ կացեալ, հարկաւ ընդ քակտիլն կամ ընդ բաժանիլն 'ի միոյ կեր-

պէ, լինի ընդ այլով կերպիւ, և ը̅ այսմ փոփոխի է-ապէս յայս ինչ գոլոյ յայն ինչ գոլ. զորօրինակ 'ի հրանալ փայտին՝ անցանէ նիւթն 'ի փայտ գոլոյն 'ի գոլ հրոյ: Ուստի և առած է փիլիսոփայից, եթէ ծնունդ միոյն է ապականութիւն միւսոյն, և ապականութիւն միոյն՝ ծնունդ միւսոյն: Զոր օրինակ ապականութիւն փայտին՝ ծնանի հուր, և ծննդեամբ հրոյն՝ ապականի փայտն. ապականութիւն հրոյն ծնանի մոխիր, և ապականութիւն մոխրոյն՝ այլ ինչ, ևն: Նոյնպէս ապականութիւն Պետ-րոսի՝ ծնանի դի, և ծննդեամբ դիոյն՝ ապականի Պետ-րոսն. ապականութիւն դիոյ ծնանի այլ, և ապականութիւն նր այլ ևս ինչ. ը̅ այսմ իմա՛ և զայլոց: Նաև զի այս փոփոխութիւնք են էական և գոյացական, սահմանին յող-ջամիտ փիլիսոփայից, ծնունդն՝ փոփոխութիւն յոչ գոլոյ 'ի գոլ գոյացական, և ապականութիւն՝ 'ի գոյացական գո-լոյ յոչ գոլ այնպիսի: Իսկ սոսկ պատահական փոփո-խութիւնք կամ ապականութիւնք՝ փոփոխեն միայն զբաց-արձակ գոլն, կամ զէնթակայն՝ յորպիսութենէ յորպի-սութիւն, մնալով միշտ էական կամ գոյացական բացար-ձակ գոլոյ. ուստի և ոչ սահմանին՝ 'ի բացարձակ գոլոյ յոչ գոլ, կամ յոչ գոլոյ 'ի գոլ բացարձակ. այլ՝ յոր-պիսութենէ յորպիսութիւն, յանկատարութենէ 'ի կատարե-լութիւն, կամ անդրադարձեալ:

Ահաւասիկ յայտնի և պայծառ քան զլոյս միջօրէի տեսանի յայսոսիկ՝ որոց աչս ունիցին, եթէ չիք 'ի բնա-կանս մեծագոյն և չարագոյն ապականութիւն քան զքակ-տումն էական մասանց, և քան զկորուստ բնածին գոլոյ էակացս, կամ որ նոյն է՝ քան զմահ նց: Արդ զիարդ դու զայն ոչ համարիս ապականութիւն, որ և ը̅ քումդ սահմանի՝ է քակտումն մասանց բոլորին, և այն՝ էական և գոյացական մասանց գոլոյ նր. և դնես ըստ ռամկա-կան տեսութեն և համարման՝ զապականութիւն իրաց լինել 'ի քակտման կամ 'ի բաժանման մարմնոց նց 'ի մանր մանր մասունս կամ 'ի փոշիս, յորս բազում անգամ մնայ տակաւին էական կամ գոյացական գոլ նց. զորօրի-նակ համարին ռամիկք՝ չորացեալ կաւոյ, եթէ անօթոյ, և եթէ այլ և իցէ՝ ապականիլ, 'ի լուծին նր 'ի փոշի, և կամ հացի՝ 'ի մանրիլն 'ի փշրանս, և յորս 'ի սոցին սա-

կի։ Նու 'ի բերեալ իսկ օրինակդ՝ կարող էիր գէթ տեսանել զճշմարտութիւն բանիցս, եթէ միտ դնէիր. քանզի ասես, „Օրինակ իմն. որպէս թէ առաջի կայցէ բանիս՝ „տունկ 'ի տնկագործողէն ուրմէ խզեալ. առ որ մերձե„ցեալ ապականութիւն՝ փախուցանէ 'ի նմանէ նախկին, „հրաման տուեալ այլայլութեան, զբնականն՝ որ 'ի նմա՝ „որակութիւն. և փոխանակ այնոցիկ զանփոյթլքացոյցս 'ի „ներքս ածէ զորպիսութիւնս. և ոչ տայ թոյլ մնալ նմա „յայլայլութեանն յայնմիկ, այլ 'ի վայր քարշեալ՝ անց„նիւրցն մատուցանէ զնա՝ յորոց բաղկացաւն՝ տարերց. „զոր ապա կարողութիւն է միայն ամենազօր ձեռինն՝ միւ„անգամ՝ քայքայեալն նիւթ առ նոյն հաւաքելով հաս„տատել տեսակ“։

Նայցուք, եթէ կարող էիր տեսանել, եթէ միտ դնէիր։ Ոչ զի աստ պահանջի տեսութիւն մտաց, և ոչ տեսութիւն մարմնաւոր աչաց ընդ ռամկաց, որք յորժամ տեսանեն զհատեալ ծառն՝ փտեալ և 'ի փոշիս լուծեալ, յայնժամ համարին ապականեալ, վասն չունելոյ զմտաց տեսութիւն իմանալ զայսպիսիս։ Նայպէս ծառն՝ ընդ խզել, կամ ընդ հատանել տնկագործին զայն, էապէս ապականէր, եթէ բուսական հոգի նորա չէր բաժանական՝ ըստ փիլիսոփայից, ուստի ցորչափ գործարանք բուսական հոգւոյ մնան 'ի նմա, մնայ և ծառն. և ընդ եղծանելն նոցա՝ գոյացապէս ապականի և ծառն. թէպէտ և մարմինն կամ փայտն նորա անփուտ մնասցէ ընդ բազում դարս, զոր օրինակ են բազում անփուտ փայտք, որպէս աբանոսք, ևն։ Այլ զայսոսիկ զանց արարեալ, որք խնդրեն և զմտաց տեսութիւն, եթէ յառաջ բերէիր զայլ օրինակս՝ որք են անբաւ, գուցէ նոքա զարթուցանէին զմտացդ տեսութիւն. զոր օրինակ զհատանելն զգլուխ ոչխարի, կամ մարդոյ, և զորս 'ի կարգին, ապաքէն իմանայիր նոյնհետայն զգոյացական ապականութիւն նոցա, և ոչ մնայիր քայքայման մարմնոյ նոցա, ևն։

Եթէ ասիցես. եթէ այդպէս է, ապա 'ի մեռանելն Քրիստոսի, գոյացապէս փոփոխեցաւ, և մարմին նորա եւս զապականութիւն, ընդդէմ նոր գրոց, որ ասէ. Գործ. բ. 31. թէ *Ոչ մարմին նորա ոչ ետես ապականութիւն*։ Ասեմք, թէ այո, իսկապէս և գոյացապէս փոփոխեցաւ

Ք՛ս ՚ի բաժանիլ հոգւոյն ՚ի մարմնոյ. վասն զի խոկապէս և ճշմարտապէս մեռաւ, և մարմին նր եմուտ ընդ դիական կերպիւ, և եղև դի, թէպէտ և աստուածութիւն անբաժան եկաց եթէ ՚ի հոգւոյն, և եթէ ՚ի մարմնոյն, ըստ համօրէն ա̃ծաբանից: Իսկ զայն բան որ գրեց, եթէ * Սուրբն քո ոչ ետես զապականութիւն․ իմանալ պարտ է ըստ ուղիղ մտաց մեկնչաց և վարդապետաց նր եկեղեցւոյ, եթէ ոչ ետես զապականութիւն նեխութեան կամ փտութեան, որովհետև յերիր աւուր յարեաւ ՚ի մեռելոց, և ոչ եկաց ընդ երկար ՚ի գերեզմանի: Քանզի ապականութիւն անուն նշանակէ եւ երբեմն զնեխութիւն և զփտութիւն, որպ և յայտ է:

Իսկ զի՞նչ առ այսոսիկ իմաստուն մեկնիչն նր: Զմարդիք աղաչեմ, և ազանչացարուք՝ կամ ընդ իմաստութիւն նր, և կամ ը̃ խորամանկութիւն: Քանզի յերեսն 62. ծանօթ. 1 ասէ. „Որ իմանալ զողջմտութիւն իմաս-„տասիրին, և զնպատակ բանից նր ՚ի խօսելն զապակա-„նութէ և զանապականութէ, կարեւոր է գիտել երկու „ինչ. մի զի ոմանք յանգլուխ հերետիկոսաց՝ (որոց „ձայնակից եղեն Սոփեստեցիք,) անապական ասէին „զՔ՛ի մարմինն ըստ ամ՛ մարդկային կրից, են . . . . և վս „այսպիսի մոլորութեան կոչեցան ոմանք Երևութականք „կամ Աղաչօքեանք”: Այլ այս, խնդրեմ ներել, ոչ է ասա նորոգ ինչ գիտելի՝ կարեւոր յիմանալ զողջմտութի իմաստասիրիդ՝ ՚ի վս ապականութեն. քանզի ՚ի սկզբանէ մինչև ցասա՝ գրութի նր է ը̃դդէմ Երևութականաց, որոյ և մակագիրն իսկ ցուցանէ, որպ տեսաք ՚ի վերոյ: Եկեսցուք արդ առ երկրորդ գիտելին:

„Իսկ միւս եւ, ասեն, զի նոյն Երևութականք առ ՚ի „պատրել զպարզամիտս՝ ասէին, եթէ ՚ի Ք՛ս գտանէր „ապականութի ինչ, ներքոյ անկեալ լինէր կամայ ակա-„մայ նաև անմեղի կրից տկարութեն մերոյ, եւ և մե-„ղաց”: Այլ թող զայն, զի առաջիկութիւնք հակառակոր-դաց զէթ ՚ի գրութեն ասա ոչ են ՚ի ցուցանել, կամ ՚ի հաստեցուցանել, թէ ՚ի կրելն Ք՛սի զբնական զանան-ցանելի կիրս՝ հարկաւ պարտ էր կրել և զանցանելիս և զմեղանչականս. այլ առ խաբեալ ուրանալոյ զճշմարիտ մարդեղութի և զմարմինն Ք՛սի, ասէին և զճշմարիտ կիրս նր, և առ երևոյթս ասեն լինել ամի. որպ և յայտ է

՚ի բանից ՚նց։ ՚Ի վ՟ այսր ածի ապաքէն և զայս ես լիով
ցրէ իմաստասէրդ բանիւք հարցն՝ առանց ինչ դիմելոյ
յապականութիւն, կամ յանապականութիւն. ո՟պ յերեսն
53. ասէ. „Զորմէ առաւելաշնորհն Սեւերիանոս ասէր
„Գաբաղացւոց եպիսն ՚ի տնօրէնութեն փրկչին բանի.
„Անչարչարելին ասէ չարչարի չարչարելեաւն. ոչ է
„այնու կարեօք եմուտ՝ որ ՚ի մեղսն տանիցին, այլ որ զհա-
„սարակաց բնութիս պատեալ է։ Վասնզի ոգի և մարմին
„ծառայեն կարեաց՝ որ ՚ի մեղսն տանին, և այնց կարեաց՝
„որ արտաքոյ քան զմեղսն իցեն. ո՟ր քաղցնուլն և ծա-
„րաւելն, և վաստակելն և ննջելն՝ մարմնոյն կարիք են,
„այլ ոչ եթէ ՚ի մեղս համարեալ իցեն. իսկ պոռնկու-
„թիւնն և պղծութիւն և հակառակութի այն կարիք մե-
„ղաց են։ Նոյնպէս և ոգի ունի պատեալ զիւրն կարիս՝
„յարարչէ բնութեն ընկալեալ զօգտակարս և զկարեկցութիւն,
„զերկիւղն և զտրտմութիւն և զցասումն։ Այլ եթէ լոկ
„առանձինն քննիցին, կարիք կոչին. իսկ չափով և ը՟ս ժա-
„մանակի՝ օգնականութի են բնութես։ Զայս ասաց. և ՚ի վ՟
„երբեր՝ ասելով. Զկարիս մարմնոյ և ոգւոյ՝ որ ար-
„տաքոյ քան զմեղսն իցեն, կալաւ յանձին կենարարն.
„քաղցեաւ ընդ մարմնոյ, ծարաւեցաւ, վաստակեցաւ,
„ննջեաց. և այնու ոչ եթէ զածութին ինչ թշնամանեաց,
„այլ վ՟ զմարմնոյն բնութի ճշմարտութի յայտնելոյ։
„Նոյնպէս և զ՟ շնչոյն՝ երկեաւ, տատամսեցաւ, տրտմե-
„ցաւ. . . . և այն չէին կարիք մեղաց, այլ բնութեն
„մարմնոյն ծանուցիչք“. և որ զկնի։ Այլ յարէ. „Ահաւա-
„սիկ յայտնի բանիւ երևեցոյց Սբ հայրս՝ ոչ մասունս
„գոլ մեղաց և ապականութեն, որ ՚ի մեզ գտանին կիր-
„քըս, այլ բնական մարմնոյ և ոգւոյ կարիք. առ որս կա-
„մաւ և ըստ կանխատեսութեն խորհրդոյ յայնոսիկ խոնար-
„հէր Տէրն, և ոչ եթէ բռնադատութի զփրկչականն
„զիւրեանքք ածել կարէին զմարմինն. զի այս սոսկ մարդոյ
„է՝ բնականացն ՚ի հարկի կալ ծառայութեն կարեաց։ Իսկ
„Բանն Այ է ինքեան անքակարայ զմերն միաւորեաց.
„յորժամ կամէր ինքն, յայնժամ ախորժէր մարմնոյն
„իւրոյ յառաջ ունել զբնականսն, առ ՚ի ճշմարտելոյ
„զբովանդակն ընդ ինքեան միաւորել զմարդկային զոգի
„և զմարմին։ Սոյ հրաշալին ասէ Յովհան Աստան-

„գնուպօլսի. Եւ զխորդ այգուցն քաղցնոյր. յորժամ
„կամէր և թոյլ տայր առէ մարմնոյն, յայնժամ զգայր
„խիրոց կարեացն“ ։

Արդ, եթէ „Երկուութականք առ 'ի պատրել „զպարզամիտս ասէին“, ևն։ Արդարև ոչ գիտեմք, եթէ նոյայն համարձակաձայն բարբառ, թէ քոյդ բանք իցեն 'ի պատրել զպարզամիտս, թէպէտ և յայլ և այլ նիւթս, 'ի պատրուճակել զիմաստ բանից իմաստասիրիդ, եթէ ակամայ տգիտութեա, և եթէ կամաւ խորամանկութեա, դարձեալ ոչ գիտեմք. Այպէն քննեցաք և տեսաք զբանս և զմիտս իմաստասիրիդ զապականութէ ըստ ճշմարտութեան, յոր դու մատամբ խոկ ոչ մերձենաս։

„Արդ՝ ընդդէմ սոցա, ասէս, գեղեցիկ և աղդու „բանիւք խօսի իմաստասէրս, ոից տեսանես. դնէ և „պէսպէս զանազանութիս կարևորս, որովք հիմն 'ի վեր „տապալէ զնմ սուտ սկզբունս և զմնոտի առարկութիս „նց“ ։ Հիրաւի ոից յառաջագոյն խոկ ասացաք, այսպիսեաց տեսուի քումդ սրատեսութէ սեփական, ոչ տեսանել զորս ենն, և տեսանել զորս ոչն են։ Իսկ այլք՝ որք այլազգ տեսուէ են վիճակեալ, տեսին այո, և տեսանեն զխեթութի բանից իմաստասիրիդ, և զզանազանութիս նոցին, ևն, ըստ ճշմարտութն, որովք ոչ զսուտ սկզբունս, և զմնոտի առարկութիս հակառակորդաց հիմն 'ի վեր տապալէ, այլ զիւրոյ կարծեաց զսուտ հիմունս, և զերջերուճաքաղ զանազանութիս, և զանվայել և զտարադէպ մեկնութիս քաջայայտ ցուցանէ, ոից և յայտ է յասացելոցս, և յայտ ես եղեւցի 'ի յաջորդ բանից նր, որ զայլայլութէ և զփոփոխութէ։ Եւ զորս յաւելուս՝ առ Տէ-բլէֆ-նէլ երևեցուցանելոյ զձեռնարկութիս իմաստասիրիդ, կարծեմք՝ եթէ լաւագոյն ես գրէիր ըստ խոկութն իւրն՝ առ Տէ-բլէֆ-նէլ երևեցուցանելոյ զայնոսիկ։ Այլ թողումք զատաղութն նց՝ որք յակն արկանեն զայս գրուի։ Այլ մեք դարձցուք միւսանգամ առ քննութի բանից իմաստասիրիդ ։

Ասացեր, „Արդ՝ է ապականուէ բոլոր իրի քակտուէ „պատճառ՝ այլայլուէ 'ի վր հասեալ. քանզի բոլորն 'ի „մասանց բաղկանայ. և զբաղկացեալն 'ի մասանց քակտէ

„ապականութիւն զայլայլութիւն 'ի գործ արկանելով:" Նա և թէ 'ի տունկն խօսեալ „մերձեցեալ ապականութեան „փախուցանէ 'ի նմանէ նախկին, հրաման տուեալ այլ-„այլութեան, զբնականն՝ որ 'ի նմա՝ որակութիւնս. և փո-„խանակ այնոցիկ զանվայելչագոյնս 'ի ներքս ածէ զոր-„պիսութիւնս. և ոչ տայ թոյլ մնալ նմա յայլայլութեան „յայնմիկ, այլ 'ի վայր քարշեալ՝ անցնիւրցն մա-„տուցանէ զնա՝ յորոց բաղկացեալն՝ տարերց": Նոյն սամ, աղաչեմ, թէ զի՞նչ է այլայլութիւն, զի՞արդ լինի, և ուստի՞, և զի՞նչ ըստ քումդ գրութեան: Արդարև, ոչ բազում անգամ ասացի, չէին ինձ կամք ուսուցանել կամ բացատրել զիմաստ փիլիսոփայական մակացութեան, բայց ականայ ընդդատիմ 'ի քոյոցդ անիմաստ և անհեթեթ գրութեանց և գրութեանց մօիլ 'ի բացատրութիւն նոցին, առ դէմ յանդիման ցուցանելոյ զճշմարտութիւն իրացն:

Արդ՝ այլայլութիւն մարմնական ընդհանրապէս, զորմէ են բանքս, ըստ համօրէն ողջամիտ իմաստասիրաց, ոչ այլ ինչ է, բայց եթէ փոփոխութիւն բնական էակացս յորպիսութենէ յորպիսութիւն, կամ յորակութենէ յորակութիւն. զորօրինակ 'ի ցրտութենէ 'ի ջերմութիւն, 'ի չորութենէ 'ի խոնաւութիւն, յառողջութենէ 'ի հիւանդութիւն, 'ի հիւանդութենէ յառողջութիւն, և որ 'ի կարգին: Նա և յայսպիսի այլայլութեանց են՝ որք համաձայն են բնութեան իւրաքանչիւր տեսակաց իրաց, զոր օրինակ հիւանդացեալ մարմնոյ այլայլութիւն առողջութեան, և ջերմ ջրոյ այլայլին և դառնալն անդրէն 'ի ցրտութիւն. և են՝ որք ներհական բնական բաղադրութեան էակաց՝ ներգործեալ 'ի ներհական պատճառաց, զոր օրինակ հիւանդութիւն 'ի կենդանիս, ջերմութիւն 'ի ջուրն, ևն: Նա և քանզի ամենայն տեսակք բնականացս ունին զիւրեանց սեփական այլայլիչ զօրութիւնս, որք կոչին 'ի փիլիսոփայից՝ յատկութիւնք, ևս և գործիք բնականաց, զհետ եկեալ կերպից իւրաքանչիւրոց 'ի ծննդեան, եթէ առ 'ի պատշաճ տրամադրութիւն, և 'ի պահպանութիւն կերպին ընդ նիւթոյ, կամ գոյացական գոյին, և եթէ առ 'ի ներգործել՝ եթէ 'ի ներքուստ 'ի սնունդ և յաճումն անհատին, և եթէ առ տրտաքս առ 'ի պահպանութիւն տեսակին՝ ծնանելով և առնելով զիւրեանց նմանս. և զի այս տեսակք և պատ-

ճառք ը̄ զօրութեանց իւրեանց ներգործեն ես 'ի միմեանս, ես առաւել վերին ընդհանուր պատճառք՝ այլայլելով զն̄, եթէ այն ներգործութիւք փոփոխեսցեն զենթակայս՝ միայն ը̄ պատահական գոլոյ, կամ ը̄ որպիսութեանց միայն. կոչին այնպիսիքն ընդհանրապէս միայն այլայլութի, եթէ առ համաձայնն, և եթէ առ անհամաձայնն խառնուածոց բնութեանց իւրաքանչիւրոց. զոր օրինակ 'ի ներգործելն երկնային մարմնոց քաղցր աղդեցութ̄, որք արեգական հեղեղ ջերմութ̄ 'ի բուսական և 'ի շնչաւոր մարմինս, այլայլէ զն̄ համաձայն բնութեանց նոցին, 'ի բողբոջել, 'ի զօրանալ, 'ի հասունանալ, յառողջանալ, են. սապէս և հուրն ջերմութ̄ իւրով 'ի ջերմացուցանելն չափաւոր ներգործութ̄ զատուցեալ մարմինս կենդանեաց և բուսոց՝ այլայլէ զն̄ 'ի համաձայն որպիսութի բնութեանց նոցին. ը̄ այսմ ձեւ և զայլ ո̄մ դեղորէից ներգործութիւս յայլայլութի առողջութեն մարմնոց կենդանեաց, և սոքա ասին այլայլութիք համաձայն բնութե: Իսկ ընդ հակառակն՝ եթէ իցեն ներգործութիքն յանհամաձայն այլայլութի բնութեանց ենթակայիցն, զորօրինակ վատթար աղդեցութիք երկնային մարմնոց 'ի տկարութի և 'ի նիհարութի բուսականաց և կենդանեաց, վատառողջ ներգործութիք կերակրոց և ըմպելեաց յայլայլութի և 'ի հիւանդութի կենդանեաց, և որ 'ի սոցին սակի, կոչին անհամաձայն կամ ներհական այլայլութիք. և եթէ այսպիսի այլայլութիք կացցեն մնասցեն միայն 'ի պատահական փոփոխութե որպիսութեանց, անկորուստ պահեալ զէական և զգոյացական գոլ ենթակային, կոչին միայն՝ որք 'ի վերոյ ասացաք, և են պարզ ներհական այլայլութիք: Բայց եթէ այսպիսի ներգործութիք սաստկասցին, որք են բնական գործիք բնական պատճառաց, մինչև խոպառ եղծանել զբնական տրամադրութիս և զորպիսութիս զպահպանիչս գոյացական գոլոյ ն̄ց. և կա̄ զգլխաւոր և զկարևոր գործարանս բուսականաց և շնչաւորաց, զորոց կախեալ կայ գոյացական գոլ ն̄ց, նոյնհետայն զհետ գայ գոյացական ապականութի գոլոյ նոցին, և իսկոյն զհետ գայ ծնունդ այլոյ գոյացութե, կորուսեալ բովանդակ գոլոյ առաջնոյն՝ հանդերձ համօրէն տրամադրութեք, և որպիսութեք ն̄ց, և զհետ

եկեալ նորոգ գոլոյն՝ հանդերձ հետեւակ տրամադրութիւք և որպիսութիւք իւրեանց՝ ըստ ազդեցութեան և ըստ հանգամանաց պատճառացն, որք առնեն և պատճառեն զայն նորոգ գոլ․ զի ըստ առածի փիլիսոփայից, որ տայ զգոլն՝ տայ և զհետեւակս գոլոյն․ զորօրինակ 'ի սառուցանել ջերմութեան արեւու՝ կիզու զդալարիս, և խորշակահար առնէ՝ ապականել զբուսական գոյ նց՝ և փոխել յայլ գոլ իւրաց․ 'ի սառուցանել ջերմութեն հրոյ 'ի փայտն՝ կիզու զնա, և ապականէ զգոլ փայտին հանդերձ փայտային տրամադրութբն, և փոխարկէ 'ի հուր, և հրացուցանէ․ ըստ այսմ ձեւ և զայլոց։

Ահա քեզ համառօտիւ բացատրութի մարմնաւոր այլայլութեց, թէ զինչ են, զիարդ լինին, և ուստի։ Յորժ քաջայայտ երեւի անտեղուն անհեթեթ գրուն և գրուն քումդ կարծեցեալ այլայլութեն, զոր դնես լինել յետ մահուն 'ի քայքայման մասանց մարմնոյ, իւրաքանչիւրոցն վերածեալ 'ի տարերս՝ յորոց բաղկացաւն․ և զայն հնարեալ և մուծեալ 'ի բանսարկուէն, որպ 'ի վերոյ։ Ապաքէն քաջայայտ է համօրէն բնագիտից, եթէ զիարդ 'ի սկզբանէ մինչեւ ցարդ ընդ բազում դարս քիմիականք բռնութեամբ զօրութեն հրոյ քայքայեն և քայքայեն զբնական բաղադրութիս մարմնոց, և յայնչափ ազգս ազգս իրաց փոփոխեն, և ջանան լուծանել յառաջին սկզբունս կամ 'ի մասունս իւրեանց, և տակաւին ցարդ ոչ կարացին քայքայել և լուծանել զնո 'ի չորս տարերս, յորոց զառաջինն բաղկացան։ Իսկ զիարդ քոյդ այլայլութի յետ մահուն անընդմիջապէս զայդ առնէր։ Աւանիկ ցուցաք 'ի վերոյ, թէ զիարդ 'ի ներհական յայլայլել ապականութէ ծնանի նոյնհետայն այլ գոլ․ և յապականելն նո այլ ինչ գոլ․ և ի այսմ լինին ծնունդ և ապականութի, առնելութի և կրելութի համօրէն ենթակայութեանց գոյացութեցս, իբր 'ի թէատրոնի կերպարանափոխութիք 'ի փոփոխական աշխարհի։

Այլ քանզի միօրինակ աղխտանաս և զփոփոխութիւն զինչութի և զորպիսութի, զորօրինակ զապականութեն և զայլայլութեն, և տարադէպ զիմանամբրտիս հակառակամարտին՝ գէթ ի բանիցն, և անգիտութեա և մոլար կար-

ծեօք զՀակառակամարտին կամիս բառնալ զմոլորութի, և զանյարիր վկայութիս Հարց քոյոց կարծես բերել բանից 'ի Հաստատութիւն. վն Համառօտիմ քննեսցուք և զայս:

Քանզի յերեսն 56. յառարկելն Հակառակամարտին. „Եթէ այդպէս է, ապա փոփոխելի էր Ք.ն. եր-
„բեմն տկարանայր մարմինն՝ թոյլ տալով նմա բանին,
„և երբեմն զօրանայր՝ ընկալեալ 'ի բանէն": Պնի ի տաս.
„Դարձեալ թիւրաՀաւատք առ 'ի թիւրել յանդգնեալ
„զՀաւատս ուղիղս: Զինչ ասես և զմտանիլն վն մեր
„զՔ.նի. եթէ ա͞ծ քեզ է, կամ մնաց՝ և փոփոխեցաւ.
„և կամ թէ ոչ փոփոխեցաւ, և մնաց ոչ: Ապա եթէ
„և մնաց, և ոչ փոփոխեցաւ, ա͞ծ նմին և ընկալաւ
„զկիրսն, և ոչ այլայլեցաւ 'ի կրիցն": Իսկ ապա զկնի
յերեսն 57. ասես. „Աստի յայտ է՝ թէ Հաւատապէս
„բնականացն թոյլ տուեալ՝ զանցն իւրոն իրողութիս
„առ իւրն անապականապէս աղդել մարմին և Հոգի ինքն-
„իշխանական կամօք՝ յորժամ և կամեցաւն. ոչ անոմանն
„և ձեռյն եւեթ, այլ առաւել իրացն՝ որոց և անունն՝
„յիւրաքանչիւրոն զիւրոն Համբերեալ. և այսր աղագաւ
„զմերն ասի ընդունել զկիրս: Այլ և լաւ մեզ, եթէ ոչ
„յոյժ գայթակղեսցիս բանիւս զապականութեն ընդ միտ
„ածելով տեսակս. քանզի ես զբնականացն ասեմ բուռն
„Հարկանել զՔ.ն. դու զանբնականսն 'ի ներքս մղես,
„այս է զապականութի և զայլայլութի:"

Արդ՝ աստ աղաչեմ, թէ զինչ է փոփոխութին ընդՀանրապէս, զոր զանտս տալ բնական և կամաւոր կրիցն Ք.նի, քաղցուն, ծարաւոյն, եւ. նա թէ և մաՀու նր խոյ: Ապաքէն քաջայայտ է Հօմօրէն, ոչ ասեմ իմաստասիրաց, այլ և Համրակաց նոցն, թէ փոփոխութին և եզրն փոփոխութե է առաւել ընդՀանուր և սեռական եզր քան զայլ ա͞մ այլայլութիս և պէսպիսութիս, որ ձգի յա͞մ իրական այլեայլութիս և 'ի յարանոմանութիս, որ իցէ 'ի ներքին և յիրական ինչ կերպէ, ոչ միայն 'ի գոյացական փոփոխութիս, որ լինի յայլեայլութէ գոյացական ներքին կերպից՝ զորմէ և վերագոյնդ գրեցաք, այլ և յա͞մ այլեայլութէ պատաՀական իրական ներքին կերպից, ոչ միայն որակականաց՝ որոց փո-

փոխութիւն կոչի մասնաւորապէս եւ այլայլութիւն, այլեւ գրեթէ համօրէն այլոց ստորոգութեանց, զորօրինակ առնչութեանց, առից, կրից, տեղւոյ, կալոյ, ունելոյ, եւն։ Քանզի որ ստանայ զիրական ինչ առնչութիւն, զորօրինակ Հօր, Որդւոյ, եւն. որ առնէ ինչ իրապէս, որ կրէ ինչ, որ շարժի 'ի տեղւոջէ 'ի տեղի, որ յայլեայլ դիրս լինի 'ի մարմնի, զորօրինակ կացեալ յոտին, կամ ընկողմնել, եւն. եւ որ հանդերձաւորի, եւն. սա իսկապէս փոփոխի ըստ առնչութեան, ըստ առից, ըստ կրից, ըստ տեղւոյ, ըստ կալոյ, ըստ ունելոյ, եւն. որպէս եւ յայտ է ամենեցուն։ Նա թէ՛ եւ ըստ արտաքին իսկ յարանուանութեան, յորս ոչինչ իրական կերպ գնի 'ի փոփոխելին, տակաւին յարանուանի արտաքուստ փոփոխել, զորօրինակ լինելն Պետրոսի յաջմէ կամ յահեկէ Պօղոսի՝ առանց ինչ իւրոյ իրական տեղափոխութեան, այլ 'ի տեղական փոփոխութենէն Պօղոսի, որ լինի յաջմէ կամ յահեկէ Պետրոսի։ Կարծեմ, թէ գէթ զայսոսիկ դու եւ պարտ էիր գիտել, զի ըստ վկայութեան Յովհաննու կաթուղիկոսի պատմագրի, հմուտ էիր „վարժից սեռից՝ եւ որք ըստ գոյ-„ացութիւնք են սեռական տեսակարարութիւնք՝ մինչեւ ցան-„հատ վայր“, կամ որ նոյն է՝ հինգ ձայնիցն Պորփիւրի։

Ապա զիա՞րդ ասես, մեռանիլ Բանի ըստ մեզ, եւ ոչ փոփոխիլ. կրել զբնական կիրս ըստ մեզ, եւ ոչ այլայլիլ։ Արդ՝ զիա՞րդ հնար է, ասա աղաչեմ, քաղցնուլ Բանի յոգանելն անդ զհաստատուն կերակուրն, եւ ծարաւելն նորա՝ 'ի ծախել խոնաւութեան մարմնոյ, եւ վաստակելն նորա՝ 'ի կարի ձգտել մկանանցն եւ ջղաց յուղեփնացութեան անդ, միանգամայն եւ մարմնոյն ընդունել զայլ կիրսն՝ որք հետեւեցան բնութեան ըստ յառաջ բերեալ վկայութեանդ սրբոյն Նարսղի՝ թէպէտ եւ զայն ամենայն կամաւորապէս կրեաց, եւ ոչ փոփոխիլ իսկապէս այնոքիւք. զի կամաւորապէս կրելն զայնոսիկ ոչ ինչ արգելու զնորա իսկական եւ զճշմարիտ փոփոխութիւն ՝ զկիրս, զոր օրինակ եթէ ոք կամովին ելեալ փոփոխէր զտեղին՝ իսկապէս փոխէր զտեղին, եւ լինէր յայլում տեղւոջ. ըստ այսմ իմա եւ զայլս։

Այլ զի՞նչ եւ ու այն ասասցուք, զոր զինի յաւելուս. „Աստի յայտ է՝ ասես, թէ հաստատապէս բնա-„կանացն թոյլ տուեալ՝ զանցնիւրսն իրողութիւն առ իւրն

„անապականապէս աղդել մարմին և հոգի՝ ինքնիշխա-
„նական կամօք՝ յորժամ և կամեցաւն". և Թէ „Այս
„զընականացն ասեմ բուռն հարկանել զՔՆ՝ դու զան-
„ընականան 'ի ներքս մղես, այս է՝ զապականութի և
„զայլայլութի": Որով դէթ ա՛ բանիցդ Անապականա-
դաւան զքեզ յայտնի ցուցանես, կրել ՔՆի կամաւո-
րապէս զմարդկային բնական կիրս անապականաբար:
Ապաքէն 'ի վերոյ լիով և ա՛ կարի համառօտիւ խօսեցաք
և բացատրեցաք զապականութիւն՝ յորմէ ունիս հասու
լինել ճշմարտութենն, վսյ աստէն ոչ կամիմք երկրորդել
միւսանգամ:

Գիտեմ այո՛ և չեմ ինչ անտեղեակ տարադէպ
կարծեաց փիլիսոփայից ումանց, եԹէ Նախնի Հիւլէակա-
նաց, և եԹէ արդի Սանականաց, որք ոչ դնեն՝ ոչ
զգոյացական փոփոխութի 'ի բնական էակս, և ոչ զխա-
կական այլայլութի, և զորակութի, ևն: Այլ չեն մեր
բանք աստանօր խօսիլ զայնցանէ. մի՝ զի զայնս արդէն
ընդունի Օձնեցին, ընդդէմ որում ևեթ գիտեմք տրա-
մաբանել. և երկրորդ՝ զի արդեացս այնպիսի կարծեաց
և հեղինակաց նոցին անուանք անգամ անծանօթ էին 'ի
ժամանակս Օձնեցւոյն. իսկ զնախնի Հիւլէականացն կար-
ծիս ռամիկ և հեթանոս ողջամիտ փիլիսոփայք հերքէին
կանխաւ և կշտամբէին: Այս և մեք ոչ ինչ մերձեցաք 'ի
գրութենս յայսմիկ յայնպիսի տարադէպ կարծիս, որք ոչ
վերաբերին առ առաջադրութի մեր:

Այլ արդ՝ կամովին կամիմք կասիլ աստէն հետա-
մուտ լինելոյ քննութե այլոց անալի զրուցացդ, խրա-
տեալ յԱրիստոտելէ, եԹէ այնչափ ճշմարտութի կամ
գիտութի խնդրել պարտ է յիրաց, որչափ ինչ տանի
բնութի իրին: Աստի և ոչինչ զարմանամք, Թէ անգի-
տութի գրես զայսոսիկ, որովհետև չիք քո բնաւ ուսեալ
զայսպիսեաց իմաստս: Բայց այժմ ևեթ մեղադիր լի-
նիմք, զի համարձակիս իմաստասիրել առանց իմաստու-
թեան, և վարդապետել առանց գիտութե վարդապե-
տութե: Այլ այս ախտ յիրաւի իմաստակաց է սեփա-
կան, որք զիմաստնոց բանս զդէպս և զանդէպս 'ի բերան
առեալ՝ ճառատեն, անգէտ գոլով իմաստից նց, 'ի ցու-
ցանել զանձինս իմաստունս: Որպէս այն իմաստակ, որ առա-

ջի բազմութեն, յոր գտանէր և իմաստուն վարդապետ ումն, զոր նա ոչ գիտէր, 'ի ցուցանել զանձն իմաստուն՝ զբանս Արիստոտէլի յառաջ բերեալ՝ ասէ. „ Սրբա- „միտ, զո՞ւարճախօս, ե՛ն, Արիստոտէլ ասէ, թէ՝ ոչ „կարես իմանալ զջուրն, եթէ ոչ լինիցիս ջուր“: Նա քանզի վարդապետն գիտէր զանգիտութի նորա, եհարց զնա, և ասէ, թէ՝ արդարև ճշմարիտ է, այլ խորիմաստ այդ գիտութի, զոր ոչ կարեմ իմանալ, թէ զիա՞րդ մարթ է այդմ լինել. քանզի իմանամք մեք ապաքէն զաղբեւս, այս ուրեմն պարտիմք լինել աղբեւք: Զայն լուեալ իմաստակին, և ոչ կարացեալ տալ պատասխանի՝ զոր ոչն գիտէր, ասէ, գիտացի. և առ հպարտութեն գէթ ոչ կամեցաւ խնդրել 'ի նմանէ զմեկնութիւնն: Նա 'ի կրկնելն վարդապետին երկիցս և երիցս այլուր առաջի բազմութեն, թէ հա՞ն զմեզ յաղբեւացանտի, 'ի բարկութեի բրդեցաւ, և հայհոյեալ՝ մեկնեցաւ 'ի միջոյ: Այսպէս երևի և քեզ վարել զբանս և զբառս իմաստից 'ի դէպս և յանդէպս, անգէտ գոլով իմացուածոյ նց, յորմէ և հետևին անբաւ ատութիք և անտեղութիք:

Արդ՝ քանզի իմաստուն մեկնիչն Օձնեցւոյն 'ի սկզբան անդ յառաջաբանութեն իւրոյ նախ՝ իբր զըստ ին- քեան ծանուցեալ սկզբունս և զապացոյց եդ, զոր և մեքն յիշատակեցաք 'ի քննութեն յառաջաբանութեն նր, թէ այս գրութի Օձնեցւոյն է ուղղափառ վարդապե- տութեի. և բանք նր համաձայն Ը ուղղափառ վարդապե- տութեն տռ մայրի սրբյն Լևոնի, և սահմանի Քաղկեդոնի սբ ժողովոյն, և երկրորդ՝ զվկայութիս սբց հարց մերոց՝ Ներսեսի շնորհալւոյն, և այլոց՝ անշուշտ և անտարակոյս վերաբերէ առ այս գրութի Օձնեցւոյ իմաստասիրին նո- րեանց, նմին իրի կարծեմք, եթէ տեսիլ զայս մեր գրու անաչառ քննութեն բանից նր, հարկաւ զայնս գէթ իբրև զառարկութիս և զընդդիմութիս պարտի ընդդէմ դնել մեզ: Իսկ մեք թէպէտ և իրաւամբ համարիմք, թէ ար- դէն 'ի ցայսվայր գրութեցս և 'ի քննութեց ինքնին ցրե- ցան երկոքին եւ նորուն նախադատութիք. բայց կարևոր համարեցաք աստէն 'ի վերջոյ համառօտիւ եւ բացայայտ յիշատակել, և ցրել: Այ՝

Առ առաջինն ասեմք: Նախ՝ թէ կարի իմն վրիպիս,

համարեալ, թէ ամ բանք, և գրութիւնք, և նախադասութիւնք հերետիկոսաց, և որոց 'ի կարգին, ըստ ամի են՝ կամ պարտին լինել հերետիկոսական և մոլար, զորէն առասպելեացն հեթանոսաց, որք գլխովին և ըստ ամի են սուտ և առասպելական. զի հերետիկոսունք 'ի բանս և 'ի վարդապետութեան իւրեանց ոչ ըստ ամի և ամ մասանց հաւատոյ հակառակին, և զընդդէմն ուսուցանեն. ապա թէ ոչ՝ լինէին հեթանոս, և ոչ հերետիկոս. այլ իւրաքանչիւր ըստ աղանդոյ և ըստ հերետիկոսութեան իւրեանց ինչ ինչ մասանց հաւատոյ և սրբ. գրոց հակառակէին, կամ ուրանային, և զհերետիկոսական վարդապետութիւն ընդդէմ սրբ. գրոց և հաւատոց, և ուղղափառ վարդապետութեան կաթուղիկէ և առաքելական սրբ. եկեղեցւոյ աւանդէին. որով և 'ի միութենէ սրբ. եկեղեցւոյ հերձանէին, ոչինչ ներհակեալ՝ եթէ զայլ մասունս հաւատոյ ընդունէին, և ըստ նոցին միայն՝ ընդ ողջամիտ վարդապետութեան հաւատոյ և ընդ բացատրութի սրբ. եկեղեցւոյ միաբանէին. զորօրինակ է տեսանել եթէ 'ի նախնի, և եթէ յարդի հերեսիովտապետաց բանս և 'ի գրութիւնս, զորս աւելորդ համարիմք յառաջ բերել: Նա թէ 'ի Ղուրանն իսկ Հագարացւոց քանի՞ նախադասութիւնք գտանին համաձայն հին և նոր կտակարանաց, զոր ամենեքին եւս գիտեն: Արդ՝ յայսպիսեաց համաձայնութենէ միթէ մարթ է հետեւեցուցանել, եթէ և նոցայն մոլար վարդապետութիւնք իցեն համաձայն և ողջամիտ վարդապետութեան: Ո՞չ գիտես արդեօք, թէ և 'ի բանս ուղղափառ վարդապետաց, ուր գտանին մոլորական ինչ վարդապետութիւնք և կարծիք, մի՝ կամ երկու, կամ բազում՝ և կամ սակաւ, զայնպիսի նախադասութիւնս եւեթ դատապարտէ սրբ. եկեղեցին ըստ մասանց հեղինակաց նոցին, թողեալ զայլսն յիւրեանց խելութեան: Ապա վայրապար ձեռնարկես յայնց բանից իմաստասիրել, յորս չիք ինչ մոլորութիւն, և են համաձայն ընդ ողջամիտ վարդապետութեան ուղղափառ հաւատոյ, և սրբ. հարց. զորօրինակ 'ի ցուցանել զճշմարտութիւն մարմնոյ և մարդկութեան Քնի, և ածութեն նր, որք են իսկապէս և իրական բնութիւնք, ընդդէմ Երեւութականաց կամ Մառաչօքադաւանից. և որոց 'ի սոցին սակի, զորմէ ոչ նա, և ոչ ազգն Հայոց մոլորե-

ցան երբեք, ուր 'ի վերոյ 'ի սկզբան անդ յիշատակեցաք: Եւ կարծեմք, եթէ վն այսորիկ ջանաս կուտակել, եթէ 'ի դէպս և եթէ յանդէպս, 'ի ծանօթութիս քո զվկայութիս Հարց, և յաստի և անտի գրութեց, եթէ այս ոք Հայր եւ այսպէս գրէ, այս ինչ վարդապետութի այս ինչ սրբ՝ մերձաւոր է սորա, կամ Համաձայն, կամ նման էն. և կամ թէ յայս ինչ ճառս, և կամ 'ի գիրս եւ գտանի, և որք 'ի սոցին սակի. որք ինչ ոչ օգնեն այլոց մոլար կարծեացն իր, զորոց գրեցաք 'ի վերոյ: Ընդ այն եւ յաւէտ զարմանամք, զի և զբանս վարդապետի նր Թէոդորոսի բզմ՛ ուրեք բերես 'ի վկայութիս. զի՞նչ Հեղինակութի ունի արդեօք վարդապետդ իմաստասէր անուանելդդ, և կմ՛ զի՞նչ նա ինքն իմաստասէրդ. ապաքէն ըստ վարդապետին՝ և աշակերտն, և ըստ աշակերտին՝ և վարդապետ իւր:

Երկրորդ՝ արդարև յեղնգանէ առիւծ գուշակես՝ ըստ առակին, յոր և նման Համարելով զբանս տումարին սրբյն Լևոնի, և միաբան ընդ բանից իմաստասիրիդ, զոր ընդարձակ յառաջ բերես յերեսն 3. ծանօթ. 5 և յերեսն 10. ծանօթութի 1. զորոյ զանուննն ոչ միայն ոչ յիշատակէ բնաւ 'ի գրութեն ասա, այլ և զներհակն նորին ուսուցանէ, ուր ցուցաք 'ի վերոյ, մանաւանդ թէ և Նզովիւք իսկ դատապարտէ զնա՝ և զՔաղկեդոնին սրբ ժողովն 'ի չարաժողովի իւրում, ուր և Հարազատ Հերետիկոս Հետևողք նր, յորոց մի և գլխաւոր Հետևող և ջատագով նր է Յովհաննէս կաթուղիկոս պատմիչն 'ի պատմութեն իւրում: Ասացաք, յեղնգանէ առիւծ գուշակես, զի այնչափ Հեռի է վարդապետութի տումարի սրբյն Լևոնի, և սաՀման Քաղկեդոնի սրբ ժողովոյն՝ որք շուրջ զերկու բնութիւքն Քսի՝ ածային և մարդկային 'ի մի անձն Բանին Այ անքակ և անշփոթ միաւորելովք, 'ի գրութէ և 'ի վարդապետութէ Օձնեցւոյ իմաստասիրիդ, որպէս երկինք յերկրէ. զորօրինակ 'ի վերոյ քննեցաք և տեսաք:

Ստրջանայք արդեօք 'ի յառաջաբանութեն յերեսն Դ. եթէ այս գրութի իմաստասիրիդ ոչ են 'ի ձեռս ձեր յառաջքան զտպագրութի տումարի սրբյն Լևոնի, և սաՀմանի որ ժողովոյն Քաղկեդոնի. ասէք. ,, Ընչ զի

„եթէ երկեամ մի յառաջ 'ի ձեռս անկեալ էր մեր այս ճառ, „բազում ինչ ունէաք ընօրինակել և դնել 'ի կարգի վկայ- „ութեանց՝ որք եգան 'ի հաստատութիւն Նախանշանակին տումարի „և սահմանի. բայց քանզի յետ տպագրութեան Նորին եղև մեզ „'ի ձեռս բերել զայս ճառ, ոչինչ կարացաք առնել այլ „յաւելուլ. այլ՝ ուրոյն եմ զսա տպագրել հարկ համարե- „ցաք, բերելով անտի այսր ինչ ինչ համառօտ 'ի ծանօ- „թութեան կարգի։" Այսպէս 'ի բերելոյդ անտի այսր՝ քաջ գուշակի և ընդօրինակելդ աստի անդր, եթէ 'ի նոյն աւերէ լինէին զանգեալ. որպէս և յայտնի է, եթէ վարդապետութիւն սորա, և եթէ վարդապետութիւն տումարի նորին Կեռնի։ Նա՛ ոչ դու ասես անդ, „Նա որ մեծն „է՝ թող բաղդատեսցեն զսոյն ընդ սկզբնագրոյս տու- „մարի նորին Կեռնի և սահմանի նր ժողովոյն Բաղկե- „դոնի .... և տեսցեն՝ թէ զիարդ միաձայնի ընդ նոսին „վարդապետութիւս այս իմաստասիրին։" Այո՛ բաղդատեցին, և բաղդատեն այլք։ Այլ այս է խնդիր, զի չեն վիճակեալ նք քումդ սեփական սրատեսութեան, որք ոչ տեսանեն զորս ոչն են, վասն և չունին պէտս քումդ մեկնաբանութեան, կորօրինակ Հրէայք քաղդէական մեկնաբանութեան նր գրոց՝ ոչ իմաստութեան, և որոց ը նմա։ Նմին իրի մի ինչ ստրջանայք վն անագան անկանելոյն գրութեան Օձնեցւոյդ 'ի ձեռս ձեր։ Բայց ես ասեմ, երանի՛ թէ այս գրութիւն Օձնեցւոյն ոչ երկեամ մի, այլ զամս քսան և եօթն յառաջ անկեալ էր 'ի ձեռս ձեր, և կարծեմք, եթէ ոչ Վ. Հ. Միքայէլ վարդապետն Չամչեան ձեռնամուխ լինէր վայրապար 'ի սուտ գրութիւն և 'ի ջատագովութիւն իմաս- տասիրին իւրոյ, և ոչ դու 'ի մեկնաբանութիւն նր. միայն եթէ հասու քննութեան խելամուտ եւեթ լինէիք բանից նր. զի այս գրութիւն, ոչ երևի, գլխովին նանրացուցանէ զգրութիւն և զպատմութիւն Վ. Հ. Միքայէլին Չամչեան 'ի վն իմաստասիրին իւրոյ Օձնեցւոյ, և զնո մեկնութիւն. զոր դուք ը հակառակս համարիք „Վերջին [illegible] „[illegible] Նորին Հ. Միքայէլի 'ի „կարգի պատմութեան Հայոց", առանց իմանալոյ զքաջայայտ բանս նր. և քաջայայտ ապացուցանէ զհամառօտ գրութիւն մեր կանխաւ ընդդէմ Նորին. ով յայտ լիցի որոց միան- գամ փոքր մի գիտակ իցեն փիլիսոփայական և ճշմար-

նական իմաստից, և կամիցին անաչառ քննութեամբ հաստատ լինել ճշմարտութեան:

Իսկ առ երկրորդն, թէ անտարակոյս վերաբերի վկայութի սրբց հարցն մերոց Ներսեսի Շնորհալւոյն և այլոց, առ այս գրութիւն Յովհաննու Օձնեցւոյ, ասեմք: Արդարև կանխաւ 'ի համառօտ գրութեան մերում ընդդէմ պատմութեան և գրութեան Մ. ∸. Միքայելին Չամչեանց զՅովհաննէ Օձնեցւոյ ցուցաք, եթէ չէ նա Յովհաննէս իմաստասէր հայրապետն՝ վկայեալն 'ի սրբց հարց անտի մերոց, ուստի տես անդ. զի ոչ կամիմք կրկնել աստէն վայրապար: Իսկ թէ և ոչ այս գրութիւն է նորուն Յովհաննու իմաստասէր հայրապետին վկայելոյ 'ի նոցանէ, աւանիկ լիով ցուցանեն պատճառք և ցուցմունք երկոցուն ևս գրութեանց կամ եզրակացութեանց մերոց, զորս ցայս վայր գրեցաք: Նա այն՝ զի սրբն Ներսէս Շնորհալին, և որք ընդ նմա ևս ասեն զճշմարիտ Յովհաննէս իմաստասէր հայրապետէն, թէ „Այն սա ճծայրին „նախանձու վառեալ՝ յարձակէր ընդդէմ Ափաւնակացն, „և զամ ժամանակս գոգցես եպիսկոպոսութեան իւրոյ ոչ „դադարեցաւ գրով և բանիւ հարկանել զնո": Արդ նա զամ ժամանակս եպիսկոպոսութեան իւրոյ զայս հազիւ երկթերթեան տետրակս գրեաց, որով հարկանէ ոչ զԱփառնակս, իբր զի սոյն իսկ գրուի է վարդապետութիւն Ափառնակաց, այլ զԵրևութականս, որպ և յայտ է 'ի վերոգրելոցս: Նա ասէ զԹէոփիանէ, „Եթէ կամք են „ձեզ, ընթերցջիք զոյն ինչ 'ի նմանէ, զի ծանիցես „զայրն՝ որպ զարիւծ յեղնգանց:" Արդարև այս գրութիւն բովանդակն է զոյն ինչ, զոր 'ի միում ժամու ևեթ զբովանդակն իսկ ընթեռնուին. և ոչ որպ զարիւծ յեղնգանց դուշակէին, այլ զարիւծն զլխովին յանդիմանէ տեսանէին: Զայս տետրակ ասեմք իբրև զգիրս և զմատեանս՝ աղաչէ Թէոփիանէ զՇնորհալին՝ տալ օրինակել, և պարգևել նմ, առ 'ի թարգմանել 'ի յունական բարբառ, առ ունելոյ զայն և յաշխարհին Հռոմոց՝ առ 'ի պատիւ այդր հայրապետի, որպ եթէ պէտս ունիցին այսմ տետրակի, զորօրինակ ունին համօրէն գրոց և մատենից իմաստասիրաց և վարդապետաց եկեղեցւոյ. զոր մեք յիրաւի ամօթ համարեաք, եթէ թարգմանել էր այս գրութիւն

հաւատարմութիւն յայլազգի բարբառ, ոչ ասեմք յանուն Հայրապետի կամ կաթուղիկոսի Հայոց, այլ սոսկ յանուն վարդապետի ուրուք Հայոց իբր իմաստասիրի. զի եթէ իմաստասէր վարդապետ Հայոց՝ ասէին՝ է այսպիսի, զի՞նչ ապա ժողովուրդք նոցին: Թո՛ղ զայն, զի գրուն տետրակիս ինքնին ցուցանէ զորպիսութիւն իւր. զի՞նչ պիտոյն առ այն վկայութիւնք այլոց. զի ըստ առակին, երեւելի գեղջն չեն ինչ պէտք նշանաբանութեան կամ առաջնորդի:

Այլ քանզի կարի իմն ապաստանեն ոս 'ի [illegible] 'ի [illegible] ըստ քեզ՝ [illegible], որ 'ի վախճան տետրակիս գրի. ասեմք, թէ սուտ է, և չէ այն յիշատակարան և ստորագրութիւն Գրիգորի վկայասիրի:

Եւ ցուցանի նախ: Գիրքն ճշմարիտ Յովհաննու Հայրապետի իմաստասիրի ստորագրեալ էր ոչ միայն 'ի Գրիգորէ վկայասիրէ, այլև յայլոց Հայրապետաց, որպ վկայէ Գրիգոր տղայ անուանեալն, թէ գրոցն Յովհաննու իմաստասիրին „ձեռնագրեցին անխախտելի մնալ գիրս, „Գրիգոր վկայասէր, և Ներսեհ հետեւօղ նորին, և „միւս Գրիգորիս, և Ներսէս մեր հայր. և է յարկեղս „գրոց մերոց ընկալեալ 'ի նոցանէ:" Իսկ արդ՝ չիք այդր այլ ստորագրութիւն, բայց 'ի Գրիգորիսէ ումեքէ. ապա սուտ է, թէ իցէ այս գրութիւն գիրք նորին Յովհաննու իմաստասիրի:

Երկրորդ՝ բանք ստորագրութեան, որով Գրիգոր վկայասէրն ստորագրեաց այնմ գրոց Յովհաննու իմաստասիրին, ըստ վկայելոյ սրբոյն Ներսիսի շնորհալւոյն, է ամենեւին տարբեր և անհամաձայն բանից ստորագրութեան այսր տետրակի. ջզի ասէ սրբն Ներսէս շնորհալին, թէ ստորագրեաց Գրիգոր վկայասէրն այնմ այսպէս. „Այն-„պէս հաւատամ և ես՝ որպ որ կաթողիկոսն Յովհաննէս „գրեաց աստանօր, և զորս այսպէս ոչ հաւատան, նզո-„վեմ." իսկ ստորագրութիւն տետրակիս՝ ըստ գրելոյ Գորգայ գրչին՝ է այսպէս. „Այս է գիրք կոչեալ ուղղափա-„ռութեան հօր մերոյ սրբոյն Յովհաննու կաթողիկոսի Հայոց „և իմաստասիրի օծնեցւոյ: Եւ ես Գրիգորիս նուաստ՝ „նորին հաւատոց որդի և աշակերտ՝ ձայնակից եմ այսմ „խոստովանութեան և աւանդման. և որք այլապէս դաւա-

„Նեն քան զայսոսիկ, և Նորաձևս առնեն....“ և տողու կէս քերեալն՝ ը̄ քեզ, և ը̄ բացատրութեն Գործոյ դրչի. պարտի լինել այսպէս. „Նաև որք այլապէս դաւա-„նեն քան զայսոսիկ, և Նորաձևս առնեն... Նզովեալ „լիցին:“ Յորմէ քաջայայտ տեսանի, թէ ստորագրութի այդր տետրակի ոչ է Գրիգորի վկայասիրի՝ նոյն ընդ այնմ ստորագրութեն, զորմէ ասէ Տրն Ներսէս Շնորհալի:

Երրորդ՝ որ ըստ առակին՝ գլուանակն յախոռին զռացուցանէ, և յայտ յանդիման 'ի լուր ամենեցուն զստութի սորին ստորագրութեն ցուցանէ չլինել Գրի-գորի վկայասիրի. են. է գրեալ Նր, թէ „Այս է գիրք „կտակի ուղղափառութեն Հօր մերոյ սրբյն Յովհաննու „կաթողիկոսի Հայոց և իմաստասիրի օձնեցւոյ:“ Քանզի եթէ այդ էր հարազատ վկայութի եթէ Գրիգորի վկայա-սիրի, և եթէ այլոց սրբց Հարցն ստորագրելոց՝ գրոցն Յովհաննու հայրապետի իմաստասիրի, ապաքէն խղեալ էր կնքին, և բարձեալ խնդիրն. զոր և ընդունայն աշխատութի հեղինակի պատմութեն Մ. Հ. Միքայելին չամչեան, և քոյդ փայլապայր ջանք, 'ի ցուցանել՝ թէ Օձնեցին է այն իմաստասէր Յովհան հայրապետն. փոխ միջոյիշատակեալ հարքն՝ Գրիգոր վկայասէրն, և որք ը̄ նմա, արդէն յանուանէ յիշատակեալ էին, թէ է Յովհաննէս իմաստասէր հայրապետն օձնեցին. ուստի և 'ի խօսիլն ընդ Թէորիանեայ և կամ ընդ ում և իցէ, կամ 'ի գրելն զնմանէ, հարկաւ յիշատակէին և զյա-տուկ և զհամբաւեալ մականունն նր՝ զՕձնեցին: Արդ՝ թէ քանի սուտ է այս ա̃մ, ինքնին իսկ յայտ է. զի ուր առացաք՝ ը̄ առակին, յաւանակն յախոռին զռայ:

Եւ չորրորդ՝ սբն Ներսէս լամբրոնացին յատենա-բանութեն իւրում 'ի ժողովն Տարսոնի, որ 'ի վը̄ խնդրոց Յունաց, գլխաւորաբար 'ի վը̄ երկուց բնութեանցն Քսի, թէ ընդէ՞ր Հայք ոչ ասեն երկուս բնութիս Քսի 'ի մի անձն Բանին անքակ միաւորեալս, ը̄ սահմանի Քաղկե-դոնի սբ ժողովյն, այլ զմի բնութի ասեն Քսի, և յետ ընդ երկար և ընդարձակ ատենաբանելոյ, և ցու-ցանելոյ զճշմարտութի երկուց բնութեանցն Քսի 'ի մի անձն Բանին անքակ և անշփոթ միաւորելոց, և զճշմար-տութի սահմանաց սբ ժողովյն Քաղկեդոնի, և զյա-

ւանութիւն Յունաց, առարկէ և ասէ իբր 'ի դիմաց ժողովոյն, „Ո՞չ ընդէ՞ր ասեն, ոչ ոք զայս մինչև ցայսօր „յայտնեաց, այլ մանաւանդ և զնորին հակառակն“: Պատասխանէ. „Ո՞չ է այս քննելի. մանաւանդ թէ և „բազումք ասացին 'ի մերոցս՝ առաջնոց սրբոցն եղեալ „հետևողք: Այլ այն բարք մարդկան հակառակասէր է. „զայնս որ ճշմարտութեան էր ջատագով և խաղաղութեան՝ „անգոսնեցին. և զառ թշնամութի մարզիչ բանսն՝ սի„րեցին և գրեցին: Ապա թէ ոչ՝ ո՞ւր դիցուք զբանս „Յովհաննու իմաստասիրին և հայրապետին, որ զայս „առ մեզ՝ վկայութի հարցն սրբոց ստուգէ: Օձնեցի հայ„րապետին, և զհրաշ ժողովոյն զհաւանութիւն: ԶՍա„հակայ հայրապետին զհամաձայնութիւն առ մեծ եկեղե„ցին Հռոմայ, և զնորին հետևողաց խաղաղարարացն և „վարդապետաց. յորոց մի էր և իմն ածաշնորհ՝ և յո„գունց գերագունից՝ հրեշտակն 'ի մարմնի Գրիգոր Նարե„կացի: Ուր և զորոյ աչօք տեսէք, և բանիցն աշակերտ „էք, և հիմանն արկելոյ շինիչք, զնոյն հօրն մերոյ Ներ„սեսի զայսմ հետևողութի“:

Ահաւասիկ 'ի բանից աստի սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյն ակներև տեսանի, թէ գիրք Յովհաննու ճշմարիտ իմաստասէր հայրապետի էր ընդդէմ Միաբնակաց, զի ընդդէմ այնոցիկ՝ որք զմի անձն և զմի բնութի դնէին Քնի յետ միաւորութեան՝ ըստ Յակոբիկ անուանեալ Ասորի հերձուածողացն. և համաձայն և 'ի նպաստ երկուց բնութեցն Քնի 'ի մի անձն Բանին անքակ միաւորելոց՝ ըստ սահմանի սրբ ժողովոյն Քաղկեդոնի և դաւանութեն Յունաց: Այն զի որ ասացաք, գլխաւոր խնդիր Յունաց 'ի Հայոց՝ էր 'ի վն այսորիկ, և ոչ 'ի վն նր, թէ ընդէր Հայք ոչ ընդունին զճշմարիտ մարմինն Քնի և զմարդկային բնութի առեալ 'ի սրբ կուսէն, և նովիմբ չարչարեալ, խաչեալ, և կրեալ զմարդկային կիրս կամաւորապէս՝ առանց մեղաց: Երկրորդ՝ յառարկելն սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյն 'ի դիմաց Միաբնակացն Հայոց. „Ո՞չ „ընդէ՞ր ասեն. ոչ ոք զայս մինչև ցայսօր յայտնեաց, այլ „մանաւանդ և զնորին հակառակն“. պինի տայ նախ, թէ „Ո՞չ է այս քննելի“, և երկրորդ՝ թէ „մանաւանդ „և բազումք ասացին 'ի մերոցս՝ առաջնոց սրբոցն եղեալ

„Հետևողք“: Արդ՝ յինչ խնդիր վերաբերի առարկութիւն հակառակորդացն, և յինչ համաձայն պնդի սրբոյ Լամբրոնացւոյն: Ո՞ք արդեօք 'ի Հարց Հայոց, եթէ յուղղափառաց, և եթէ 'ի չարափառաց ուրացաւ երբեք ըզ ճշմարտութիւն և զկատարելութիւն մարմնոյն Քնի և մարդկութեան նր, և ոչ համարձակ քարոզեցին զայն, ոք 'ի վերոյ ասացաք. նա թէ՝ 'ի սկզբանէ անտի սրբոյն Գրիգորի մինչև ցայժմ համարձակ խոստովանին 'ի դաւանութեան հաւատոյ, թէ Որդին միածին Հօր „իջեալ 'ի յերկնից՝ „մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մա- „րիամայ սրբոյ կուսէն Հոգւոյն սրբով. որով էառ զմար- „մին, զհոգի. զմիտ, և զամ որ ինչ է 'ի մարդ՝ ճշմար- „տապէս՝ և ոչ կարծեօք, չարչարեալ, խաչեալ“, և որ զկնի: Իսկ ո՞ արդեօք 'ի Հարց Հայոց զներհակն սորին քարոզեաց, ոք ասէ առարկութիւն: Աստի և պնդի սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյն գլխովին անդէպ և վայրապար լինէր, եթէ բաց 'ի առարկուացն յայս խնդիր վերաբերելին, զորոյ զբացարձակ ստութիւն նոյնհետայն յանդիման հարկանէր նց: Այլ զինչ պնդէ: Նախ՝ վերածէ զայն՝ ոք ասացաք՝ յանքննին դատաստանն Այ: Իսկ երկրորդ՝ պնդէ, թէ „և բազումք ասացին 'ի մերոցս՝ „առաջնոց սրբոցն եղեալ հետևողք:... Ապա թէ ոչ՝ „ո՞ւր գիցուք զբանս Յովհաննու իմաստասիրին և Հայ- „րապետին, որ զայս առ մեզ՝ վկայութիւն Հարցն սրբոց „ստուգէ. ԶՆերսէսի Հայրապետին, և զվերոյ ժողովոյն ըղ- „հաւանութիւն: ԶՍահակայ Հայրապետին զհամաձայ- „նութիւն առ մեծ եկեղեցին Հռոմոց, և զնորին հե- „տևողաց Թագաւորացն և վարդապետաց“: Իսկ սոքա ամենեքին, զորս յիշատակէ Լամբրոնացին, մասնաւորապէս և յատկապէս ընդդէմ զինեցան [illegible] հերձուածողացն, և գրեցին, և քարոզեցին զուղղափառ վարդապետութիւն Քաղկեդոնին սրբ ժողովոյն, և դաւանութիւն Յունաց, և գուն գործեցին միաբանել զազգս մեր, և համաձայնել ընդ մեծի ուղղափառ եկեղեցւոյն Յունաց, ոք և յայտնի ցուցանեն բանք նր, և գործք և գրութիւնք նախայիշատակելոցդ. և ոչ 'ի վր ճշմարտութեան մարմնոյն Քնի, և մարդկութեան նր: Այլ զինչ. „բարբ „մարդկան՝ ասէ, հակառակասէր է. զայն որ ճշմար-

,,տութիւն էր ջատագով և խաղաղութեան՝ անգոսնեցին. „և զառ թշնամութիւն մարդիկ բանսն՝ սիրեցին և գրե- ,,ցին“: Այս սորա ըստ. ապաքէն յայտնի են անուանք հակատակասիրաց, և չարաժողովոց նց, զորս յիշատակէ և Նա ինքն սմին Ներսէս լամբրոնացի յառաջաբանութեան ճառում, յորոց մի և գլխաւորն էր Յովհան օձնեցին, որ նզովեաց 'ի չարաժողովին ճառում զսէր ժողովն Քաղկեդոնին. և զսր Լևոն պապն, և զերկուս բնութիւս Քնի ուրացաւ, համարելով՝ եթէ զերկուս բնութիւս Քնի ասելով յետ միաւորութեան պարտ էր դնել և զերկուս անձինս՝ ըստ Նեստորի, զի բնութիւն առանց անձին ոչ կարէ լինել. և փոփոխութիւն ծիսից ինչ եւ՝ խայտաջանսգաւ բաժանել զեկեղեցին Հայոց 'ի համաձայնութէ և 'ի միաբանութէ ուղղափառ եկեղեցւոյն Յունաց, ուր յայտ է որոց փոքր մի խելամուտ են սոցին:

Այս յիրաւի կամիմին կուրանայ, որ ոչ տեսանէ ակներև յասացելոց. և 'ի վկայութեանց աստի, եթէ այս գրութիւն, կամ տետրակ ոչ է Յովհաննու ճշմարիտ իմաստասէր և ուղղափառ Հայրապետի, այլ խաբեայ Յովհաննու Օձնեցւոյն միաբնակ հերձուածողի, որ հաստատէ 'ի նմա զմի բնութիւն Քնի, և խօսի միայն ընդդէմ Երևութականաց, որք ուրանային զճշմարիտ մարմինն Քնի, և զմարդկային բնութիւն առեալ 'ի կուսէն, են:

Այս հարկաւ հետևի, թէ սուտ է այն ստորագրութիւն, որ 'ի վերջն տետրակիս գրի, և չէ այն վկայութիւն Գրիգորի վկայասէրի, ոչ մեծի, և ոչ փոքու. զոր և դու խոստովանիս յերեսն 69. ծանօթութիւն 3. չգիտել, թէ որոյ իցէ՝ մեծին, եթէ փոքուն. և ուր ցուցաք, ոչ մեծին է, և ոչ փոքուն, և ոչ ուրուք 'ի հարց անտի վերոգրեալ վկայից. այլ ոգէտ վարդապետի, կամ հայրապետի ուրուք Գրիգորիս անուն, որոյ լուեալ, թէ գրոցն Յովհաննու հայրապետի իմաստասիրի ստորագրեալ են վերոգրեալ հայրապետքն, և անկեալ 'ի ձեռս իւր այս տետրակ Յովհաննու օձնեցւոյ՝ համարեալ է տգիտութեամբ լինել նոյն Յովհաննու իմաստասիրի, և կամ զուցէ չարութեամբ՝ առ հակառակ զտանելոյ նորին գրոց, և համաձայն այսր գրութեան Օձնեց-

նոյն։ Այլ գտանել զայս ուրուք բանասիրի՝ քերեալ է անտի զանվայելն և զտարաժամ բանադրանս նր։

Այլ առ այն՝ զոր գրես ՚ի յառաջաբանութեն յե-րեսն ը. թէ Գրիգոր կաթուղիկոսն տղայ անուանեալ գրէ ՚ի թուղթն ի. առ Գրիգոր տուտէորդին, և յառաջ բերէ յանուն Յովհաննու իմաստասիրի զհատ-ուած ինչ ընդարձակ այսր տետրակի, սկսեալ ՚ի բա-նից անտի, „փախչիս ՚ի բնութենդ անուանէ, ընդ նմին „և յերկուցդ ասելոյ“. եւն. մինչև ցայն տեղի, „Երկուց „գոյացութեանցն կատարելոց միաւորուն, եւն.“ երես 18. մինչև ց 21։ Ասեմք, թէ այն երկրորդ թուղթ Գրի-գոր տղային առ Տուտէորդին՝ կամ է գլխովին սուտ և խորթ, և կամ խանգարեալ և յաւելեալ այն բան ՚ի նմա, որ ոչ սակաւ անգամ հանդիպէր առ նախնեօք. քանզի նա ինքն տղայ Գրիգոր կաթուղիկոսն՝ որ կըշ-տամբէր զՄարինակ հերձուածող Տուտէորդին, յառաջ բերէր զբանս ՚ի դրոց ճշմարիտ Յովհաննու իմաստասի-րին՝ որ ընդդէմ Մարինակաց, զոր ընթերցեալ էր, և գիտէր իբրև զախոյեան ընդդէմ նց՝ ՚ի ջատագովութի և ՚ի պաշտպանութի սահմանաց Քաղկեդոնին սր̃ ժողո-վոյն, վկայութիք հարց, և ձեռնարկութիք, որոյ անունն իսկ զնա կշտամբէր. իսկ այդ հատուած բանի տետրակի Օձնեցւոյն, որ և այլքն, ուսուցանէ զնոյն վարդապե-տութի Մարինակ հերձուածողաց, այս է՝ զմի բնութի Քսի յերկուց բնութեանցն յածայնոյն և ՚ի մարդկայնոյն միաւորեալ, ընդդէմ սահմանաց Քաղկեդոնին սր̃ ժո-ղովոյն, և ընդդէմ նորին իսկ Յովհաննու ճշմարիտ իմաստասէր հայրապետի, և միանգամայն դիմամարտ ընդդէմ Երևութականաց, որք զմի միայն բնութի աստուա-ծայինն դնէին ՚ի Քն, և զմարդկայինն առ երևոյթ ասէին լինել ՚ի նմա, զոր օրինակ ցուցաք ՚ի վերոյ։ Արդ սուտ է գլխովին, թէ այդ հատուած կամ բան իցէ հարազատ գրութի Գրիգորի տղայ անուանեալ կա-թուղիկոսի, որ ինքնին յայտ է։

Եթէ ասիցես. Տուտէորդին գուցէ անկեալ էր միանգամայն և ՚ի հերետիկոսութի Երևութականաց։ Գիտեմ, առ ինչ ասա յանուն Յովհաննու իմաստա-սիրի կշտամբէ զնա, և զայդ բան Օձնեցւոյն յառաջ բերէ,

որ հակառակ է նորին բանից իմաստասիրին, զոր քաջ գիտէր։ Եւ զի՞նչ պէտք էին զմիոյ հայրապետի Հայոց ևեթ զբան յառաջ բերել ընդդէմ նր. որովհետև համօրէն հարք, եթէ Յունաց, և եթէ Հայոց, գրեցին սա հասարակ ընդդէմ նոցին աղանդաւոր Եւտիքականաց, յորոց առեալ և Օձնեցին՝ գրէ ինչ ինչ 'ի տետրակին, որ 'ի վերոյ յիշատակեցաք. 'ի բանից նոցա լիով հերքէր զաղանդ Տուտէորդւոյն. նա թէ՝ 'ի հասարակաց դաւանութե եկեղեցւոյն Հայոց, և յեկեղեցական պաշտամանց ժամերգութե նր դէմ յանդիման խայտառակէր զնա. զի զորօրինակ 'ի վերոյ ասացաք բազում անգամ, ազգն Հայոց, և եկեղեցի նր, ոչ երբէք ընկալաւ զաղանդն Եւտիքականաց, այլ միշտ ընդդէմ եկաց նմա՝ բանիւք, և գրովք։

Այս աղաչեմ, մի հաւանիցի ընթերցողն զբանս՝ եթէ ուղղափառ և եթէ չարափառ մատենագրաց, այլ հասուն քննութբ խելամուտ լինել մտաց նր, առ կարօղ լինելոյ իմանալ և որոշել զճշմարիտն և զսուտն, զմոլարն և զուղիղն, զհարազատն և զխոթն՝ կամ զխանգարեալն. զի մի այլ ընդ այլոյ իմանալով ըստ քմաց և ըստ մարմանջելոյ խոհեաց յայլ և այլ վարդապետութիւնս դեգերեսջիք։

Եւ արդ՝ 'ի վախճան դրոյն քննութե բանիս՝ կամիմք փակել զգրութիս ըստ վախճանական խրատու ձերոյ, որ յիրաւի ընդհանրապէս է ճշմարիտ, թէ 'ի խոյզս ճշմարտութե, և քննութեան իմաստից գրոց՝ քերել պարտ է միշտ զպաշարումն 'ի մտաց, և զամբաստութի 'ի կամաց, առ կարօղ լինելոյ անաչառ քննութեամբ հասու լինել ճշմարտութե իրաց։ Այլ քանզի ոչ ոք է ուղիղ դատաւոր յիրում դատի 'ի մասնաւորի, վս զայս մեր գրութի և քննութի տետրակիս Օձնեցւոյն, որ և զառաջինն, դնեմք առաջի ոչ միայն անխախտ դատաստանի Հռովմէական սբ Եկեղեցւոյ, այլ և դատողութե ահասարակ ամենեցուն, ոչ առեալ միայն քաջ իմաստասիրաց և ածաբանից, այլ և որոց միանգամ փոքր մի խելամուտ իցեն այսպիսեաց, 'ի դատել և յորոշել թէ որոց միտք արդեօք պաշտպանեալ իցեն, և կամք ըմբռստացեալ, և յամառեալ յանդէպ կարծիս. քանզի

կարծեմք, թէ որոց մտաց ողջամիտ իցեն, ոչ կարեն հակառակ կալ ապացուցական ստուգութեանց և ճշմարտութեանց, ոչ արդեօք առ երևոյթ և կարծեցեալ ապացուցութեանց, որք դժարի՝ քան զստուգութիւն ճշմարտութեան ծնանին, այլ խոկական և իրական ապացուցութեանց, որք ծնանին զգիտութիւն։

Իսկ եթէ եգերք ինչ 'ի գրութեան աստ՝ հարկեալ 'ի վիճաբանական ոճոյ՝ սպրդեալ իցեն՝ փոքր մի զանցեալ ըստ չափ անտեսութեան, զայն իբր ոչ ասացեալ և ոչ գրեալ համարեսջիք. քանզի ոչ գիտէաք, և ոչ իսկ կամիմք՝ դիմամարտ լինել անձանց, այլ թիւր և սխալական կարծեաց նոցին։

## Յորդորակ։

Նա արդ՝ առ քաջ ծանուցանելոյ զմիտս մեր և զդիտաւորութիւն այս գրութեան ձեռնամուխ լինելոյ, զի մի այլ ընդ այլոյ 'ի կարծիս ոք անկցի, ծանիք ստուգիւ, զի 'ի խղճէ մտաց եթէ շարժեալ՝ յեղափոխական ազդարարութեան սակս զայս գրեցաք։ Այլ աղաչեմք, Եղբարք սիրելիք, և Հայք պատուականք, մի յայդպիսի յանպէտ յումպէտ խնդիրս դեգերեսջիք, և յանօգուտ և 'ի սնոտի կարծիս բանակռիւ լինիջիք * 'ի [illegible] Բ. Տիմոթ. Բ. 14. համարեալ իբր 'ի ջատագովութիւն ազգի։ Արդարեւ քաջայայտ է ամենեցուն, թէ 'ի քանի վիճս դիպի, և 'ի քանի վնասակար վարդապետութիւնս մղէ անխտիր կողմնակալութիւն և ջատագովութիւն՝ եթէ կարծեաց, եթէ ազգի, եթէ քաղաքի, եթէ անձին, և եթէ որոյ և իցէ. զի անտի անձնասիրութիւն և ամբարտաւանութիւն մարդկան զգրգռեալ՝ առ յաղթական լինելոյ, թերին առնէ ատոփ և անտի զդէպս և զանդէպ փաստս 'ի ձեռն արկանել, և յայնս իսր յանջուշտ սկզբունս հաստատի։ Արդարեւ եկեղեցին թոյլ միայն տայ իմաստասիրաց խօսիլ զկոպեռնիկեան դրից աշխարհի, այս է՝ զշրջելոյ հողագնտոյս զարեգակամբ, եւն. իբր զենթադրութիւն, այլ ոչ երբեք համարիլ և խօսիլ իբրև զդրութիւն։ Ահանիկ զարդիս ջատագովք նորին անհիմն և

սուտ կարծեաց՝ պատսպարեն զայն իբրև զՀաւատոյ և զապացուցական գրութիւ: Նմին իրի և իմաստութե̃ առաց քաջ իմաստասէր ումն, թէ և ոչ իբրև ենթադրուի արժանէր թողուլ տալ խօսելոյ զայնմանէ՝ վս̃ վերոյիշատակեալ բարուց մարդկան: Այս և երջանիկ յիշատակի Անփիթար աբբայՀայրն մեր՝ Հիմնիչ Միաբանութեանս՝ արգելու մանաւոր կանոնաւ 'ի սկզբան անդ կրօնաւորաց իւրոց ոչ երբեք լինել կողմնակալ և ջատագով ազգի ուրուք, կամ քաղաքի, կամ անձին, ևն. քաջ գիտացեալ, եթէ քանի չարիք ծնանին անտի: Զայս վկայէ և ամենիմաստ ծայրագոյն քաՀանայապետն Բենեդիկտոս չորեքտասաներորդ. որ 'ի գովելն զվարդապետութի իմաստուն մատենագրի ուրուք՝ ասէ Հածիլ ի այն՝ ոչ միայն որչափ էին գովլի 'ի նմ, և ընդ եղանակին՝ որով գրէր, այլև որչափ տեսանէ զայն օտար 'ի Հոգւոյ կողմնակալութեան, որ է կուրծանման աչաց: Եւ զայս միաբանութի Հաստատեաց բարեյիշատակ Հայրն մեր, որպէս լաւ գիտէք, ոչ 'ի յարուցանել զփաստաբանս և զջատագովս ազգիս Հայոց, կամ անձանց, ևն. այլ զճշմարիտ վարդապետս և զքարոզիչս ճշմարտութեն և ուղղափառ Հաւատոց Հռովմէական և առաքելական կաթուղիկէ սբ̃ եկեղեցւոյ՝ 'ի լուսաւորել և 'ի Հաւաքել զվարատեալ և զՀեռացեալ Հօտս ազգիս Հայոց 'ի փարախ ճշմարիտ Հօտին Քրիի 'ի ներքոյ քաջ և անմոլար Հովուապետին փոխանորդի Քրիի, և յաջորդի առաքելապետին Պետրոսի՝ ծայրագոյն քաՀանայապետին Հռովմայ՝ 'ի փրկութի Հոգւոց: Ապաքէն զպաշտօն ճշմարիտ վարդապետաց եկեղեցւոյ, զօրօրինակ և ճշմարիտ մարգարէիցն, գեղեցիկ ցուցանէ սբն Ներսէս Լամբրոնացի, և դնէ զխտիրն՝ որ ընդ մէջ ճշմարիտ և սուտ վարդապետացն, զօրօրինակ և ը մէջ ճշմարիտ և սուտ մարգարէիցն Իսրայէլի: Քանզի ճշմարիտ մարգարէքն՝ ասէ, 'ի խօսելն ընդ ժողովրդեան իւրեանց՝ միշտ կշտամբէին, և յանդիմանն Հարկանէին զյանցանս նց, և զխստապարանոցութի, և զորս 'ի կարգին. և 'ի խօսելն ընդ օտար ազգիս՝ պաշտպանէին զուղիղ կրօնս. և զամբպաշտութի նց: Իսկ սուտ մարգարէքն գրեթէ զՀակառակն քարոզէին: Այնպէս և ճշմարիտ վարդապետաց եկեղեցւոյ՝ պարտ է միշտ զյանցանս և զմոլորութիւն ժո-

ղօղորդեան, կամ ազգի իւրեանց. ընդ որս խօսին՝ կամ առ որս գրեն, անաչառ յանդիման հարկանել, և հայրական սիրով և գթով խրատել, և յորդորել՝ ընդ օրինակի քաջ հովուին. և զվարատեալ ոչխարս բառնալ 'ի յուսս, և ածել 'ի գաւիթ եկեղեցւոյ. զորոյ զհակառակն գործեն սուտ վարդապետք, 'ի պատսպարել զհեատութիւնս, և առաւել եւս վարատել, և ցրուել, և մատնել 'ի բերանս գայլոց, և կորուսանել: Զայս մի համարեսջիք առացեալ զձէնջ, որ քաւ և մի լիցի. այլ 'ի զգուշութիւն, և 'ի ծանօթութիւն եւեթ ճշմարտին և սուտ վարդապետաց: Այլ եթէ այսմ ճշմարտին և հարազատ սիրոյ, և եղբայրական աղաչարարութեն մերոյ, թէպէտ և գիտեմք՝ եթէ չունիք պէտս մերում նուաստ աղաչեցութեն, արժանի համարեսջիք լսել՝ առ 'ի զգուշութիւն ապագայից՝ բարւոք առնէք. իսկ եթէ ոչ՝ կամք ձեր եղիցին, և զմեզ անպարտս արասջիք, և միշտ իբրև ըզ ճշմարտին եղբայր 'ի Ք՜ս և զհարազատ բարեկամ համարեսջիք. և ողջ լերուք 'ի Տր:

Публичная библиотека
7/II-1922